



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ 22 Հ Տ Ո ՐԱԿԱՆԻ ԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՎԵԱՆԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՃԵԱՐՅԱԳՐՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

Աստրայիա, Աֆրիկա, Ասիա և Ամերիկա:

Կ Ա Զ Մ Ե Ց
Լ Ե Ւ Ո Ն Բ Ա Բ Ա Յ Ե Ա Ն



Տ Փ Խ Ի Ս

Տպարան Տ. Մ. Թուտինեանցի

1907

1(075)
2-12

435.



20532

5 OCT 2011
C9 FEB 2013

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Ի Ւ Ն Գ. Գ Ա Լ Ա Տ Կ Ա Ն Ի

91(075)

Բ-12

ԱԾ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏՈՎՈՐՈՒԹԵԱՆ



435.

Բ- Գ Ա Լ Ա Բ Ա Կ Ա Ծ Մ Ա Ծ

0	1
0	2
0	3
0	4
0	5
0	6
0	7
0	8
0	9

Աստղալիա, Աֆրիկա, Ասիա և Ամերիկա:

Կ Ա Զ Մ Ե Ց

Հ Ե Խ Ո Ւ Բ Ա Բ Ա Ց Ե Ա Ն

Տ Փ Խ Ա Ա
Տագարան Տ. Մ. Ռուսինեանցի
1907

Թ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ս

Հայկական դպրոցների համար նոր դասագրքերի կարքը սաստիկ զայլի է: Այդ դպրոցներում աւանդում՝ են աշաք առարկաներ, որոնց մեծ մասը չունի նպաստակայարմար դասագրքեր: Մասնաւորապէս ընդհանուր աշխարհագրութեան դասագրքի կարիքը աւելի եւս զգալի է: Մի քանի տարի է արդէն, որ ընդհանուր աշխարհագրութեան (մանաւանդ նրա քաղաքական մասի) ուսուցիչները այդ առարկան նդած հայկական դպրոցներում մեծ մասամբ թելադրելով էին անցնում, որովհետեւ դպրոցական հրապարակի գույք չկար ոչ մի դասագիրք: Ներկայ աշխատութիւնը մենք գույք չկար ոչ մի դասագիրք:

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Ա Կ Ս Տ Ր Ա Լ Ի Ա.

ԸՒԾՏՐԵԼԻԾԻ ԴԻՔՔՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ:

Վւտրալիան՝ հինգ մայր ցամաքներից ամենափոքրը, միակ մայր ցամաքն է, որ իր բոլոր մասերով գտնուում է հարաւային կիսագնդում՝ հաստրակածի մօտ: Նրա տարածութիւնը արևմտքից դէպի արևելք 4000 վերստ է, իսկ հիւսիսից դէպի հարաւ 8000 վերստ: Վւտրալիա մայր ցամաքի ամենա—հիւսիսային ծայրը Եօրք հրուանդանն է, որ գտնուում է հարաւային լայնութեան 11° -ի տակ, իսկ ամենա—հարաւայինը, Վիլսոն, 39° հարաւային լայնութեան տակ: Նա Սսիայի և Եւրոպայի նման աւելի երկար, քան լայն մայր ցամաք է: Վւտրալիայի ամենաարենտեան ծայրը Ստիալ հրուանդանն է, որ գտնուում է 133° արևելքան երկարութեան տակ, իսկ ամենաարենելեան ծայրը Բայրոն հրուանդանը, որ ընկնում 173° արևելքան երկարութեան տակ: Վւտրալիայի ամբողջ տարածութիւնը 9 միլիոն քառ. քիլոմետր նրա մօտ $\frac{3}{5}$ մասը ընկած է տաք—բարեխառն զօտիում, իսկ $\frac{2}{5}$ -կան մասը տաք գոտիում: Իւր կլիմայի տարութեամբ նա աւելի նման է Աֆրիկային:

ԸՒԾՏՐԵԼԻԾԻ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Վւտրալիան իր ափերի գծագրութեամբ նման է հարաւային միւս մայր ցամաքներին՝ Աֆրիկային և հարաւային

Ամերիկային։ Աւստրալիան շրջապատւած է չնդկական և Մեծ կամ խաղաղ ովկիանոսներով, որոնք ոռոգում, կտրատում են նրա ափերը և կազմում են երկու մեծ ծոցեր՝ Կարպենտարիայի ծոցը հիւսիսում և Աւստրալիականը՝ հարաւում։

Աւստրալիան չունի իր ներսը շատ խոր մտնող ծոցեր, որոնք նրա կլիման կարող էին մասսամբ բարեխառն և ծովալին դարձնել, դրա համար էլ Աւստրալիայի կլիման ընդհանրապէս ցամաքային է։

Աւստրալիային են պատկանում և բազմաթիւ մեծ ու փոքր կղղիներ, որոնք գտնւում են Մեծ ովկիանոսի միջին մասերում և բոլորովին տարրերում են Աւստրալիական մայր ցամաքից թէ իրանց բնութեամբ և թէ ազգաքնակութեամբ։ Եյդ բոլոր կղղիները ընդհանուր անունով կոչւում են Ովկիանիս։ Ովկիանիայի կղղիները բաժանում են երկու գլխաւոր տեսակների՝ ներքին և արտաքին կղղիներ։ Ներքին կոչւում են այն կղղիները, որոնք գտնւում են մայր ցամաքից շատ մօտ, իոկ արտաքին նրանք, որոնք Աւստրալիայից շատ հեռու են ընկած։ Ներքին կղղիներից նշանաւոր են հետեւաները. Նոր Գվինէա, Նոր Գոմերանիա կամ Նոր Բրիտանիա, Նոր Մերլենքուրգ կամ Նոր Իռլանդիա, Սողոմոնեան, Նոր Հերթական, Նոր Կալենդրիա, Նոր Զելանդիա և այն կղղիները։ Արտաքին կղղիներից նշանաւոր են. Կարուինեան, Մարիանեան, Փիչի, Սամոա, Տօնգա կամ Բարեկամութեան, Թայիթի կամ Հնկերութեան, Սանդվիչեան և այն կղղիները։

ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ ԳԻՒՑՔԻ:

Եւրոպացիները Աւստրալիան Ամերիկայից ուշ գտան։ Փորթուգալացի յայտնի ծովագնաց Մագելլանը առաջինն էր, որ 1521 թուին, իր շուրջերկրեայ ճանապարհորդութեան գտաւ Աւստրալիային պատկանող Մարիամանակ գտաւ։

Նեան և նոր Գվինէա կղղիները։ Սակայն Աւստրալիա մայր ցամաքը յայտնագործվեց միայն 17-րդ դարու սկզբում և այն էլ հոլանդացիների չնորհիւ, որոնք այն ժամանակ մի քանի գաղութներ ունեին Մալայեան արշիպելագին պատկանող կղղիների վրայ։ Հինց դրա համար էլ Աւստրալիան առաջներում կոչւում էր «Նոր-Հոլանդիա» և մինչև այսօր էլ այդ մայր ցամաքի մի քանի մասեր, Հոլանդական անուններ ունենից 18-րդ դարու վերջում անգլիացի նշանաւոր ծովագնաց Կուկը առաջին անգամ յայտնագործեց Սանդվիչեան, Ընկերութեան և Թայիթի կղղիները։ Այդ միենոյն դարում անդիացիները իրանց գաղութները հիմնեցին սկզբում Աւստրալիայի հարաւարեկեան մասում, իսկ 19-րդ դարու ընթացքում նրանք բանեցին գրեթէ ամբողջ Աւստրալիան։

ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ ՄԱԿԵՐԵԼՈՅՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ։

Աւստրալիան Աֆրիկայի նման ներկայացնում է մի մեծ սարահարթ, որը քանի մօտենում է մայր ցամաքի ծայրերին, այնքան էլ հետզհետէ բարձրանում է։ Աւստրալիայի սարահարթի կենդրոնական մասը ամենացածրն է։

Այդ սարահարթի ամենացածր մասի վրայ է գտնւում էյրէ լիճը, իոկ ամենաբարձր մասերում, այն է Աւստրալիայի արևմտեան և արևելեան ծայրերում ամենաբարձր լեռները, որոնցից ամենաշանաւորն է Աւստրալիական Ալպերը՝ Թօունսէնտ գագաթով, որ միայն ձմեռն է ձիւնով ծածկւած լինում։ Աւստրալիայի երկրորդ նշանաւոր լեռնաշղթան Կապոյտ լեռներն է։ Այդ երկու լեռնաշղթաներն էլ հարուստ են սուկու և պղնձէ հանքերով։

Աւստրալիայի ծայրերում գտնւուղ լեռնաշղթաները նրա կղիման ցամաքային են դարձնում, որովհետև դրանք չեն թողնում ովկիանոսների խոնաւութիւնը մայր ցամաքի ներսը մտնելու։

ՈՌՈԴՈՒՄՆ

Ուսոգման կողմից Աւտրալիան՝ շատ աղքատ է, որովհետև նա չունի մեծ և ջրառատ գետեր։

Եղած գետերն էլ ամառը կամ բոլորովին ցամաքում են, կամ ներկայացնում են մի շաբթ լճեր՝ մեծ մասամբ ճահիճներ, որոնք միմեանց հետ չեն միացած։ Սակայն անձրևների ժամանակ Աւտրալիայի գետերը սաստիկ յորդանում են և շատ անդամ հեղեղներ առաջացնում։ Աւտրալիայի ամենամեծ և խկական գետը Մուլրուէյն է, Դարլինգ նշանաւոր փողով։ Այդ գետը նաւարկելի է և ամբողջ տարվայ ընթացքում գրեթէ չէ ցամաքում։

Լճերի կողմից էլ աղքատ է Աւտրալիան։ Նշանաւոր լճերը գտնուում են նրա հարաւային կողմում. դրանցից յայտնի են Թորռենսի, Հերզելի և Էլեն լճերը, որոնք եղաշտ ժամանակը ցամաքում և պիտի ճահիճներ են գառնում։

ԿԼԻՄԱՆ:

Աւտրալիայի կլիման բնդհանրապէս չոր և ցամաքային է, առաջին որովհետև նրա ծայրերում գտնուող լեռները չեն թողնում ովկիանոսների խօնաւութիւնը մայր ցամաքի ներսը մտնելու, երկրորդ որովհետև նրա ափերը շատ չեն կտրաւած։ Աւտրալիան գտնուում է հարաւային կրսադնկում։ Նրա ամենատաք ամիսները յունուար և փետրուար ամիսներն են, իսկ ամենացուրտը յունիսը և յուլիսը։ Աւտրալիայի հիւսիսային մասը գտնուու՞ է տաք կամ այրեցեալ գոտում, որտեղ ձմեռ երբէք չէ լինում, իսկ հարաւային մասը բարեխառն գոտում, որ ունի շատ մեղմ ձմեռ և տարուայ չորս եղանակները։ Առատ և յորդ անձրևներ են լինում միայն Աւտրալիայի արեելեան և հիւսիսային մասերում։ Հիւսիսային մասում

փշում են Մուսսօն կոչւած հոգմերը, ամառը փշում է հիւսիս արևմտեան Մուսսօնը, որ ովկիանոսից խոնաւութիւն է ներս բերում, իսկ ձմեռը՝ հարաւ-արեելեան մուսսօնը, որ փշում է ցամաքից և կլիման չորացնում է։

Որբան գնանք գեղի Աւտրալիայի խորքերը, այնքան էլ նրան կլիման չորանում է, որովհետև մայր ցամաքի ծայրերում գտնուող լեռները խանգարում են ովկիանոսների խոնաւութիւնը այնտեղ ներս թափանցելու։

ԱԽՏՐԱԼԻԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Իր շոր կլիմայի չորհիւ Աւտրալիան մեծ մասամբ անապատային է և հետեապէս շատ աղքատ բոյսերով։ Եւ որովհետև նրա մակերեսոյթի կազմութիւնը միատեսակ է, գրահամար Աւտրալիայի բուսականութիւնը կամ ֆլորան էլ միատեսակ է։ Աւտրալիայի հիւսիսային, արեելեան և հարաւային մասերը հարուստ են իրանց մշտական կանաչ ծառերի անտառներով և գալար մարգագետիններով։ Աւտրալիական անտառը աւելի շուտ կարելի է անուանել ծառաստան, քան թէ այն սոսուելախիտ անտառը որ, սովորաբար հասկացւում է. այդ անտառների ծառերը շատ հեռու են գտնուում միմեանցից, ունին ւանը և նիկտերներ, որոնք չեն կարող մեծ ստուեր ձգել։ Աւտրալիական անտառների ծառերից նշանաւոր են էվկալիպտ կոչուած ծառերը, որոնք երբեմն հասնում են մինչև 75 սաժէն բարձրութեան, ակացիաները հայլն. միայն Աւտրալիայի տաք մասի ծայրերը յայտնի են իրանց արմաւենիներով, մասուածապատրոյսերով և անտառներով, որոնք յիշեցնում են աշխարհիս միւս տաք երկների բուսականութիւնը։

Աւտրալիան շատ աղքատ է օգտակար և կուտուրական բայսերով։ Այդ տեսակի բոյսեր առաջին անգամ եւրոպացիները առաջանաւ են 1790 թվականին։

Ներն են մշակել Աւտրալիայում, տեսնելով որ այնտեղ օդտակար բոյսեր շատ քիչ կան: Այժմ Աւտրալիայում առատութեամբ աճում են զանազան հացարոսեր, բանջարեղիներ, հարաւային պտուղներ, խաղող և այլն: Այդ բոյսերը աճում են միայն Աւտրալիայի լաւ ոռոգուած տեղերում:

ԱՒՏՐԱԼԻԱՅԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ:

Աւտրալիայի կենդանական աշխարհը կամ ֆառնան էլ այնպէս աղքատ և բնորոշ է, ինչպէս բաւսական աշխարհը: Աւտրալիան իր կենդանիներով բոլորովին տարբերւում է միւս մայր ցամաքներից: Մինչև երոպացիների այնտեղ մըտնելը, Աւտրալիայում չկային սմբակաւոր, գիշատիշ (բացի գինու կոչւած չնից) կենդանիներ և կապիկներ:

Աւտրալիայի գրէթէ բոլոր վայրենի գաղանները պատկանում են պարկաւոր^{*)} կենդանիներին, օր. կենդուրու և այլն: Նա թէ հարուստ է թռչունների զանազան տեսակներով, բայց գրանց մէջ գրեթէ չկան երգեցիկ թռչուններ. Եղած թռչուններից յայտնի են մողկուկը, գանկուռը և աւտրալիական ջայլամը կամ էման:

Պուլտուրական բոյսերով աղքատ Աւտրալիան շունի նաև ընտանի կենդանիներ: Այսպիսի կենդանիներ (օր. ձկներ, երգեցիկ թռչուններ, աղաւնիներ և այլն) առաջին անգամ Երոպացիներն են մտցրել Աւտրալիա և այդպիսով բոլորովին կերպարանափոխել իրանց բնակավայրերի կենդանական աշխարհը:

^{*)} Պարկաւոր կոչում են այն կենդանիները, որոնք իրանց վորի պերակ ունին պարկեր ձագուկներին պահելու համար.

ԱՒՏՐԱԼԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Աւտրալիան ամենաքիչ -ազգաբնակութիւն ունեցող մայր ցամաքն է: Այդ ազգաբնակութեան ամբողջ թիւը՝ համեռում է 5. միլիոնի: Աւտար սլիայի ազգաբնակութեան մեծ մասը պատկանում է կովկասեան կամ միջերկրական ցեղին և այնտեղ է գաղթել Եւրոպայի զանազան երկրներից: Փոքրամասութիւն են կազմում Աւտրալիայի բնիկները, որոնց կաշու գոյնը նեղբերի նման ուն է, բայց վերջիններից տարբերում են իրանց սարսնի կազմուածքով: Աւտրալիայի բնիկները աշխարհիս ամենատգեղ մարդիկն են, որոնց թիւը հասնում է 60, 000-ի:

Նրանք միջին հասակից էլ ցածր են, ունին սև և զանգուր մազեր, որոնք ծածկում են ոչ միայն նրանց զլուխը, այլ և ամբողջ մարմինը: Աւտրալիայի բնիկների ձեռքերը և ոտքերը չափաղանց բարակ են, կուրծքը լայն, փորը գուրս ցցուած, գանգը նեղ ու երկար: Նրանց մտաւոր ընդունակութիւնը չափաղանց սահմանափակ է: Աւտրալիայի բնիկները երկրագնդի ամենալայտնի վայրենի ցեղերից մէկն են կազմում, որ միայն մտածում է ուտելու և քնելու մասին: Նրանք ման են գալիս կամ բոլորովին մերկ, կամ թէ չէ իրանց մարմինները ծածկում են կենցուրով: Նրանք իրանց գործածական զէնքերը պատրաստում են վայտից կամ քարից և իրրե կերակուր ուտում են մկներ, օձեր, գորտեր և երբեմն էլ մարդիկ: Նրանք դեռ ևս անձանօթ են մետաղի գործածութեան հետ: Աւտրալիայի բնիկները պաշտում են չար սպիների, որոնց համարում են մեռած մարդկանց հոգիները:

Բացի երոպացիներից և բնիկներից, Աւտրալիայում ապրում են նաև մօտ 50,000 չինացիներ, որոնք պարապում են իրրե բանուորներ հանգերում:

Աւստրալիայի երկողացիների ամենամեծ մասը անգիտացիներ են, որոնց թիւը հասնում է մօտ 3 միլիոնի։ Դրանք գլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ և հանրագործութեամբ։ Մնանապահութեան զարգացման շատ են նպաստում Աւստրալիայի գեղեցիկ և ընդարձակ մարդագետիները, իսկ հանքագործութեանը նրա ոսկու, արմաստի, պղնձի և քարածխի հանքերը։

Աւստրալիայում երկրագործութիւնը ամրան էլ զարգացած չէ, որովհետեւ նորա կիման և ոռոգումը այնքան էլ շեն նպաստում այդ բանին։ Բայց երկրագործութիւնից անփիացիները պարապում են նաև վաճառականութեամբ, ձկնորսութեամբ և որսորդութեամբ։ Առետրի նիւթերը կազմում են մետաքս, միս, կաշի, գինի, ցորեն, զմնագան մետաղներ ևայլն։

ԱԽՏՐԱԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Աւստրալիայում անգիտացիները ունին 6 գաղութներ։

ա) Վիկտորիա, որ թէի տարածութեամբ ամենափոքր գաղութն է, բայց ունի ամենախիտ ազգաբնակութիւնը։ Այդ գաղութը յայտնի է ոսկու հանքերով և ամենահրուստն է աւստրալիական բոլոր գաղութներից։ Վիկտորիայի գլխաւոր քաղաքն է Մելբուրն, (Աւստրալիայի ամենամեծ քաղաքը ըստ ազգաբնակութեան) որ ունի մօտ $1/2$ միլիոն բնակիչ։

բ) Նոր Հարաւային Վայիս։ Գլխաւոր քաղաքն է Սիդնէյ, որ ընդարձակ առ և տուր ունի։ Երկրորդ նշանաւոր քաղաքն է Բատուրստ։

գ) Կոլինսլէնդ-գլխաւոր քաղաքն է Բրիսբէն։

դ) Հարաւային Աւստրալիա, որ հարուստ է պղնձէ հանքերով և հացահատիներով։ Գլխաւոր քաղաքն է Աղելամինա։

ե) Արեւմտեան Աւստրալիա, որերթ գլխաւոր քաղաքով։ զ) Թասմանիա կամ Վանդի մենի երկեր, այստեղի ըբնակիները գլխաւորապէս պարապում են հողագործութեամբ։ Գլխաւոր քաղաքն է Գօբարդ, որ ունի համալսարան։

ԱԽՏՐԱԼԻԱԿԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿՂԶԻՆԵՐԸ

Աւստրալիա մայր ցամաքին պատկանում են բազմաթիւ մեծ և փոքր կղզիներ, որոնք մեծ մասամբ գտնւում են Մեծ կամ Խաղաղ ովկիանոսում։ Ելք կղզիները ըստ իրանց ընութեան բաժանում են երեք գլխաւոր խմբերի։ Կղզիների առաջին խումբը կոչւում է Մելանեզիա։ Դրան պատկանում են Աւստրալիայի հիւսիս-արևելեան գողմում գտնւող այն բոլոր ցամաքային կղզիները, որոնք մայր ցամաքից բաժանուած են Թոռերին նեղուցով և Կորալեան ծովով։ Մելանեզիայի կղզիներից նշանաւոր են. Նոր-Գվինէա, Բիսմարկի արշավելագ, Սոլամոնեան, Նոր-Ճերբիտեան, Նոր-Կալեդոնիա և Փիջի կըղպիները։ Դրանք մեծ մասամբ լեռնոտ կղզիներ են, ենթարկած են մուսոնի կոչւած հոսանքներին և ծածկւած են անտառներով։ Դրանց բուսականութիւնը և կենդանական աշխարհը շատ նման է մայր ցամաքի բուսականութեան և կենդանական աշխարհին։ Մելանեզիայի ազգաբնակութեան ամենամեծ մասը կտղմում են սև ցեղին պատկանող պապուաները, որոնց չնորհիւ և կղզիները կոչւում են Մելանեզիա, որ նշանակում է սև կղզիներ։ Պապուաները իրանց արտաքին տեսքով շատ նման են նեղերին, նրանց կաշւի գոյնը սև է, մազերը երկար է և սև, քիթը լայն, բերանը մեծ և հաստ շրթունքներով։ Շատ անգամ նրանց համար հաղստի տեղ են ծառայում արմաւինու տերմեները։

Բայց պապուաները շատ բաներում Աւստրալիայի բընիկներից անհամեմատ աւելի բարձր են կանգնած, որ նը-

րանք ունին իրանց մշտական բնակարանները, որոնք շատրանգամ շինւած են գետերի ափերի մօտ՝ ձողերի վրայ, ունին ընտանի կենդանիներ, կռատուններ և երբեմն հողի մշակութեամբ են պարապում:

Մելանեղիայի կղզիներից ամենանշանաւորն է Նորդվինչան, որ իր մեծութեամբ աշխարհիս երկրորդ կղզին է։ Դա մի լեռնոտ, լաւ ոռոգւած և բոյսերով ու կենդանիներով հարուստ կղզի է, որի արեմտեան մասը պատկանում է հողանդացիներին, իսկ արեելեան մասը անգղիացիներին և գերմանացիներին։ Անգղիացիներին պատկանում է կղզու արեելեան կէսի հարաւային մասը, իսկ գերմանացիներին հիւսիսայինը:

Մելանեղիա կոչւած խմբի երկրորդ նշանաւոր կղզին է Նորդ-Զելանդիա, որ բագկացած է երկու մեծ կղզիներից։ Այդ կղզիները միմեանցից բաժանւում են Կուկի նեղուցով։ Դրանց վրայ գտնւում են հանդած և գործող հրաբուղներ, հանքային տաք ջրեր և մշտական ձիւնով ծածկած լեռներ։ Տեղական բնիկները կոչւում են Մաօրի, որոնք պատկանում են մալայեան ցեղին, արտարին տեսքով գեղեցիկ են և պարապում են հողագործութեամբ ու անամնապահութեամբ։ Նոր-Զելանդեան պատկանում է անգղիացիներին։

Աւտրալիային պատկանող կղզիների երկրորդ խումբը ընդհանուր անունով կոչւում է Միկրոնեղիա, որի մէջ մտնում են Մելանեղիայից հիւսիս-արեելեան կողմում գտնւող միշտարք մանր կղզիները, օր. Մարիանեան, Կարոլինեան և ուրիշ խմբերը։ Դրանց մեծ մասը պատկանում է գերմանացիներին։

Աւտրալիայի մնացած կղզիները կամ երրորդ խումբը ընդհանուր անունով կոչւում է Պոլինեղիա։ Այդ խմբին պատկանող կղզիների մեծ մասը հրաբխային ծագում (օր. Սանդվիչեան կղզիների վրայ է գտնւում ամենանշանաւոր հրաբուղնե-

րից մէկը՝ Մառնա-Լօա) և մեզ ու առողջ կլիմա ունի։ Պոլինեղիայի կղզիների բնիկները կոչւում են աօլինեղիացիներկամ կանակներ և պատկանում են մալայեան ցեղին։ Նրանք պարապում են ձկնորսութեամբ և հողագործութեամբ և բաժանւում են մի քանի ցեղերի, որոնցից իւրաքանչիւրը ունի իր առաջնորդը կամ իշխանը։ Պոլինեղիայի բնիկները միշտ շփումն ունենալով Եւրոպացիների հետ, հետզհետէ ընդունում են նրանցից քրիստոնէութիւնը։

Պոլինեղիայի կղզիներից Սանդվիչեան խումբը ամենայայտնին է։ Դրա գլխաւոր քաղաքն է Հոնոլուլու, որ առետրական նշանաւոր կենցրոն է և յարաբերութիւն ունի Ամերիկայի, Ասիայի և Աւստրալիայի հետ։ Սանդվիչեան խումբը պատկանում է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներին։

Ֆիջի կոչւած խումբը պատկանում է անգղիացիներին, իսկ փառահեղ բնութիւն ունեցող Թայիթին—ֆրանսիացիներին։

Աֆրիկայի ամբողջ մակերեսովը հաւասար է 540,000 քառ. մետրնի, որի վրայ ապրում են մոտ 180 միլիոն բնակիչ:

Աֆրիկայի միայն $\frac{1}{5}$ -կան մասը բնկնում է տաք—բագելսառն զօտիում, իսկ $\frac{4}{5}$ մասը տաք զօտիում: Աֆրիկան ամենատաք մայր ցամաքն է:

Հիւսիս-արևմտեան կողմում Աֆրիկան բոլորովին մօտենում է Եւրոպային, որից նա բաժանուում է Ֆիբրալտարի նեղուցով. Հիւսիս-արեելեան կողմում նա միանում է Ասիայի հետ Սուէզի պարանոցով, որի միջով սրանից 25 տարի առաջ փորեցին Սուէզի ջրանցքը:

ԱֆրիկաՅԻ ԱՓԵՐԻ ԳՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ Շ/Խ 1922

ՀԱՅՈՒ Ա ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՅՈՒ

Աֆրիկայի ափերի գծաղբութիւնը շատ մասնակի է, որովհետեւ նրա ափերը ամենից քիչ են կտրատած շրջապատող ծովերով և ովկիանոսներով: Նրա ափերում չկան մայր ցամաքի ներսը խոր մտնող ծոցեր և բացի դրանից չկան նեղուցներով մայր ցամաքից բաժանող կղզիներ: Ծոցերից նըշանաւոր են արեմտեան կողմում Գվինէի ծոցը և հիւսիսում Գարէսը. իսկ թերակղզիներից յայտնի է միայն Սօմալի երկիրը՝ հիւսիս-արեելեան կողմում: Կղզիներից նշանաւոր է միայն Մարդակասպարը, որ մայր ցամաքից բաժանուում է Մօցամբիկի լայն և խոր ջրանցքով: Յարմար նուահանգիստների կողմից էլ ալբատ է Աֆրիկան:

ԱֆրիկաՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

Եւրոպական ազգերը շատ վաղ ժամանակներից ի վեր ծանօթ էին Աֆրիկային: Դեռ Քրիստոսի ծննդից առաջ յոյները ժիմնել էին մի շարք զաղութներ հիւսիսային Աֆրիկայում Միջերկրական ծովի ափերում: Մի ժամանակ ամբողջ հիւսի-

Ա Ֆ Ր Ի Կ Ա

ԱֆրիկաՅԻ ԴԻԲՐՔԸ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ:

Հին աշխարհի մայր ցամաքներից Աֆրիկան միակն է, որ բնինում է հասարակածի կամ էկվատօրի երկու կողմերում: Հասարակածը (որ մեր երկրագունդը բաժանում է երկու՝ հիւսիսային և հարաւային միմեանց հաւասար կիսագնդերի) անցնում է Աֆրիկա մայր ցամաքի գրեթէ մէջ տեղով և բաժանում է նրան հիւսիսային և հարաւային մասերի: Հիւսիսից դէպի հարաւ Աֆրիկան տարածւում է մօտ 8000 վերստ երկարութեամբ, իսկ արեմտքից դէպի արեելը, ամենալայն տեղում մօտ 7500 վերստ: Աֆրիկան երեք անգամ մեծ է Եւրոպայից:

Աֆրիկան ամեն կողմից շրջապատած է խոր ծովերով և ովկիանոսներով. արեմտեան կողմից նրան յրջապատում է Սալանտեան ովկիանոսը, հիւսիսային կողմից Միջերկրական ծովը, իսկ արեելեան կողմից Հնդկական ովկիանոսը և նրա մասերը կազմուն Ագենի ծոցը և Կարմիր ծովը:

Աֆրիկայի ծալրերը կազմում են հիւսիսային կողմում Սպիտակ հրուանդանը, որ գտնւում է 37⁰ հիւսիսային լայնութեան տակ, հարաւային կողմից Ասեղի հրուանդանը (35⁰ հարաւային լայնութեան), արեմտեան կողմից Աֆրիկայի ծալրը հասնում է մինչև զլիսաւոր միջօրէականը՝ Կանաչ հրուանդանը և արեելեան կողմից Գվարդաֆույ հրուանդանը (69⁰ արեելեան երկարութեան):

սային Աֆրիկան գտնւում էր հոօմայեցիների տիրապետութեան տակ: Մակայն հին դարու այդ երկու ազգերից և ոչ մէկը ներս չէր թափանցել Աֆրիկայի խռըքերը: 8-րդ դարում արաբացիները նուաճեցին նրա հիւսիսային մասը և առետրական յարաբերութիւն սկսեցին միջին Աֆրիկայի ցեղերի հետ: 15-րդ դարում, երբ ծովագնացութիւնը արդէն գարգացել էր, եւրոպացիները սկսեցին գաղութներ հիմնել Աֆրիկայի արևմտեան ափերում: Այդ միենոյն դարումն էր, որ փորթուկացի նշանաւոր ծովագնաց Վասկօ-դէ-Գաման պտաց Աֆրիկայի շուրջը և հասաւ Հնդկաստան: Աֆրիկայի հետ եւրոպացիները շատ լաւ ժանօթացան 19-րդ դարում և ուսումնասիրեցին թէ նրա զանազան երկիրներն և թէ նրանց բընակիչներին:

ԱֆրիկաՅի ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:

Աֆրիկայի մակերեսոյթի կազմութիւնն էլ այնպէս միատեսակ է, ինչպէս և նրա ափային գծագրութիւնը: Նա գրեթէ ամբողջապէս ներկայացնում է մի մեծ սարահարթ, թէ նրա վրայ մասամբ էլ ահազին փոսեր կան, որոնք ծովի մակերեսոյթից շատ ցածր են, սակայն դրանք մի շատ փոքրիկ տարածութիւն են կազմում: Աֆրիկայի սարահարթը լեռնաշղթաներով բաժանված է զանազան մասերի:

Աֆրիկայի սարահարթի ամենացածր մասը կոչում է Միջին-Սուդան, որ այդ ամբողջ սարահարթը բաժանում է է երկու մասի՝ Հարաւային աֆրիկական սարահարթ և Հիւսիսափրիկական սարահարթ կամ Մարա:

Հարաւային-աֆրիկան սարահարթը Սահարայից բարձր է, որի միջին բարձրութիւնը հասնում է $\frac{1}{4}$ վերտիւ: Այդ մասը աստիճանաբար ցածրանում է արեւելեան, հարաւային և արևմտեան ուղղութեամբ: Այդ մասի վրայ գտնւում են

և մի շաբք լեռնաշղթաներ, որոնցից նշանաւորներն են. Կապի լեռները հարաւային կողմում, Դրակոննեան, Կիլիմանջարօ, Կենիա և Ռուէնզօրի լեռները արևելեան կողմում, Կամերոն-արևմտեան կողմում և Հարեշստանի կամ Եթովպիայի լեռները հիւսիսային կողմում:

Հիւսիսային-աֆրիկական սարահարթը կազմում է Մահարա անապատը, որ աշխարհիս ամենամեծ անապատն է: Այդ սարահարթի արևելեան մասը կոչում է Եգիպտոս և նուրիա: Մահարայի ամենահիւսիսային մասը ցածրանում է: Այդ ամենացածր մասից սկսում են Բերքերի և Բարկա բարձրաւանդակները: Բերքերեան բարձրաւանդակի վրայ նշանաւոր են Ատլասի լեռները:

ԱֆրիկաՅի ՈՐՈՌՈՒՄՆ:

Ոռոգման կողմից Աֆրիկայի հիւսիսային և հարաւային մասերը երկու միմեանց հակապատկերներ են ներկայացնում: Հարաւային Աֆրիկայի տաք մասում փշում է հարաւ-արևելեան գասսատը, որ Հնդկական սվկիանոսից երկրի ներսը բաւական խոնաւութիւն է բերում, զրա համար էլ այդ մասում կան բաւականին մեծ գետեր և լճեր: Գետերից նշանաւոր են. Կոնգո (Ամազոնից յետոյ աշխարհիս երկրորդ ջրառատ գետը), Կոանցա, Զամբեզի, Լիմազուզո կամ Կոկորոդի լոսեան, Օրանժի և Նեղոս (աշխարհիս երկրորդ գետն իր երկարութեամբ,) գետերը: Լճերից յայտնի են. Վիկտորիա կամ Ռուերեվէ Ալբերտ կամ Մվուտան, Տանգանայիկա, Նիասսա և այլն լճերը:

Ուրիշ պատկեր է ներկայացնում Հիւսիսային Աֆրիկայի տաք մասը: Այստեղ փշում է հիւսիս-արևելեան պասսատը, որ գալիս է արևմտեան Ասիայի շոր անապատներից: Այդ քամին գրեթէ ամբողջ հիւսիսային Աֆրիկայում կլիման չըրացնում է. այնտեղ անձրեց հազարիւտ երեսոյթ է, երբեմն նոյն իսկ

պատահում է որ տարիներով անձրի չէ գալիս: Հինյ այդ է գլխաւոր պատճառը, որ հիւսիսային Աֆրիկայում մեծ գետեր չկան, եղածները անապատային գետեր են, որոնցից յայտնի է միայն Շարին, որ թափում է Զաղ լիճը: Բացառութիւն են կազմում Նիգեր, Սենեգալ և Դամբիա գետերը, որոնք իրանց սկիզբն են առնում Կօնգոյի լեռներից. այս երեք գետերի առաջ գալու գլխաւոր պատճառն էլ հարաւ-արևմտեան մուտանն է, որ փշում է Գվինէի ծոցից և այնտեղից բաւական խոնաւութիւն է ներս բերում:

Աֆրիկայի տաք մասի գետերը պարբերական անձրեների ժամանակ յորդանում և շատ անգամ դուրս են գալիս իրանց ափերից, իսկ լեռնակառակը տարւայ երաշտ ամիսներին ծանծաղանում, ցամաքում և նաւազնացութեան համար ան-լարմար են դառնում:

ԱֆրիկաՅի ԿԼԻՄԱՆ

Աֆրիկան մեծ մասամբ գտնւում է տաք գօտիում և ընկ-նում է հասարակածի երկու կողմերում: Նոյն իսկ նրա ամե-նահարաւային մասերը հասարակածից 1000 վերստից աւելի հեռու չեն գտնւում: Դրա համար էլ Աֆրիկան աշխար-հիս ամենատաք մայր ցամաքն է. Նրա ամենացուրտ երկիրն անգամ աւելի տաք է, քան Եւրոպայի ամենատաք երկիրը: Աֆրիկայի տաք կլիման դգալի կերպով մեզմանում է այնտեղ տեղացող պարբերական անձրեների շնորհիւ: Կենդրո-նական Աֆրիկայում ամառնային ամիսները տաքութիւնը հասնում է մինչև 50 աստիճանի, իսկ ձմեռնային ամիսները այնտեղ այնպիսի տաք լինում, ինչպէս մեզ մօտ ամառուայ սկզբներում: Որովհետեւ հիւսիսային Աֆրիկան աւելի լայն և նրա ներքին մասերը աւելի հեռու են շրջապատող ծովերից և ովկիանոսներից, քան հարաւային Աֆրիկայինը, դրա հա-

մար էլ հիւսիսային Աֆրիկան հարաւայինից ընդհանրապէս աւելի տաք է: Սահարայում ամառը ցերեկով սարսափելի տաք է լինում. անապատի աւազը այնրան է տաքանում, որ նրա մէջ կարելի է ձու եփել: Այնտեղ փշում է մի այնպիսի տաք և սաստիկքամի, որ աւազով ծածկում է ամբողջ կարաւաններ և ցամաքեցնում է գետակներ ու առուակներ: Եյդ տաք քա-մին Սահարայում կոչւում է ուանում, Եգիպտոսում շամսին և Գվինէում հարմատան: Բայց չնայելով այդ տաք հոսանքին այդ երկրներում երբեմն բաւական զոյ գիշերներ են լինում:

Աֆրիկայի մեծ մասում ամբողջ տաքին գրէթէ միատե-սակ տաք է լինում և տաքուայ եղանակները տաքբերուում նրանով, նայելով անձրի է զտիս թէ ոչ:

Անձրեների կողմից Աֆրիկայի զանազան մասերը միմ-եանցից շատ են տաքբերուում: Ամենից շատ անձրի է գալիս կենդրոնական և արևմտեան Աֆրիկայում և ովկիանոսների ափերում: Եյդ մասերում տաքեկան երկու անգամ է անձրի գալիս. գարնանը և տմառւայ վերջերին: Քիչ անձրեներ են գալիս միայն Աֆրիկայի հիւսիսային և հարաւային վայրերում:

Տաք կլիմայի պատճառով մշտական ձիւնով ծածկուած լեռներ շատ քիչ կան Աֆրիկայում. բացառութիւն են կազ-մում միայն Կլիմանջարօ, Հարէշի և Ատլասի լիռները:

Աֆրիկայի կլիման ընդհանրապէս տաք և վատառողջ է. ամենալաւ կլիման ունի միայն Կապի երկիրը:

ԱֆրիկաՅի ԲՈՒԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Որովհետեւ Աֆրիկայի կլիման բոլոր մասերում զրեթէ միատեսակ տաք է, զրա համար էլ այդ մասերի բուսակա-նութիւնը կախուած է տեղացող անձրեներից: Քիչ շատ նա-խանձելի բուսականութիւն ունի միայն արեմտեան և կենդրո-նական Աֆրիկան, որովհետեւ այնտեղ պարբերական անձրի-

ներ են գալիս: Ծովերի, լճերի և գետերի ափերն էլ ունին բաւական ճշխ բռւսակամութիւն: Աֆրիկայի արևմտեան մասը բաւական հարուստ է անտառներով, որովհետեւ նա աւելի լաւէ ոռոգւած, քան արենելեան մասը: Այդ անտառների բոյսերից յայտնի են ձիթենու և դանազան տեսակ արմաներ, բաօրաբ, (աշխարհիս ամենամեծ ծառերից մէկը) կառչուկի խէժը և այլն: Սահարան բոլորովին զուրկ է բռւսակամութիւնից, չհաշւելով նրա օազիները, որտեղ մեծ մասամբ թըֆեր և խոտ են բռւմնում: Սահարա անապատի կամենաթանգագին ընծան կազմում է միայն ֆիւնիկեան արմաւը: Բռւսակամութիւնից զուրկ մի այդպիսի անապատ է ներկայացնում նաև Կալահարի անապատը, որ գտնուում է հարաւ-արեմտեան Աֆրիկայում:

Աֆրիկայի հարաւային և հիւսիսային ծայրերը ունին մշտական կանաչ բռւսակամութիւն: Հիւսիսային Աֆրիկայում կան նարինչի և լիմոնի ծառեր, խաղող, շականակ և այլն: Հարաւային Աֆրիկայում ընդհակառակը չկան մեծ ծառեր, այլ մեծ և երկար արմատներ ունեցող թփեր:

Օգտակար բայսերով Աֆրիկան ընդհանրապէս աղբատ է: Դրանց մեծ մասը բերել են Ասիայից՝ Ամերիկայից, օր. բանան, կոկոսի արմաւ, բրինձ և այլն:

ԱֆրիկաՅի ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՃԽԱՐՀՅՈՒԹ

Աֆրիկայի խիտ անտառները և ընդարձակ անապատները վայրենի դադաների գլխաւոր բոյներն են կազմում: Խոշոր կանգանիների կողմից շատ հարուստ է Աֆրիկան, որ ամենայն իրաւամբ կազմում է որոճող և հաստակաշի կենդանիների և կապիկների թագաւորութիւնը: Կենդանիներից շատ նշանաւոր են աֆրիկական փիղը, քարայծը, ընձառիւծը, բորենին, էդ գոմէշը, ընձուղտը, վագերաձին, դորիլա և

շիմպանզէ կապիկները, վագը, առիւծը և այլն. Ժոշուն-Ներից աչքի են ընկնում ջայլամը և արագիլը, իսկ միջատ-Ներից՝ մրջիւնները և մորեխները: Նշանաւոր է Աֆրիկական կոկորդիլոսը և օձը:

Բռւսակամութեամբ աղքատ Սահարան զուրկ է նաև կենդանիներից. այդ անապատը մի քիչ կենդանացնում են միայն ջայլամը և ընձառիւծը:

Հիւսիսային Աֆրիկան կենդանիներով անհամեմատ աւելի աղքատ է, քան միջին և հարաւային Աֆրիկան: Եյստեղ կարելի է պատահել եւրոպական կենդանիներից միայն արշին և լեռնային ոչխարին, առիւծին, վագերաձիուն և այլն: Ընտանի կենդանիներից նշանաւոր է միասապատանի ուղուը, որը անապատում ձիու գեր է կատարում:

Եւրոպացիները ժամանակի ընթացքում զայթելով Աֆրիկա, սկսեցին հետզհետէ ոչնչացնել նրա խոշոր կանգանիներին, մանաւանդ փղին, որի սուկը առեստի համար ամենաթանգագին առարկաներից մէկն է կազմում: Խոշոր կենդանիների կողմից մինչեւ այժմ էլ գեռ հարուստ է կենդրոնական Աֆրիկան, չնայելով որ վերջերս այնտեղ էլ սկսել դրանց ոչնչացնել:

ԱֆրիկաՅի ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աֆրիկան ունի մօտ 180 միլիոն բնակիչ: Ազգաբնակութեան խտութեան կողմից Աֆրիկայի զանազան մասերը միմեանցից շատ են տարբերում: Ամենախիտ աղքարնակութիւն ունին կենդրոնական Աֆրիկան, Սուդանը և Գվինէի ծոցի ափերը, որովհետեւ դրանք յայտնի են իրանց հարուստ քնութեամբ:

Աֆրիկայի աղքարնակութիւնը պատկանում է մարդկացին երեք ցեղերին՝ սե, սպիտակ և գեղին: Սակայն աղքարնա-

կութեան ամինամիծ մասը պատկանում է սև ցեղին, ինչպէս ու Սսիայի ազգաբնակութեան մեծ մասը դեղին ցեղին:

Սև կամ նեղրական ցեղին պատկանող բնակիչները ապրում են կենդրոնական և հարաւային Աֆրիկայում. սպիտակ կամ միջերկրական ցեղին պատկանող բնակիչները մեծ մասամբ ապրում են հիւսիսային Աֆրիկայում և մասամբ էլ մայր ցամաքի միւս երկրներում, իսկ դեղին կամ մալայեան ցեղին պատկանողները Մադակասդար կղզու կենդրոնական և արևելեան մասերում:

Նեղրերը իրանց արտաքին տեսքով բաժանւում են երկու գլխաւոր տեսակների՝ խևական նեղրերի և հոտտենտոտների: Խևական սև նեղրերը ապրում են Աֆրիկայի ամենատաք մասում, իսկ հոտտենտոտները մեծ մասամբ Կապվի երկրում:

Նեղրերը սև ցեղին պատկանող միւս ժողովրդներից տարբերում են իրանց երկար գլուխներով, սև մազերով, լայն քթով և հաստ շրթունքներով: Նրանց կաշու գոյնը բոլորովին սև է: Հստ իրանց գործածական լեզուի և բառառների, նեղրերը բաժանւում են մի քանի, միմեանցից տարբեր ցեղերի: Նրանք բոլորն էլ կանգնած են մտաւոր զարգացման ամենաստորին աստիճանի վրայ, ապրում են շատ սղորմելի վիճակում, և ման են գալիս կամ բոլորովին մերկ կամ թէ չէ իրանց մարմինը ծածկում են կաշիներով: Նրանք սովորութիւն ունին պարանոցի, ձեսքերի ու ստների վրայ մետաղներից շինուած մատանիներ կրելու և երեսը ներկել: Նըրանց մէջ գեռես գոյութիւն ունի ստրկութիւնը: Հայրը շատ անգամ մի ամենահասարակ աղուխի համար կարող է վաճառել իր կնոջը և երեխաներին: Նեղրերը մեծ մասամբ պարապում են որսորդութեամբ: Կան նաև անասնապահութեամբ և հողագործութեամբ պարապողներ: Նեղրական մի քանի

ցեղեր էլ կան, որոնք պատրաստում են զանազան տեսակ կաշիներ, զինքեր և այլն:

Հարաւային Աֆրիկայի նեղրերը կրօնով մեծ մասամբ հեթանոսներ կամ կռապաշտներ են, իսկ հիւսիսային Աֆրիկային՝ մեծ մասամբ մահմեղականներ և մառամբ էլ քրիստոնիաներ:

Իւրաքանչիւր նեղրական ժողովուրդ բաժանւում է միքանի համայնքների, որոնցից իւրաքանչիւրը կառավարում է իւր անկախ թագաւորով:

Այդ թագաւորները միմեանց հետ շարունակ արխնահեղ կախներ են մզում, յարձակում են իրանց հարեան ցեղերի վրայ և գերիներ վերցնելով, վաճառում են օտարներին:

Նեղրական կամ սև ցեղին պատկանող հոտտենտոտները և զուշմէնները ապրում են Աֆրիկայի հարաւարենմբան մասում: Նրանք խևական նեղրերից տարբերում են իրանց կաշու և մազի դեղնաւուն գոյնով: Հօտենտոտները զլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ, իսկ բուշմէնները՝ որսորդութեամբ:

Ասացինք, որ սպիտակ ցեղին պատկանող ժողովրդները զլխաւորապէս ապրում են Աֆրիկայի հիւսիսային մասում: Նրանք մեծ մասամբ զաղթել են Սսիայից. օրինակի համարարները, որոնք զաղթել են այնտեղ, հիմնել են մի քանի տէրութիւններ, տարածել են մահմեղական կրօնը զանազան ցեղերի մէջ և մեծ զարկ են տուել առևտրի զարգացմանը:

Եւրոպացիները սկսեցին Աֆրիկա զաղթել գեռ մեզանից երկու հարիւր տարի առաջ: Եւրոպական մի քանի տէրութիւններ նամենելով Աֆրիկայի զանազան մասերը, այնտեղ հիմնեցին բազմաթիւ զաղութներ: Ներկայում եւրոպական շատ ազգեր Աֆրիկայից ահազին քանակութեամբ արտահանում են զանազան հում նիւթեր և բնիկներին դրանց

վոլխարէն տալիս են իրանց գործարանների պատրաստած իրերը: Եւրոպացիների շնորհիւ էլ քրիստոնէութիւնը հետզհետէ տարածւում է Աֆրիկայի հեթանոս ցեղերի և ժողովրդների մէջ:

Աֆրիկացի չիշխնացին երկրները:

Աֆրիկայի ամենահիւսխային մասում գտնւում են երկու սարահարթներ, որոնք իրանց մեծութեամբ տարբեր են միմեանցից: Դրանք են՝ Բարկայի և Բեղրերի սարահարթները:

Եյդ երկու սարահարթները միմեանցից բաժանւում են Սահարա անապատի մի նեղ վերջաւորութեամբ, որ համուռմէ մինչև Միջերկրական ծովի ափերը: Բարկայի սարահարթը բարձր չէ: Նա սկսում է Միջերկրական ծովից և դէպի հարաւձգւելով հետզհետէ ցածրանում և միանում է Սարահա անապատի հետ, Բարկալի սարահարթի հիւսխարկութեան մասը ունի զեղեցիկ հովիտներ, ցածր լեռներ, մարդագետիններ և մասամբ էլ ծածկուած է անտառներով:

Բերքերեան սարահարթը, ընդհակառակը, բարձր է: Նա բռնում է Աֆրիկայի հիւսխարկութեան անկիւնը և իր բնութեամբ նման է հարաւային Եւրոպայի հարեան երկրներին: Դրա վրայով տարածւում են մի շարք լեռներ, որոնք յայտնի են երկաթի, պղնձի, արծաթի և ուրիշ թանկագին հանքերով: Եյդ լեռներից նշանաւոր է Ատլասի լեռնաշղթան, որ ծածկուած է մշտական ձիւնով: Թէ Բերքերի և լճէ Բարկայի սարահարթը, որոնք գտնւում են Միջերկրական ծովի ափերին, ունին տաք և չոր ամառ և մեղմ ու անձրիալին ձմեռ: Այնտեղ էլ մշտական այն միևնույն բոյսերը և հացահատիկները, ինչ որ հարաւային իտալիայում և Յունուստանում, օր. ցորեն, հարաւային պտուղներ, խաղող, ձի-

թապտուղ և այլն: Այնտեղի բնակիչները շատ են օգտառմ հողի արհեստական ոռոգումից:

Բարկայի և Բերքերի սարահարթները ընկնում են բարեխառն գոտու ամենատաք մասում և ունին բազմազան կլիմա: Ափերի մօտ կլիման տաք ծովային է, մնացած մասում ցամաքային (ցերեկը շատ տաք, իսկ գիշերը ցուրտ): Ընդհանրապէս Աֆրիկայի ամենահիւսխային մասը կաղմող այդ երկու սարահարթները ունին բաւականաչափ օգտակար բոյսեր՝ եղիպտացորեն, ծխախոտ, ֆիւնիկեան արմաւ, նարինչ, շաքարեղեգն եայլն: Կենդանիներից նշանաւոր են առիւծը, բորենին և կատիկը: Մորեխը և կարիճը այնտեղի ազգաբնակութեամբ մեծամեծ վնասներ են պատճառում:

Ամենահին ժամանակներից սկսած հիւսխային Աֆրիկայում բնակում են սպիտակ ցեղին պատկանող Բերքերները ուսոնց ասիայից գաղթած արաբացիները նուաճեցին և մահմենցական գարձրին: Բացի բերքերներից այնտեղ ապրում են բաւականաչափ մաւրեր, հրէաներ, թիւրքեր, եւրոպացիներ, նեզրեր եայլն: Ամբողջ ազգաբնակութեան մի փոքր մասը ապրում է քաղաքներում, իսկ մնացած մեծ մասը ընդհանրապէս թափառական կեանք է վարում: Բնակիչները պարապում են հողագործութեամբ, խանարածութեամբ և մեղւաբուծութեամբ: Յայտնի են նաև այդ բնակիչների ձեռքով պատրաստած կաշիները և գործած գորգերը:

Հիւսխային Աֆրիկայում գտնւում են հետեւալ երկրները: Մարոկկօ, Ալժիր, Թունիս, Տրիպոլիս, Բարկա և Փէցցան:

ՄԱՐՈԿԿՕԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹԻՒՆ:

Մարոկկօն գտնւում է Բերքերիայի արևմտեան կողմում և իր բնութեամբ նրա ամենահարուստ մասն է կաղմում:

Մարօկիօի տէրութիւնը արաբական երրեմնի թափաւորութեան մնացորդն է, որ այժմ բոլորվին անկախ է և կառավարում է սուլթանով։ Երկրի ազգաբնակութեան մեծ մասը մարերն են, որոնք պարապում են անասնապահութեամբ։ Յայտնի են Մարօկիօի ձիերը, էշերը, կակուղ բուրդ ունեցող ոչխարները ևայլն։

Տէրութեան զլսաւոր քաղաքներն են Մարօկիօ, որ նշանաւոր է իւր կաշով և ֆէց կամ ֆէս, որտեղ ապրում է Սուլթանը։ Փէցը երկրագնդիս նշանաւոր մահմեգական մտաւոր կեղրոններից մէկն է։ այդ քաղաքումն է պատրաստում ֆէս կոչուած կարմիր զլսարկը։ Յայտնի են այդ քաղաքնաե գէնքերը և մետաքսեղէն զործուածքները։ Երբե առետրական քաղաք նա սերտ յարաբերութիւն ունի Նիգեր զետի ափում գտնուզ Տիմբրուկտու քաղաքի հետ, որտեղ նա ներմուծում է եւրոպական ապրանքներ։ Մարօկիօյումն է գտնում և Տանժեր քաղաքը, որ մի նշանաւոր նաւահանգիստ է։

Ա Լ Փ Ի Բ

Ալժիրը պատկանում է ֆրանսիացիներին։ Վերջիններիս համար այդ երկրի նշանակութիւնը հետքհետէ աւելի է քարձրանում, շնորհիւ իր քնական հարստութիւնների։ Երկրի քնական հարստութիւնները կազմում են զանազան տեսակ հանքեր, անտառներ, խաղող և այլն։ Ալժիրի զլսաւոր քաղաքն է Ալժիր, որտեղ նստում է ֆրանսիայի հասարակապետութեան կողմից նշանակուած գեներալ—նահանգապետը։ Գլխաւոր քաղաքի շրջակայրում կան նշանաւոր բանջարանոցներ։

Թ Ո Ւ Ի Ս :

Թունիսը հիւսիսային Սֆըրիկայի տէրութիւններից մէկն

է. որ կառավարում է բէլով կամ իշխանով, որ ճանաշում է Ֆրանսիայի հասարակապետութեան քաղաքական գերիշխանութիւնը։ Տէրութեան մայրաքաղաքն է Թունիս, որից ոչ հեռու գտնում են նախարեան պատմական նշանաւոր մայրաքաղաք Կարթագէնի աւերակները։

ՏՐԻՊՈԼԻՍ, ՓէջջԱՆ եւ ԲԱՐԿԱ:

Տրիպոլիս, Փէցցան և Բարկա երկրները պատկանում են Թիւրքերին կան տաճիկներին։ Այդ երկիրներին էլ կառավարում է Թիւրքիայի սուլթանից նշանակուած մի փաշայ։ Տրիպոլսի քաղաքներից նշանաւոր է Տրիպոլիսը, որ առետրական մի նշանաւոր կենտրոն է։ Փէցցայի զլսաւոր քաղաքն է Մուրզուկ, իսկ Բարկայինը՝ Բննզազի, որ Միջերկրական ծովի նշանաւոր հաւահանգիստներից մէկն է։

Ս Ա Հ Ա Ր Ա

Սահարան աշխարհիս ամենամեծ անապատն է, որ իր տարածութեամբ Եւրոպական Ռուսաստանից մի քիչ աւելի մեծ է։ Այդ անապատը տարածում է Առլատեան ովկիանոսից մինչև Կարմիր ծովը (արկմուտքից դէպի արևելք) և Յալասի լեռներից ու Միջերկրական ծովից մինչև Սուլդանը (հիւսիսից դէպի հարաւ)։ Այդ ամբողջ տարածութիւնը հաւաստոր է Եւրոպայի ամբողջ տարածութեան $\frac{2}{3}$ -մասին։

Սահարայի մակերեսով քաղմազան է։ Նրա ամբողջ տարածութեան մի մասը աւագով է ծածկուած, միւս մասը մանր քարերով, իսկ երբորդ մասը կալով։ Աւագով շատ է ծածկուած մանաւանդ Սահարա անապատի տրիելեան մասը, որ կոչում է Լիքիական անապատ։ Սահարա անապատի տարածութիւնը հասնում է իւր զագալնակէտին, երբ այնտեղ

փշում է սամում կոչուած այրողքամին։ Սահարայում անձրելցատ հազւագիւտ երեսյթ է։ Սահարան աւազու և քարքարու լինելու պատճառով զուրկ է բուսականութիւնից։ Բացառութիւն են կազմում Սահարայի միայն օազիսները։ որոնք անապատի պարտէզներն են։ Օազիսներից մի քանիսը ծովի մակերեսոյթից ցածր են. դրանցից իւր բուսականութեամբ նշանաւոր է Սիվախը։ Սահարա անապատում յաճախ պատահող կենդանիներից նշանաւոր են կարիճը, օձը, առիւծը, իսկ թռչուններից ջայլամը ևայն։ նշանաւոր են նաև Սահարայի ուզտր, ձին և ոչխարը։

Մարդիկ Սահարա անապատում ճանապարհորդում են սովորաբար ուզտերով և վտանգից ազատուելու համար խմբելով կամ կարաւաններով են ճանապարհորդում։

Սահարան շատ նոսր ազգաբնակութիւն ունի, որ զըլխաւորապէս ապրում է օազիսների մօտ։ Նրա ամբողջ ազգաբնակութեան թիւը $\frac{1}{2}$ միլիոնից աւելի չէ։ Բնակիչները թափառական կեանք են վարում և կրօնով հեթանոս կամ կռապաշտ են։

Սահարա անապատի ազգաբնակութիւնը բաղկացած է քերքերներնց, արաքներից, տուարեզներից և տիքուններից։ Դրանցից բերբերները և արաքները ապրում են անապատի հիւսային և արեելեան մասերում, կենդրոնական մասերում—տուարեզները, որոնք բերբերների մի ցեղն են կազմում, իսկ արեելեան մասում—տիքունները։

Այդ ցեղերից ամենազօրեղը աւազակարարոյ տուարեզներն են, որոնք բաժանւում բազմաթիւ, միմեանցից անկախ մանր ցեղերի։ Դրանք յաճախակի յարձակում են անապատի ճանապարհորդների կարաւանների վրայ և նրանց կողոպտում և թալանում են։

Սահարան ունի հետեւել երկու գլխաւոր ճանապարհները կարաւանների համար, առաջին ճանապարհը Տիքունից

տանում է դէպի կուկու Մուլզուկով, իսկ երկրորդը Փէցից ուղիղ Տիմբրուկու։ Կարաւանով ճանապարհորդողը 130 օրւայ ընթացքում հաղիւ է կարողանում Փէցից համել Տիմբրուկու։

ԿԱՐՄԻՐ ԾՈՎԻ ԱՓՈՒՄ ԳՃՆԻՈՂ ԵՐԿՐՈՒՅՆ:

Կարմիր ծովի ափում գտնւում են հետեւել երեք նշանաւոր երկրները. Հարէշտան կամ Եթովպիա. Նուբիա եւ Եգիպտոս։

Հ Ա Բ Է Ջ Ս Ա Ն

Կարմիր ծովի հարաւ-արևմտեան ափում գտնւում է լեռնոտ Հարէշտանը կամ Եթովպիան, որ Աֆրիկայի ամենաբարձր զիրք ունեցող երկիրն է։ Հարէշտանի լեռների մի մասը հրաբխային ծագում ունի, որի ալարզ հետքերը մինչև այժմ էլ կարելի է նկատել։ Այդ լեռները երկիրը բաժանում են մի քանի մասերի և շատ գծուարացնում բնակիչների միմեանց հետ ունեցած հաղորդակցութիւնը։ Ամառը Հարէշտանում ուստիկ անձրեներ են գալիս, որոնց շնորհիւ նրա գետերը յորդանում և շատ անգամ էլ գուրս են գալիս իրանց ափերից։ Ընդհանրապէս ուռոգման կողմից Հարէշտանը մի նախանձելի երկիր է, որի լեռներից սկիզբն են առնում և նեղոս գետի մի քանի նշանաւոր վտակները։ Լճերից նշանաւոր է Ցանան, որը գտնւում է երկրի ուղիղ կենդրոնում։ Հարէշտանի գետերը ընդհանրապէս աննաւարկելի են և զրա գլխաւոր պատճառը երկրի մակերեսոյթի աշքի ընկնող անհարթութիւնն է։

Նա ունի բազմազան կլիմա, որովհետեւ երկրի մակերեսոյթի կազմութիւնն էլ բազմազան է։ Երկրի բարձր մասերում կլիման ցուրտ է, իսկ ցածր մասերում տաք։ Նախանձելի կլիմա ունին երկրի միջին բարձրութիւն ունեցող մասերը, որտեղ մշտական գարուն է տիպում։

Հարէշստանը կամ Եթովպիան իր բազմազան կլիմայի և քաւարար ոռոգման շնորհիւ Սփրիկայի ամենահարուստ երկիրն է թէ բոյսերով և թէ կենդանիներով։ Մի քանի նշաշանաւոր ճանապարհորդների կարծիքով Հարէշստանը Սփրիկայի բուռական և կենդանաբանական ամենահարուստ պարտէզն է։ Յայտնի են մանաւանդ նրա ընդարձակ մարդագետինները, որոնք աճապիս մնունդ են տալիս Եթովպական երկարաբուրդ ոչխարներին և արագավազ ձիերին։ Նրա բոյսերից նշանաւոր են բաօրաբ, արմաւենի, ակացիա, բանան, սուրճ և այլն, իսկ կենդանիներից աշըրի են ընկնում փիղը, առիւծը, բորենին, կապիկը և այլն։

Հարէշստանի աղջարնակութիւնը համեռում է մօտ 5 միլիոնի։ Այդ աղջարնակութիւնը բաղկացած է մեծ մասամբ Հարէշներից կամ Եթովպացիներից, որոնք պատկանում են Կովկասեան կամ Միջերկրական ցեղին և աղջակից են արաբնեներին։ Կրօնով նրանք քրիստոնեաներ են և իրանց հարեան ցեղերից աւելի քաղաքակրթուած։ Դժբաղդաբար Հարէշստանում գրադիտութիւնը մեծ մասամբ հոգեորականութեան ահպհականութիւնն է կազմում։

Հարէշստանը բաժանուած է մի քանի իշխանութիւնների, որոնցից իւրաքանչիւրը կառավարուած է մի իշխանի կամ նեգուածի ձեռքով։ սակայն Եթովպական տէրութեան բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է վերոյիշեալ իշխաններից աւագին, որ կոչում է նեգուած—նեգեստի (Եթագաւորների թագաւոր), և նստում է Հարէշստանի Ատտիս—Ազեքա մայրագաղա-քում։ Բայց չնայելով դրան Հարէշստանի ամենանշանաւոր բազարն է Գօնդար։

Հարէշստանի կամ Եթովպիայի արեելեան և հարաւ-արելեան շրջակայրում ապրում են սօմալացիները և գալապաները, որոնք համարում են Հարէշների աղջակիցները և դաւանում մահմեդական կրօնը։ Դրանց բնակած վայրերը պատկանում

են Հարէշներին, իտալացիներին և անդղիացիներին։ Կարմիր ծովի ափի մի մասն էլ կազմում է իտալացիների և ֆրանսացիների կալուածը։ Իտալական կալուածների գլխաւոր բազարը Մասսովան է, իսկ ֆրանսիականինը՝ Ջիքուլի, որ իր հարեան կալուածների հետ երկաթուղիով է միացած։

Ն Ո Ւ Բ Ի Ը

Նուրիան գտնուում է միջին նեղոսի երկու ափերում։ Նա կազմում է մի սարահարթ, որի վրայով հոսում է նեղոսի միջին մասը։ Նուրիայի միայն մի փոքրիկ մասը խիտ աղգարնակութիւն ունի, այն ինչ մեծ մասը զուրկ է դրանից, որովհետեւ անապատ է։ Նուրիայի բնակիչները գլխաւորապէս կազմում են նուրիացիները, որոնք նեղրական և կովկասեան կամ միջերկրական ցեղերի մէջ տեղի են բռնուած։ բացի վիրոյիշեալ բնակիչներից նուրիայում ապրում են նաև նեղրեր և թիւրքեր կամ տաճիկներ։ Այդ բնակիչները պարապում են մեծ մասամբ հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Նուրիան եգիպտական խետիվի (իշխան) կալուածն է։

Նրա ամենապլիսաւոր բազարը Խարտումն է, որ մի առետրական նշանաւոր կենտրոն է։ Բնակիչները պարապում են փղսուրի առետրով։

Ե Գ Ի Ց Ո Ս

Եղիպտոսը իսկապէս կազմում է աշխարհիս ամենամեծ անապատի՝ Սահարայի շարունակութիւնը։ Այդ երկիրն էլ Սահարայի նման մի անապատ կլինէր, եթէ նրա միջով չունէր նեղոս նշանաւոր գետը, որ կատարեալ կենդանութիւն է չնորհում եղիպտոսին։ Ճինց դրա համար հին ժամանակ յոյները այդ երկիրը կոչում էին «նեղոսի ընծայ»։ Նեղոս

գետը իր սկիզբն է առնում չարէշտանի լեռներից և ամառը, երբ այդ լեռների ձիւնը հալում է, նեղոս գետը յարդանում, դուրս է գալիս իր ափերից և պարարա տիղմով ծածկում է երկրի մակերեսոյթի մեծ մասը և այդպիսով հողը պարարտացնում։ Ալդ երեսոյթը տեղի է ունենում միմեայն եղիպտոսում, իսկ նուբիայում նեղոսը իւր ափերից գուրծէ գալիս, որովհետև զրանք անհամեմատ աւելի բարձր ենք նեղոս գետի յորդանալը մեծ նշանակութիւն ունի Եղիպտոսի համար, որովհետև այնտեղ անձրեներ սովորաբար քիչ են գալիս, իսկ բնակիչները իրանց արտերի ոռողման համար անհրաժեշտ ջուրը ստանում են նեղոսից։ Ամառային ամիսները յորդանալուց յետոյ նեղոսը դեկտեմբեր ամսին նորից մտնում է իր ափերի մէջ։

Եղիպտոսի կլիման էլ նայնն է, ինչ որ Սահարա անպատճնը։ Սմբողջ Եղիպտոսում անձրեներ չեն գալիս։ Նրա կլիման ընդհանրապէս չօր է և դրա համար էլ Եւրոպայից ամեն տարի բաւականաչափ հիւանդներ (մանտանդ թորախտաւորներ) են գնում այնտեղ ձմեռը ապրելու համար։

Եղիպտոսը իսկապէս ներկայանում է Սահարա անպատճ մեծ օտզիսներից մէկը, որտեղ ամենահին ժամանակներից ի վեր ապրում էր մեծ և խիտ աղզաբնակութիւն։ Այժմ էլ նորա բնակիչների թիւը համուռմ է մօտ 10 միլիոնի, այնինչ նրա հարեան երկրների մեծ մասը դուրի է բնակիչներից։

Իրեն լաւ երկիր, Եղիպտոսը միշտ զրաւել է աշխարհակալ և հզօր տէրութիւնների ուշաղբութիւնը։ Ժամանակի ընթացքում այդ երկիրը գտնուել է զանազան աղզերի իշխանութեան ներքոյ, որոնցից իւրաքանչիւրը թողել է իր հետքերը։ Հինց այդ է զլխաւոր պատճառը, որ Եղիպտոսի ներկայ աղզաբնակութիւնը մի տեսակ խառն ծագում ունի։

Եղիպտոսի ամբողջ աղզաբնակութեան $\frac{3}{4}$ -ական մասը

կազմում են սպիտակ ցեղին պատկանող Փելլահները, որոնք բերբերների ցեղակից են, բայց խառնուած արաբների հետ։ Փելլահները կազմում են Եղիպտոսի հոգագործ դասակարգը։ Նրանք բարձրահասակ, նիհար և աշխատասէր մարդիկ են։ Փելլահները ապրում են գիւղերում, պարապում են միայն երկրագործութեամբ և աննախանձելի կեանք են վարում, որովհետև ահապին տուբրեր են վճարում տէրութեան։ Սահայն հին Եղիպտացիների իսկական սերունդը համարւում են կոպտացիները, որոնք ապրում են բաղաներում և պարապում են արհեստներով և վաճառականութեամբ։ Նրանց ամբողջ թիւը համուռմ է մօտ 750,000-ի։

Եղիպտոսում կան նաև արաբներ, որոնք պատկանում են սպիտակ ցեղին, ապրում են մասամբ քաղաքներում և պարապում վաճառականութեամբ, մասամբ էլ իրբե քեղուին-ներ թափառական կեանք են վարում անապատներում։ Վերջապէս Եղիպտոսի քաղաքներում ապրում են նաև բաւականաշափ եւրոպացիներ, յոյներ, թիւբրեր և հայեր, չայերը ապրում են գլխաւորապէս Գահիրէ և Աղեքանդրիա քաղաքներում, ունին իրանց եկեղեցիները, ուսումնաբանները և հասարակական ուրիշ հիմնարկութիւններ։ Եղիպտոսում հրատարակաւում են հայերէն լեզուով մի քանի պարբերական թերթեր, որոնց խմբագիրները թիւբրահայեր են։

Եղիպտոսի բնակիչների գլխաւոր զբաղմունքը հօգագործութիւնն է։ Նորա բայսերից նշանաւոր են ցորեն, Եղիպտացորեն, բրինձ, շաքարեփեզն, փիւնիկեան արմաւենին և այլն։

Առետքական տեսակետից Եղիպտոսը մեծ նշանակութիւն ունի, որովհետև այնտեղից դէպի Եւրոպայի զանազան երկիրներն են արտահանուում մեծ բանակութեամբ հացահատիկներ։ Եղիպտոսի բնակիչները առետքական յարաբերութիւն ունին նաև ներքին Աֆրիկայի հետ, որտեղ նրանք ապրանքներ փոխագրում են կամ նեղոս զետով, կամ երկար

թուղիով կամ թէ չէ կարաւաններով։ Եզիպտոսի նշանակութիւնը բարձրացաւ մանաւակ այն ժամանակ, երբ 1869 թ. բացւեց Սուէզի ջրանցքը, որի երկարութիւնը 110 վերստ է։ Այդ նշանաւոր ջրանցքը միացնում է Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ։ Սուէզի ջրանցքի ափերումն են գտնուում Եզիպտոսի առեստրական երկու նշանաւոր քաղաքները՝ Պօրտ-Սահիլը և Սուէզը։ Բայց նրա ամենանշանաւոր առեստրական քաղաքը Աղեքսանդրիան է, որ գտնում է նեղոսի գելտայի արկմտեան կողմում։

Մեզանից 400 տարի առաջ Եզիպտոսը ընկաւ Թիւրքիայի իշխանութեան տակ և մինչև այսօր էլ նա նրա գերիշխանութիւնն է ճանաչում։ Եզիպտոսը կառավարում է խեղիվը, որ տարեկան սրոշեալ հարկ է վճարում Թիւրքիայի սուլթանին, բայց իրավանապէս անդղիացիների հալատակ է։

Եզիպտոսի գլխաւոր քաղաքն է Գահիրէ, որ իսկեղի աթոռանիստն է։ Այդ քաղաքը առեստրական յարաբերութիւն ունի Եւրոպայի, արեմտեան Ասիայի և կենդրոնական Աֆրիկայի հետ։ Գահիրէն ամբողջ երկրի զործարանական և ամենարազմամարդ (576,000 բնակիչ) քաղաքն է, որի շրջակայքում գտնում են հին Եզիպտական նշանաւոր պիրամիտները։ Միւս քաղաքներից նշանաւոր են Աղեքսանդրիա (320,000 ք.հ.), Դամիկնուա, Պօրտ-Սահիլ և այլն։

Կարմիր ծովի հարաւ արկմտեան ափաւմ գտնում է Խտալական գագութ Հրիտրէան, իսկ Բարէլ-Մանդերի նեղուցի մօտ Փրանսիական և անգլիական փոքրիկ գաղութները։

Սենեգալիս եկ Վերին Գվինէլ։

Գվինէի ծոցի հիւսիսային ափին զուգահեռական տարածում են Կօնգոյի լեռները, որոնցից իրանց սկիզբն են առ-

նում բաղմաթիւ գետեր, առուակներ և թափւում են Ատլատիան ովկիանոսը։ Այդ գետերից նշանաւոր են Սենեգալ և Գամչիա։ Այդ երկու գետերի մէջ գտնուղ երկիրը կոչւում է Սենեգամթիա, իսկ նրանից գլամի հարաւ արեկի գտնուող և հարեան երկիրը Վերին Գվինէա։

Սենեգամթիայի և Վերին Գվինէայի կլիման շատ է աղդում թէ Սահարա անապատից և թէ ովկիանոսից։ Այդ երկուներում ամառը ովկիանոսից փշում է խօնաւ քամին և անձրեւներ է առաջացնում, որոնք կլիման խօնաւ և վատառողջ են դարձնում. իսկ ձմեռը ընդհակառակը Սահարայից փշում է հարմագան կոշուած քամին, որ օդը լցնում է փոշով։

Սենեգալը և Վերին Գվինէան Աֆրիկայի տաք մասի ամենաարուստ երկրների թւին են պատկանում, որոնք մեծ մասամբ ծածկուած են անտառներով։ Քրտնից օդտակար ծառերից նշանաւոր են ակացիաները, ուս ծառը, կոկոսի արմաւը, պղպեղի և ընկոյզի ծառերը, ևայն, Կենդանիներից յայտնի է կապիկի Գօրիկլա կոշւած տեսակը, որ ամենամեծ և ամենաառածեղ կապիկն է։

Երկու երկրների բնակիչները նեգրերն են, որոնք բաժանում են տարբեր ցեղերի և կրօնով ոմանք մահմեղական են, ոմանք էլ հեթանոս։ Նրանք պարագում են հազարծութեամբ, արհեստներով և վաճառականութեամբ։ Առետուր են անում զիխաւորապէս Եւրոպացիների հետ։ Առետրի առարկաները կազմում են սսկու փոշին, փղոսկրը, արմաւի իւղը և գումմի կոշուած խէժը։ Վերին Գվինէայի ափերից մի քանիսը իրանց անունները ստացել են երկրի բնական հարստութիւններից. դրանք կոշւում են օր. Փղոսկրի, Պղպեղի, Ոսկու ափեր և այլն։

Նեղրերը կազմում են մի քանի տէրութիւններ, որոնցից նշանաւոր են Աշանտիի միապետութիւնը և Դահօւէ, որ գտ-

Նւում է ֆրանսիացիների տիրապետութեան տակ: Դրանցից դէպի արևմուտք՝ Պղպեղի ափում գտնուում է քրիստոնեայ նեզրերի Հիքերիա կոչուած հասարակապետութիւնը, որի գլխաւոր քաղաքն է Մոնրավիա:

Վերին-Գվինէյում և Սենեգամբիայում գտնուում են նաև եւրոպական մի քանի գաղութներ, որոնց նշանաւոր են ֆրանսիական գաղութները Սէն-Լուի գլխաւոր քաղաքով: Անզիական գաղութների գլխաւոր քաղաքն է Լագոս, որ արմաւի իւզի մեծ առևտուր ունի և Բատուրստ քաղաքը:

Դերմանացիներին պատկանում է միայն Տօզօ, որ գտնուում է Թահօմէից զէպի արևմուտք:

Ս Ո Ւ Թ Ա Ն

Սուլգան կոչուում է Աֆրիկայի այն մասը, որի սահմանները կազմում են հիւսիսային կողմից Սահարան, արևմտքից Կոնգոյի լեռները և հարաւից հասարակածը: Այդ ամբողջ տարածութեան ամենաբարձր մասը երկրի կենդրուն է, որտեղ գտնուում է Զադ լիճը Շարի գետով: Սուլգանի գետերից նըշանաւոր են Նիգերը և Սպիտակ-Նեղոսը: Բացի այդ գլխաւոր գետերից Սուլգանում կան նաև մի շարք գետակներ, որոնք առաջանում են այնտեղ տեղացող պարբերական անձրեներից: Եյդ անձրեների ժամանակ Սուլգանի թէ գետերը և թէ լճերը ջրառատ են գառնում, շատ անգամ դուրս են գալիս իրանց ափերից և նոր գետակներ ու լճեր առաջացնում:

Սուլգանի այն մասը հարուստ է բաւսականութեամբ, որ հետու է բնակած Սահարա անապատից: Այդ մասը ծածկւած է խիտ անտառներով և փառանեղ մարգագիտիներով: որոնք մեծ օգուտներ են տալիս տեղական ազգարնակութեանը: Սուլգանի բուսական և կենդանական աշխարհը բաւսական նման է Հարէշտանի ստորին մասի բուսական և կենդանական աշ-

խարհին: Նրա բոլորից նշանաւոր են դուրս, ինո՞իզօ, վեզակի, եպիպացորեն, բրինձ և ալին:

Սուլգանը Աֆրիկայի ամենապտղաւէտ և ամենաշատ աղգաբնակութիւն ունեցող մասն է: Այնտեղ ապրում են մօտ 60 միլիոն բնակիչ, որոնց մեծ մասը կազմում են նեզրերը (Սուլգանի նեզրեր): Դրանցից շատ տարբեր են արևմտեան Սուլգանում ապրող ֆելլատները: Վերջիններս աւելի նման են բերբերներին քան նեպերին:

Նեզրերը ապրում են Սուլգանի հարաւային կողմում և բաժանուամ են բազմաթիւ մասք յեղերի, որոնցից նշանաւոր է մանղինզօ կոչւած յեղը, որ ապրում է արևմտեան Սուլգանում: Նեզրերի մեծ մասը նստալիեց է, ապրում է հոգագործութեամբ և անամնապահութեամբ: Նրանք կարողանում են վայտից, կաշուց, կաւից և երկաթից զանազան իրեղիններ պատրաստել և շահազործել ընտանի շատ կենդանիների: օր, ձիուն, ալծին, կովին, շանը և ալին: Ներկարարութիւնը և մետաղագործութիւնն էլ բաւական զարգացած է նրանց մօտ:

Սուլգանի բնակիչները մեծ առևտուր ունին հիւսիսային Աֆրիկայի զանազան երկրների հետ, որտեղ նրանք արտահանում են փղոսկր, սկի, ջայլամի զանազան տեսակ փետուրներ, զումմի և ինդիզօ: Դրա փոխարէն նեզրերը ներմուծում են իրանց երկիրը հիւսիսային Աֆրիկայից եւրոպական զանազան ապրանքներ:

Սուլգանի բնակիչները ընդհանրապէս մահմեդականներ են, բայց կան նաև հեթանոս նեզրեր: Դրանք կազմում են մի քանի մանր տէրութիւններ:

Սուլգանում բացի նեզրերից ապրում նաև շատ արաբներ, որոնք գաղթել են Ասիայից և իրանց ապկեցութեանն են ենթարկել նեպրական շատ յեղերի: Նրանք նեզրերին սովորեցնել են շինել տներ քարից և կաւից, կտաներ զործել և տա-

բածել են մահմեղական կրօնը։ Միմեայն արևմտեան նեղրեն՝
են մնացել հեթանոսներ, որովհետեւ բոլորովին շեն ենթարկ-
ւել արարացիների ազգեցութեանը։

Ներկայումս Սուդանը բաժանւած է Անգղիայի, Փրան-
սիայի և Գերմանիայի մէջ։

Փրանսիային, բացի Սենեղամբիա գաղութից, պատկա-
նում են նաև արևմտեան Սուդանի մեծ մասը և կենդրոնական
Սուդանը Զադ լճից դէպի հիւսիս և դէպի արևելք։ Եւրոպա-
կան ոչ մի տէրութիւն Աֆրիկայում այնքան շատ գաղութ-
ներ չունի, որքան Փրանսիան։ Փրանսիական այդ բոլոր գա-
ղութները (Աֆրիկայում) խսկական Փրանսիայից 12 անգամ
աւելի մէծ են։ Սուդանի ֆրանսիական կալւածների գլխաւոր
կենդրոնը կազմում է Տիմքուլտու քաղաքը։

Անգղիային պատկանում է արևմտեան և կենդրոնական
Սուդանի այն մասը, որ գտնւում է Նիգեր գետի ստորին
հոսանքում մինչև Զադ լիճը։ Այդ լճի ափին է գտնւում եւ
Կումկա առետրական նշանաւոր քաղաքը, որ Սուդանի անգ-
ղիական կարուածների սիրտն է կազմում։ Անգղիային է պատ-
կանում նաև արևելեան Սուդանը։

Գերմանիային է պատկանում կենդրոնական Սուդանի-
մի փոքր մասը, որ գտնւում է Ջարի գետի արևմտեան կող-
մում ֆրանսիական և անգղիական կալւածների մէջ և վե-
րին Դիլինէական ափի մի անհշան մասը։

Միջին Սուդանի նեղրական տէրութիւններից նշանաւոր
են.

ա). Վարչայ, Զադ լճի արևելեան կողմում, գլխաւոր քա-
ղաքն է Արէշը։

բ). Բօրնու, Զադ լճի արևմտեան կողմում։

գ). Սոկոտրա արևմտեան Սուդանում։ գլխաւոր քաղաքն
է Կանօ, որ առետրական մի նշանաւոր կենդրօն է։ Այդ տէ-
րութիւնը հիմնել են ֆելլատները։

ՀԱՐԱԽԱՅԻՆ ԱՓՐԻԿԱ

Զամբէզի գետից սկսած դէպի հարաւ, ափրիկական
սարահարթը հետզհետէ բարձրանում և հասնում մինչև մէկ
վերստ բարձրութեան, իսկ հարաւալին կողմում աստիճանա-
բար ցածրանում է։ Հարաւալին Ափրիկայում ամենաբարձր
լեռները Դրակոնի լեռներն են, որոնց ամենաբարձր գաղա-
թը ծովի մակերսովիցից 3 վերստից աւելի է։ Զամբէզի գե-
տից դէպի հարաւ բնութիւնն էլ աստիճանաբար փոխում է։
Կլիման չորանում է, մանաւանդ հարաւային Ափրիկայի արե-
մտեան կիսում, որտեղ բուսականութիւնը գգալի կերպով
աղքատանում է։

Հարաւայի Ափրիկայի մի խոշոր մասը անապատ է ներ-
կայացնում, բայց ոչ այնպիսին, ինչպիսին Սահարան է։
Ամենամեծ անապատը Կալահարին է, որտեղ բուսականու-
թիւն է աճում, երբ երբեմն անձրեներ են գալիս։ Այնտեղի-
գետերը հոսելու ժամանեակ ջրվէժներ են գոյացնում։ Ջրվէժնե-
րից նշանաւոր է Վիկտորիայի ջրվէժը, որ կազմում է հա-
րաւային Ափրիկայի ամենամեծ գետից՝ Զամբէզից։ Հինց այդ
պատճառով էլ այնտեղի գետերի մեծ մասը աննաւանաբե-
լի է։

Հարաւային Ափրիկան ըստ իւր կլիմայի բաժանում է:
Երկու միմեանցից տարբեր մասերի՝ հարաւային Ափրիկայի-
հիւսիսային և հարաւային մասերի։

Հարաւային Ափրիկայի հիւսիսային մասում գտնւում են-
ամբողջ մալր ցածրաբարձր լեռները, որոնք ծածկու-
ած են մշտական ձիւնով, օր. Կիլիմանջարո, Կմնիա և
Ռուէնզօրի։ Այդ լեռներիցն են սկիզբն առնում Ափրիկայի-
գլխաւոր գետերից մի քանիսի նշանաւոր գտակները, օր-
ուկերեւէ, Մվուտան ևայլն։ Ափրիկայի այդ մասը հարուստ-
է նաև լճերով, որոնցից նշանաւոր են Տանգանայիկա, Նիտասա-

հայլն կոնգօ և Զամբէզի գետի չնորհիւ այնտեղ շատ լաւ ռռոգւում է:

Իր տաք և խոնաւ կլիմալի չնորհիւ հարաւային Աֆրիկայի արենելեան մասը բաւական պտղատու է. այնտեղ կան նոյն խոկ խիտ անտառներ, որոնց մէջ կան շատ օվտակար ծառեր. Նրա կենդանական աշխարհն էլ աշքի է ընկնում:

Հարաւային Աֆրիկայի այդ մասի ընակիշները կազմում են զլխաւորապէս նեզրերը, որոնք բաժանում են մի քանի ցեղերի. Բայց դրանց գործածական բառբառները այնքան նման են միմիկանց, որ այնտեղի բոլոր նեզրերին կոչում են ընդհանուր անունով Բանտու. Կրօնով այդ նեզրերը հեթանոս են և հրանցից ոմանք նոյն խոկ մարդակեր. Բանտուները պարագում են հողագործութեամբ և անասնապահութեամբ:

Աֆրիկայի գրեթէ այդ մասումն է գտնւում կոնգօի տէրութիւնը, որ միջազգային մի ընկերութիւն է կազմել ազատ առենուր անելու եպատակով. Այդ տէրութիւնը գտնւում է Բելգիայի թագաւորութեան հովանաւորութեան տակ: Գլխաւոր քաղաքն է Բօնա:

Հարաւային Աֆրիկայի հիւսիսային մասումն է գտնւում Ստորին Գվինէան, որտեղ ունին կալուածներ թէ գերմանացիները, թէ ֆրանսիացիները և թէ փորթուգալացիները:

Հարաւային Աֆրիկայի հիւսիսային մասում հարաւից գէպի հիւսիս գտնւում են հետեւել երկրները:

ա). Փորթուգալիայի կալուածները, Մողամբէկ զլխաւոր քաղաքով.

բ). Գերմանական արեւելեան Աֆրիկա, Բահամօյո գլխաւոր քաղաքով.

գ). Անգղիական արեւելեան Աֆրիկա—Մոմբաս զլխաւոր քաղաքով, որից կախումն ունի և Զանդիալարի տէրութիւնը, որ գտնւում է համանուն կղզու վերայ:

դ). Սօմալի երկիր, որտեղ ապրում է Սօմալ կոչւած պատերազմաէր ցեղը: Այդ երկիրը պատկանում է իտալացիներին և անզղիացիներին:

Հարաւային Աֆրիկայի հարաւային կէսը բոլորովին տարբեր կլիմա, տարբեր բոլոր և տարբեր կենդանիներ ունի: Դրա մի մասն էլ անապատային և աւելի քիչ է ռռոգւում: Գետերից նշանաւոր է միայն Օրանժի գետը, իսկ Եռոներից Դրակոնեան լիռնաշղթայի շարունակութիւնը:

Աղքարեակութիւնը կազմում են քանտունեզրերը, որոնցից այնտեղ յայտնի է Կաֆը ցեղը: Բացի դրանից հարաւային մասումն են ապրում և հոտունոտունները ու քուշմէնները, որոնք մտաւոր զարգացման ստորին աստիճանի վրայ են գտնւում:

Եւրոպական ազգերից ապրում են բաւականաշափ անգղիացիներ և հոլլանդացիներ կամ օօէւներ:

Կաֆրերը կամ զուլուսները կերպուացած են հարաւային Աֆրիկալի արեւելեան մասում և մարմնի գեղեցիկ և յազիթանգամ կազմուածք ունին: Զուլուսները շրջում են գրեթէ բուլուզին մերկ, իրանց ոտքերին և ձեռքերին կապում են զանազան զարգեր և ապրում են մեծ մասամբ խրճիթներում: Այդ ցեղը երկար ժամանակ զօրել գիմագրութիւն է ցոյց տուել անզղիացիներին, երբ վերջիններս ցանկանում էին նրանց նուաճել: Կաֆրերի կամ զուլուսների մեծ մասը պարագում է անասնապահութեամբ և կրօնով կրակապաշտ է:

Հոտունոտունները և քուշմէնները ապրում են հարաւային Աֆրիկայի արեւելեան մասում և պարագում են որորգութեամբ և անասնապահութեամբ:

Սպիտակ ցեղին պատկանող եւրոպացիները սկսեցին հարաւային Աֆրիկա գաղթել 17-րդ դարում: Ամենից առաջ գաղթեցին հոլլանդացիները, որոնք այնտեղ հիմնեցին մի քանի մասն գաղութներ: Այդ հոլլանդական գաղթակաները

որոնք ներկայումս կոչում են քօէրներ, (բօլ, իսուրը ծագում է զերմաներէն զիւղացի նշանակող խօսքից) պարապում էին հողագործութեամբ և անառապահութեամբ:

Հոլլանդացիներից յետոյ հարաւային Սֆրիկա գաղթեցին բաւականաշափ անգղիացիներ, որոնք ոկտոբեցին մրցել հոլլանդացիների հետ: Անգղիացիները հոլլանդացիներին հետզետէ քշեցին դէպի հիւսիս, որոնք այնտեղ հիմնեցին Օրսնժի և Տրանսվալի երկու փոքրիկ հասարակապետութիւները: Մօտ 50 տարի հոլլանդացիները իրենց նոր հայրենիքում հանգիստ կեանք վարեցին, բայց երբ նրանց կալուածներում սկսեցին երկան գալ ալմաստի և ոսկու հանքերք այն ժամանակ անգղիացիները աշխատեցին նուաճել այլ հողերը և մի երկարատես և յամառ կռուլից յետոյ իրանց իշխանութեանը հպատակեցրին այդ երկու մանք հասարակապետութիւնները (1902 թ.):

Հարաւային Սֆրիկայի հարաւային մասի երկրներից նշանաւոր են հետեւալիները.

ա). Կապի երկիր, որ գտնեում է Օբանժի դետից դէպի հարաւ. ալդ երկիրը ոկզբում կազմում էր հոլլանդացիների մի գաղութը, բայց այժմ պատկանում է անգղիացիներին. Կապի երկիրը հարուստ է հացահատիկներով, գինով, մետաքսով, ալմաստով եալին:

Գլխաւոր քաղաքն է Կապշտատ, որ գտնեում է Բարեյուսոյ հրուանդանի մօտ: Երկրորդ քաղաքն է Կիմբէրլայ, որ նշանաւոր է ալմաստի հանքերով.

բ). Նատալի երկիր, գլխաւոր քաղաքն է Պորտ-Նատալ: Այդ երկիրը պատկանում է անգղիացիներին:

գ) Օրանժի և Տրանսվալի հասարակապետութիւններ, որոնք հիմնել էին քօէրները, իսկ այժմ հպատակում են Անգղիային: Առաջին հասարակապետութեան գլխաւոր քաղաքն է Քլիմֆօնտայն, իսկ երկրորդին՝ Պրետորիա: Վերջինիս

մատ է գտնեում և հօհաննիսբորգ քաղաքը, որ ունի մօտ 100,000 բնակիչ:

Սֆրիկային գլջկնող կղջիները

Միւս մայր ցամաքների հետ համեմատած, Աֆրիկան շատ րիչ կղջիներ ունի: Դրանց մեծ մասը հրաբխային ծագում ունի և մայր ցամաքից բաւական հեռու է ընկած: Աֆրիկային պատկանող կղջիները, չնչին բացառութեամբ, կաղմում են եւրոպացիների գաղութները: Այդ կղջիները, բացառութեամբ Մագակասգարի, մանր կղջիներ են, սկզբներում իրեն նաւերի կայարաններ ունեին մեծ նշանակութիւն, որը յետոյ նսեմացաւ, երբ Սուէզի ջրանցքը բացւեց: Ներկայումս չոգենաւերի մեծ մասը անցնում է վերոյիշեալ ջրանցքով: Աֆրիկայի կղջիներից նշանաւոր են.

Ալլանդեան ովկիանոսում:

ա) Ազօրեան կղջիներ, Մառէլրա որ նշանաւոր է իւր գինով և Կանաչ հրուանդանի կղջիներ: Այս կղջիները պատկանում են փորթուգալացիներին:

բ) Կանարեան կղջիներ, որոնցից նշանաւոր է Ֆէրրօ կամ Ֆըրկաթեայ կղջին և Տեներիֆա. Ֆէրրօ կղջու վրայով է անցնում երկրագունդը բաժանում է գլխաւոր միջօրէականը, որով արեկեան և արեմտեան միմեանց հաւասար կիսագնդերի: Կանարեան կղջիները պատկանում են խոպանացիներին, որոնք Աֆրիկայի շուրջը պատող առաջին աղջն էին:

գ) Ս. Համբարձման և Ս. Հեղինէի կղջիներ, որոնք պատկանում են անգղիացիներին և նրանց եաւերի համար կայարաններ են: Այդ կղջիները անգղիական նաւերին մատակարում են քարածուխ և ուրիշ պաշարեղին:

Հնգկաց ովկիանոսում Աֆրիկային պատկանող կղջիներից յայտնի են:

ուն դ). Մադակասպար կղզին, որ իր մեծաթիվ եամբ աշխարհիս երրորդ կղզին է։ Ունի առանձնայատուկ բոյսեր և կենդանիներ(թռչող չներ, կիսակապիկներ, այ-այ ևայլն)։ Այդ կղզու արեելեան մասի բնակիչները պատկանում են մալայեան ցեղին։ Մադակասպարը նշանաւոր է բրնձով, եղիպատճորն ու քաղաքն է Տանանարիվօ, որ անձ առեաւոր ունի։ 1869 թժ սողովուրդը բնդաւնեց քրիստոնէութիւնը,

Մադակասպար կղզին պատկանում է Փրանսիայի հասարակապետութեանը։

ե). Մասկարեան կղզիներ, որոնք գտնւում են Մադակասպարի արևելեան կողմում։ Դրանցից Ռոօղրիգեց և շաքարեղինով հարուստ Մաւրիկիա կղզիները պատկանում են անդիայիներին, իսկ շաքարով հարուստ Բուրջոն կղզին Փրանսիայիներին։

դ). Սակոսորա կղզին պատկանում է անդիայիներին։ Եփրիկային պատկանող կղզիներից նրանք, որոնք Եւրոպայից մօտ են, ունին շատ առողջարար կլիմա, օր. Մադեյրա կղզին։ Այդ կղզիներում մեծ մասամբ ապրում են փորթուզալացիներ և խսպանացիներ, որոնք պարապում են պարտիզապանութեամբ և զինեզործութեամբ։ Հեղկաց ովկիանոսում գտնւող կղզիները մեծ մասամբ յայտնի են շաքարեղինով։

Ա Ս Ի Ա

ԱՍԻԱՑԻ ԴԻՐՔՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Ասիան ամենամեծ մայր ցամարն է. Նա Եւրոպայից $4\frac{1}{2}$ անգամ մեծ է։ Ասիաի տարածութիւնը արևմուտքից դէպի արեելք մօտ 11,000 վերստ է, իսկ հիստիսից դէպի հարաւ 8500 վերստ։

Ասիար գտնւում է հիստիսային կիսագնդում և նրա ամենահարաւային ծայրը հազիւ է հասնում հասարակածին։

Նրա ամենահարաւային ծայրը կազմում է Բուրու հըրուանգանը (1° հիստիսային լայնութեան տակ), իսկ հարաւարեելեան ծայրը կազմում է Հարաւ-արեելեան կամ Զելիսիին հրուանգանը (78° հիստիսային լայնութեան տակ)։ Ամենաարեմեան ծայրը կազմում է Բաքա հրուանգանը (44° արեելեան երկայնութեան տակ), որ հասնում է Դեմնելվա հրուանգանին 208° արեելեան երկայնութեան)։

Ասիա մայր ցամարի ամբողջ մակերեսովի տարածութիւնն է 810,000 քառ. մղոն։

Ասիան շրջապատուած է հիստիսային Յուրտ կամ Սառուցեալ, Մեծ կամ Խաղաղ, Հնդկաց և Ատլանտեան (Միջերկրական, Մեծ կամ Պօնգական ծովեր) ովկիանոսներով։ Եւրոպան, որ արեմեան կողմում կպած է Ասիային, կարծես նրա մի մեծ թերակղզին է։ Եփրիկայի հետ նա միացած է Առևէզի պարանոցով։ Աւտորալիսայի հետ Ասիան գրեթէ միանում է մեծ

կղզիների մի արշիակելագով, իսկ չիւսիսային Ամերիկայից նա բաժանուում է Բեհընդեան նեղուցով, որ մօտ 90 վերստ լայնութիւն ունի և ձեռը բոլորովին ուառչում է։ Ասիա մայր ցամացը ամենից շատ հեռացած է չարաւային Ամերիկայից։

Ասիային շրջապատող ծովերը և ովկիանոսները շատ են կտրատում նրա ափերը և ձեռցնում թերակղիներ, կղզիներ հրուանդաններ ևայն։ Ամենամեծ թերակղիները գտնուում են նրա հարաւային կողմում, իսկ հարաւ-արենելեան կողմում գտնուզ կղզիները շատ հեռու չեն գտնուում մայր ցամարից և բաժանած են նրանից նեղուցներով և ջրանցքներով։

Ասիայի արենելեան կողմում կղզիների և մայր ցամարի մէջ գտնուում են մի շարք ծովեր։

Ասիան գտնուում է հիւսիսային կիսագնդում և անցնուում է ցուրտ կամ սառուցեալ, տաք կամ այրեցեալ և բարեխսուն գոտիներով։ Մայր ցամարի $\frac{3}{4}$ մասը գտնուում է բարեխսուն գոտիում $\frac{1}{8}$ -կանը ցուրտ կամ սառուցեալ, իսկ մնացածն տաք գոտիում։

Որովհետեւ Ասիան գտնուում է Եւրոպայի արենելեան կողմում, դրա համար յաճախ կոշւում է Արեւելք, այն ինչ Եւրոպան Արեւմուտք։

ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հինգ մայր ցամաքներից Ասիան ամենից շատ մօտ է Եւրոպային։ Ասիայի հարաւ-արենելեան կողմում ամենահին ժամանակներում գոյութիւն ունէին մի քանի մեծ տէրութիւններ և ապրում էին մի շարք քաղաքակրթուած ժողովուրդներ։ Չնայելով այդ հանգամանքին, Եւրոպացիները ուշ են ծանօթացել Ասիայի հետ։ Մինչև Քրիստոսի ծնունդը Եւրոպացիներից ծանօթացել էին գրեթէ միայն արեմտեան Ասիային, որ

ակզրում գտնուում էր յոյների և ապա հռովմայեցիների իշխանութեան տակ։ Եյդ ազգերը առետրական յարաբերութիւն ունէին ոչ միայն արեմտեան, այլ և հարաւային ու արենելեան Ասիայի հետ։ 13-րդ դարից Ասիայի մասին մեղ տեղեկութիւններ է տալիս իտալացինշանաւոր ճանապարհորդ Մարկօ-Պօլօն։ Վերջինս երկար ժամանակ տպրել է 2ինաստանում և ապա վերադաբել է Եւրոպա։ 15-րդ դարում փորթուգալացի նշանաւոր ծովագնաց Վասկօ-դէ-Փաման գտաւ Աֆրիկայի չորս կողմով ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան, իսկ 16-րդ դարում իսպանիացի ծովագնաց Մագելլանը հասաւ Ասիա արենելեան կողմից։ Եյդ օրուանից Եւրոպացիները սկսեցին աւելի շատ հետաքրքրւել Ասիայով և մի շարք գաղութներ հիմնեցին Հնդկաստանում և Հնդկաց արշիպելազի կղզիների վրայ։ Ասիայում առաջին կաղութները այն ժամանակ հիմնեցին փորթուգալացիները և իսպանացիները։ Սակայն այդ երկու ազգերը շուտով յաղթուեցին հոլանդացիներից և անգլիացիներից և յանձնեցին նրանց իրանց գաղութների մեծ մասը։

Եւրոպական ազգերը միայն այն ժամանակ լաւ ծանօթացան Ասիայի հետ, երբ նրա նշանաւոր մասերի հետ սկսեցին առետրական յարաբերութեան մէջ մտնել Եւրոպացի և ուսւաճանապարհորդներից մի քանիսի չնորհիւ Ասիայի անծանօթ մասերը բաւականին լաւ ուսումնասիրւել են։

ԱՍԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ասիայի մակերեսոյթի կազմութիւնը բազմազան է։ Այնտեղ են գտնուում աշխալհիս ամենաբարձր սարերը և սարահարթերը և ամենալայն տափաստանները, որոնք շատ տեղերում ծովի մակերեսոյթից էլ ցածր են։ Ասիա մայր ցամաքի $\frac{3}{4}$ -կան մասը բարձրաւանդակ է իսկ $\frac{1}{4}$ -ը հարթավայր։

Բարձրաւանդակ կազմում է գլխաւորապէս Ասիայի միջին մասը, իսկ հարթավայրեր աւելի նրա ծայրերը:

Ասիայի գրեթէ կենդրօնում գտնուում է լեռնոտ երկիր Պամիրը: Նրա արևելեան կողմում ընկած է Տիբէթի սարահարթը, հիւսիս-արևելեան կողմում Գօջի կամ Ջամօ անապատը իսկ արևմտեան կողմում Իրանը: Այդ երկրների մօտովն է տարածում Ասիայի ամենաբարձր Հիմալայեան լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթն է Հվերեստ: Վերջինս աշխարհիո ամենաբարձր գագաթն է, որի բարձրութիւնը ծովի մակերեսովից հասնում է $8\frac{1}{2}$ վերստի: Այդ լեռնաշղթայից դէպի արևելք տարածում է Կուէն-Լուն լեռնաշղթան, դէպի հիւսիս արեւելք՝ Ցեան-շան, դէպի արևմուտք Հինդուկուց և ուրիշ լեռնաշղթաներ:

Երեմտեան Ասիայում միւս բարձրաւանդակներից նշանաւոր է լեռնոտ Հայաստանը, որի ամենաբարձր սարը Մեծ Մասիսն է (17,000 ոտնաշափ բարձր ծովի մակերեսովից): Հայաստանից դէպի արևմուտք ձգւում է Փոքր-Ասիայի կամ Անատոլիայի բարձրաւանդակը, իսկ դէպի արեւելք՝ Իրանականը: Այնտեղի լեռնաշղթաներից նշանաւոր են Տաւրոս և Անտիտաւրոս, Կովկասեան և Պարսկական լեռնաշղթաները: Երելեան Ասիայի սարահարթները և լեռնաշղթաները աւելի ցածր են, քան թէ արևմտեանը: Բայց գրանցից Ասիայի միւս լեռնաշղթաներից յայտնի են նաև Խինհան, Ալտայեան, Սայանեան, Եարլոնովեան, Ստանովեան, Հնդկաչինի լեռները եայլն:

Ասիայի լեռնաշղթաների մեծ մասը ձգւում է արևմուտքից դէպի արևելք և կարծես զրանք միմեանց շարունակութիւնն են կազմում: Միայն Խազակ ովկիանոսի ափերի մօտով տարածող լեռնաշղթաները ձգուած են հիւսիսից դէպի հարաւ:

Ասիայի ցածր հարթութիւնները գտնուում են նրա ծայ-

րերում, իսկ դրանցից ամենամեծը տարածում է հիւսիս արեմուտքում և կոչւում է Արեւմտեան Սիրիական: Երկրորդ ցածր հարթութիւնն է Արալ-Ղասպիականը: Այդ երկու ցածր հարթութիւնները շարունակում են նաև Եւրոպայում և կազմում են Ռուսական ընդարձակ ցածր հարթութիւնը, որ Միրիբականից բաժանւում է Ուրալեան լեռնաշղթայով: Նշանաւոր են նաև Միջազգետքի հարթութիւնը Արաբիայի և Պարսկական լեռների մէջ, Հնդկականը՝ Հիմալայեան լեռնաշղթայի և Դեկանի սարահարթի մէջ և Զինականը՝ Մանջուրիայի և Հարաւային-Զինական լեռնոտ երկրի միջեւ:

Ասիայի արևելեան և հարաւ-արևելեան կողմում գտնուող ցամաքային կղզիների վերայ էլ լեռները նոյն ուղղութեամբ են տարածւած, ինչպէս որ մայր ցամաքի միւնոյն կողմերում: Այդ լեռների մեծ մասը հրաբույայնն է, որոնցից նշանաւոր են Կամչատկայի թերակղզու և Զոնդեան կղզիների հրաբուզիները:

Ա Ս Ի Ը Յ Ի Ո Ռ Ո Ւ Գ Ո Ւ Ի Մ Ը

Ոռոգման տեսակետից Ասիան բաւական աջող պայմանների մէջ է գտնուում: Նրա ամենամեծ և ջրառատ գետերը իրանց սկիզբն են առնում մայր ցամաքի կենդրունական լեռնաշղթաներից և հոսում են դէպի ովկիանոսները: Գետերից մի քանիսը գեռ չհասած ովկիանոսին, թափուում են մայր ցամաքի լեռներում գտնուող լճերի մէջ: Լճերի մէջ թափուող գետերը կոչւում են ցամաքային, իսկ ովկիանոսների մէջ թափուողները՝ ովկիանոսային գետեր:

Ասիայի գետերի մեծ մասը երկար և ջրառատ է, չնայլով որ այնպիսի ջրառատ գետեր, ինչպէս են Ամազոնը Հարաւային Ամերիկայում և Կոնկոն Ափրիկայում, այնտեղ

չկան։ Ասիայի ամենամեծ և ջրառատ գետերը գտնւում են մայր ցամաքի արեելեան կողմում, որովհետև դրանք իրանց սկիզբն են առնում բարձր և մշտական ձիւնով պատաժ լեռներից։ Գիտերից նշանաւոր են. Օք գետը՝ Իրդիշ գտակով, Ենիսէյ, Հենա, Ամուր, Հօանգօ, Ենանցէ-կեանգ (Ասիայի ամենաերկար և ջրառատ գետը), Կամրջա, Բրահմակուտրա, Գանգէս, Խնդոս, Սիր-Դարիա և Ամուր-Դարիա գետերը։

Երեմտեան Ասիայի գետերը ոչ այնքան երկար են և ոչ էլ այնքան ջրառատ։ Գրանցից նշանաւոր են Հայաստանում՝ Կուր և Երախ, Միջազգետքում՝ Տիգրիս և Եփրատ գետերը, որոնք իրանց սկզբն են առնում Հայաստանի լիոներից։

Ասիան լճերով ընդհանրապէս հարուստ է։ Նրա ամենամեծ լճերը աղի ջուր ունին, որ կապէց կամ Վրկանայ և Արալի լճերը։ Նշանաւոր է նաև Բայկալի լիճը, որ աշխարհի ամենախոր լիճն է։ Ասիայի լճերից շատերը մի ժամանակ մեծ մեծ ծովեր են եղել։

Ա Ս Ի Ա Յ Ի Կ Լ Ի Մ Ա Ն

Ասիայի կլիման բազմազան է։ Մայր ցամաքի այն մասը, որ գտնւում է ցուրտ և բարեխառն գօտիներում, ունի ընդհանրապէս ցուրտ կլիմա։ Բոլորովին տարբեր կլիմա ունի ընդհակառակը Ասիայի հարաւային մասը, մանաւանդ հարաւային երեք մեծ թերակղիները, որոնք գտնւում են տաք կամ այրեցնեալ գօտիում։ Այնտեղ կլիման շատ տաք է։

Սակայն իր կլիմայով և քնութեամբ Ասիան բաժանվում է հինգ՝ միմեանցից տարբեր մասերի. ա) հիւսիսային Ասիա, բ) կենդրոնական Ասիա, գ) արևմտեան Ասիա, որ հասկացնում է Պամիրից դէպի արևմուտք գտնւող բոլոր երկրները, դ) հարաւային Ասիա և ե) արեելեան Ասիա։

Հիւսիսային Ասիան ունի ցուրտ և բոլորովին ցամաքային կլիմա, որովհետև Ասիայի այդ մասը, որ բռնում է ամբողջ Սիբիրը, հիւսիսային կողմից շարունակ ենթարկւած է հիւսիսային ցուրտ կամ սառուցեալ ովկիանոսից փշող ցուրտ և չոր քամիների ազգեցութեան, իսկ միւս կողմից բարձր լեռնաշղթաներով շրջապատուած լինելով, դրկուած է տաք բամիների ազգեցութիւնից։ Կենդրոնական Ասիան, որ ծովի մակերեսոյթից բաւական բարձր է, հիւսիսային Ասիայից աւելի շոր ու ցամաք կլիմա ունի։ Այնտեղ լինում է շատ ցուրտ և դաժան ձմեռ։

Արեմտեան Ասիայի կլիման բաւականնման է կենդրոնականի կլիմային։ Արեմտեան Ասիայի հարաւային մասը ընդհանրապէս տաք կլիմա ունի, իսկ հիւսիսային մասը չոք կլիմա։

Հարաւային Ասիան, որի մէջ մտնում են Հնդկաստանը, Հնդկաշինը և Ասիայի հարաւարեելեան կողմում գտնող բոլոր կղզիները, ունի խոնաւ և տաք կլիմա։ Այդ ամբողջ մասի վրայով փշում է մուսաօնը, ձմեռ մայր ցամաքից դէպի սի վրայով փշում է մուսաօնը, ձմեռ մայր ցամաքից դէպի սի վրայով փշում է ովկիանոսից փշող մուսաօնը և յի խոնաւութիւնը բերում է ովկիանոսից փշող մուսաօնը և առաջացնում։

Արեելեան Ասիան, որ Մեծ կամ Խաղաղ ովկիանոսի ափերից տարածւում է մինչև Ստանովիեան լեռները և որի մէջ մտնում են նաև Ասիայի արեելեան կղզիները, ունի տաք ամառ և բաւական դաժան ձմեռ։

ԵՍԻԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Որովհետև Ասիան իր մակերեսոյթի կազմութեամբ, ոռոգմամբ և կլիմայով բազմազան է, դորա համար էլ ունի բազմազան բուսականութիւն։ Բոյսերի բազմատեսակունակ բազմազան բուսականութիւն։

թեամբ Ասիան միայն Ամերիկայից յետ է մնում, իսկ օդ-
տակար բոյսերով ամենահարուստ մայր ցամաքն է։ Ասիան
կուլտուրական բոյսերի մեծամասնութեան հայրենիքն է, որ-
տեղից դրանք աւելի ուշ ժամանակներում տարածւել են
միւս մայր ցամաքները։

Ասիայում ամենահարուստ և ամենաճռիխ բուսականու-
թիւն ունին Հնդկաստան և Հնդկաչին թերակղզիները և Հնդ-
կական արշիպելագը, որոնք գտնւում են տաք գօտիում և լաւ
ոռոգւում են։ Այնտեղ կան կոկոսի բարձր արմաւենիներ, բա-
նանենի, հնդկեղեգն, բրինձ, վիթխարի բամիան հայն։
Չինաստանը և Ճապոնիան նոյնպէս ենթարկւած են
մուսոն հոգմերի ազգեցութեան, բայց որովհետեւ այդ երկու
երկրները գտնւում են տաք-բարեխառն գօտիում, ունին եր-
կու երկրների բուսականութիւնն էլ օր բամբուկ, կաղնի, եղի-
նի, արմաւ ևայն։ Այդ երկու երկրներն են կազմում թէյի
ծառի և ճապոնի տերևատի կամ կամելեակի հայրենիքը։ Արե-
մտեան Ասիայում բննում է խաղող, դեղձ, ծիրան ևայն։ Մի-
ջին Ասիան աննախանձելի բուսականութիւն ունի, իսկ հիւ-
սիսային ցուրտ կամ սառուցեալ ովկիանոսի ափերը մեծ մա-
սամբ մամուապատ են։

ԱՍԻԱՅԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԸ

Ասիան իր կենդանիների բազմազանութեամբ հինգ մայր
ցամաքներից առաջինն է։ Նա համարւում է զքեթէ բո-
լոր ընտանի կենդանիների հայրենիքը։ Ասիայում կարե-
լի է պատահել բեեռային գօտու, եւրոպական, աֆրիկական
և աւստրալիական կենդանիներին։ Հիւսիսային Ասիայում, որ
մեծ մասամբ մամուռով է ծածկւած, ասլրում է հիւսիսային
եղջերուն, որ այնտեղի բնակիչների համար ձիու գեր է կա-
տարում, շուն, արջ, կղաքիս, ջրշուն և այլն։ Հիւսիսային Աս-

իայի գետերը հարուստ են զանազան տեսակ ձկներով, իսկ
անտառները և ճաճիճները—թռչուններով։ Միջին Ասիայի
ընդարձակ տարածութիւնը վայրի այծի և ոչխարի, ձիու,
էշի և երկսապատանի ուղտի հայրենիքն է։ ձոխ և հարուստ
բուսականութիւն ունեցող հարաւային Ասիան նշանաւոր է
նաև իր կենդանիներով, օր կապիկ, վագր, առիծ, փիդ
և այլն։ թռչուններից նշանաւոր են ֆասիան, սիրամարգ,
թռութակ և այլն։

ԱՍԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Ամրող աշխարհիս ազգաբնակութեան կէսից աւելին
Ասիայումն է ապրում։ Նրա բնակիչների թիւը մօտ 840 մի-
լիոնն է։ Քրանց ամենամեծ մասը ապրում է հարաւ-արեել-
եան Ասիայում։

Ասիայի բնակիչները պատկանում են մարդկային երեք՝
կովկասեան կամ սիծերկրական, մոնղոլեան և մալայեան
ցեղերին։

Կովկասեան կամ սպիտակ ցեղը կենդրուացած է արե-
մտեան և հարաւ-արեմտեան Ասիայում, մոնղոլեանը՝ հիւսիս-
յին և արեելեան Ասիայում, իսկ մալայեանը՝ Մալակա թերա-
կղզու և Հնդկական կղզիների վրա։

Ասիայի ազգաբնակութեան մեծ մասը (500 միլ.) պատ-
կանում է մոնղոլեան կամ դեղին, 300 միլիոնը սպիտակ և
40 միլիոնը մալայեան կամ սև ցեղերին։ Մոնղոլեան ազգե-
րից նշանաւոր են. մոնղոլները, թիւքքերը, կալմիկները, կիր-
կիդները, չինացիները, ճապոնացիները, տիբէտցիները, Հնդ-
կաչին թերակղզու բնակիչները և այլն։

Սպիտակ կամ կովկասեան ցեղին պատկանող ազգերից
նշանաւոր են հետևեանները. պարսիկները, հայերը, արար-
աները, հրէաները և այլն։

Մալայեան կամ գեղին ցեղին ամենից առաջ դատկանում են դրավիտները, որոնք ապրում են Հնդկաստան թերակղու հարաւալին կողմում:

Ասիան ոչ միայն ամենաբազմամարդ մայր ցամաքն է, այլ և ամենահինը իր քաղաքակրթութեամբ։ Ամենից առաջ մարդիկ այդ մայր ցամաքում սովորեցին նստակեաց կեանք վարել, պարապեցին երկրագործութեամբ և հասան բարձր քաղաքակրթութեան։

Իրանց քաղաքակրթութեամբ շատ յայտնի դարձան այն ազգերը, որոնք ապրում էին 2ինաստանում, Հնդկաստանում Փոքր-Ասիայում, Միջազետքում և այլն։ Այդ ազգերը գեռ Քրիստոսից շատ դարեր առաջ ունէին իրանց տէրութիւնները, գիտութիւնները, գեղարուեստները և գրականութիւնը։

Ընդհակառակը այն ազգերը, որոնք ապրում էին կենտրոնական և հարաւ-արևմտեան Ասիայում, մինչև այժմ էլ թափառական կեանք են վարում և երբէք բարձր քաղաքակրթութեան չեն հասել։ Եւ վերջապէս այն ազգերը, որոնք ապրում են Ասիայի հիւսիս-արեելեան կողմում, ամենայետամնաց ժողովուրդներն են։

Ասիալումն են ծնւել և զարգացել մարդկութեան բոլոր նշանաւոր կրօնները, բրահմական, բուդայական, մովսիսական, քրիստոնէական և մահմելուկան կրօնները։ Ամենից շատ տարածւած կրօնը բուդայականութիւնն է, որը դաւանում են կենդրոնական և արեելեան Ասիայի ազգերը, նրանից յետոք գալիս է բրահմականութիւնը, որ դաւանում են Հնդկաստանի ընակիշները, մահմելականը՝ արևմտեան Ասիայի և Մալայեան արշիպելագի կղզիների բնակիչները, իսկ քրիստոնէութիւնը մեծ մասամբ տարածւած է Ասիայի այն մասերում, որտեղ ապրում են եւրոպացիները։

Ասիայի անկախ տէրութիւններից նշանաւոր են. Զի-

նաստան, ծապոնիա, Թիւրքիա կամ Տամկաստան (Ասիական և Եւրոպական Տամկաստան) և Պարսկաստան, Եւրոպական տէրութիւններից միայն Ռուսաստանը, Անգղիան, Հոլլանդիան և Փրանսիան ունին մեծ կալածներ։ Ասիայում։

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՑԱՆ

Ասիական Տաճկաստանի ամբողջ տարածութիւնը 1,7 միլիոն քառակուսի քիլոմետր է, որի վրայ ապրում են 17 միլիոն բնակիչ։ Ասիական Թիւրքիան կամ Տաճկաստանը ըլրածապատած է Միջերկրական, Արշիպելագի, Սև կամ Պոնդական ծովերով, Կավկասով, Խանով, Պարսից ծոցով և Արարիա թերակղողով։

Ամբողջ Թիւրքիան կամ Տաճկաստանը գտնուում է տաքրարեխառն գոտիում, ինչպէս հիւսիսային Աֆրիկան։ Նրա ամբողջ տարածութեան մեծ մասը լեռնոտ երկրներից է բաղկացած։ Ասիական Տաճկաստանի մէջ մտնում են հիտեեալ երկրները։

ա) Հայկական բարձրատանիդակի հարաւ-արևմտեան և ամենաբարձր մասը, որտեղ գտնուում է Վանայ լիճը կամ Բզմունեաց ծովը և որտեղից սկիզբն են առնում Եփրատ, Տիգրիս և Երասխ գետերը։ Հայտատանի այն մասը, որ գտնուում է Ասիական Տաճկաստանում, կոչւում է Տաճկա-Հայաստան, որի վլխաւոր կենդրոնը Կարին կամ Էրզրում քաղաքն է, որ նշանաւոր բերդ է և միենոյն ժամանակ առետրական քաղաք։ Բզմունեաց ծովից են անցնում այն կարաւանները, որոնք Սև երկրումի վրայով են անցնում այն կարաւանները. որոնք Սև ծովի նաւահանգիստներից ապրանքներ են ներմուծում Պարսկաստան, Երվանդ քաղաքումն է գտնուում Հայոց Սահասարեան կաստան, Թիւրքիական կառավարութեան չայերի դէմ սարգարժարանը, Թիւրքիական կառավարութեան չայերի դէմ սար-

քած հալածանքների շնորհիւ այնտեղի չայերի գրութիւնը հետզհետէ վատթարանում է:

2) Ասիական Տաճկաստանի կամ Թիւրքիայի երկրորդ մասը կազմում է Փոքր-Ասիա կամ Անատոլիա թերակզբին, որ նոյնպէս մի բարձրաւանդակ է և շրջապատուած է Պոնդական, Տաւրոսի և Անտիտաւրոսի լեռնաշղթաներով։ Այդ լեռները ձգւում են արևմուտքից դէպի արևելք։ Փոքր-Ասիայի արևմտեան ափը բաղկացած է մի քանի մանր թերակղզիներից, ծոցերից և խորշերից, որոնցից ոչ հեռու գտնւում են մի շարք կղզիներ (Սամսոն, Հոռոմ և այլն), որոնք Անատոլիան միացնում են Եւրոպայի հետ։ Փոքր Ասիայի ափերը լաւ ոռոգւած, պտղաւէտ և անտառներով ծածկուած են։ Ծառերից նշանաւոր են եղենին և կաղնին։ Նրա կլիման խիստ է, մանաւանդ ձմեռը, երբ շարունակ ձիւն է գալիս։ Փոքր Ասիայի լեռնաշղթաների շարունակութիւնը մտնում է Տաճկա-Հայաստան, որից սկիզբն են առնում Տիգրիս և Եփրատ գետերը։ Այդ լեռները ունին բաւականաշատ հանգած հրաբուխներ։

Հին ժամանակ Փոքր-Ասիան կամ Անատոլիան աւելի խիտ ազգաբնակութիւն ունէր և աւելի լաւ էր մշակուած, քան այժմ։ Այդ երկիրը մի ժամանակ շատ ազգերի և ժողովուրդների ժամանակաւոր հանգստութեան գլխաւոր կամուրջն է կազմել։ Դրա համար էլ այնտեղ մինչև այսօր էլ պահպանուել են շատ ազգերի պատմական յիշատակները։ Ներկայումս Փոքր-Ասիա կամ Անատոլիա թերակղզու ազգաբնակութիւնը բաղկացած է թիւրքերից կամ տաճիներից (9 միլիոն), յոյներից, հայերից ($1\frac{1}{2}$ միլ.), քրդերից, ասորիներից, հրէաներից ևայլն։

Թիւրքերը կրօնով մահմեդական են, սիւնի դաւանութեան, և պարապում են հոգագործութեամբ ու այզեզործութեամբ։ Նրանց մէջ գեռ ևս չէ զարդացել իսկական արդիւնագործութիւնը և զործ են ածում գլխաւորապէս Եւրոպական գործարանների ապրանքները, որոնք ներմուծւում են

այնտեղ գլխաւորապէս Եւրոպացիների, յոյների և հայերի շնորհիւ։ Փոքր Ասիայի բնակիչների հաղորդակցութիւնը կ'լաւանալ այն ժամանակ, երբ այնտեղ կ'շինուի Բաղդապէտ մեծ երկաթուղին, որ Կ. Պոլիսը պէտք է միացնի Պարսից ծոցի Կուվէյտ նաւահանգստի հետ։ Այդ երկաթուղու շինութեան նախաձեռնութիւնը պատկանում է գերմանացիներին։

Փոքր Ասիայի յոյները յաւնադաւան են, պարապում են վաճառականութեամբ և գինեգործութեամբ։

Հայերը պարապում են հողագործութեամբ, արհեստներով և մասամբ էլ վաճառականութեամբ։ Առ հասարակ ամբողջ հայ ազգի մեծ մասը հողագործ է։

Փոքր-Ասիայի գլխաւոր բաղարներն են. Սկիւտարի, որ կազմում է ամբողջ Տաճկաստանի կամ Թիւրքիայի մայրագաղք Կ. Պոլիսի արուարձանը; Մինոպ, տոկտրական և նաւահանգիստ քաղաք է; Տրապիզոն, ծովափնեայ տոկտրական քաղաք է, որ տեղից սկսւում է դէպի Պարսկաստան տանօղ կարաւանի ճանապարհը; Այնտեղ ապրում են բաւականաշատ հայեր։ Բրուսա, տոկտրական քաղաք է. Փոքր-Ասիայի ամենահեռաւոր կենդրոնը կազմում է Զմիւլոնիա քաղմամարդ (200000) և առետրական քաղաքը, որտեղ պարում են բաւականաշատ հայեր։ Երկան քաղաքը, որտեղ պարում է Անգօրան, որ յայտնի է իր շալերով։

3) Փոքր-Ասիայի երրորդ մասը կազմում է Սիրիական բարձրաւանդակը, որի վրայով տարածւում են Լիբանան և Անտիլիբանան լեռները։ Այդ բարձրաւանդակի վրայ է գլուխուում և չեղուոն սարը, որից սկիզբն է առնում Պաղէստինի Յորդանան գետը և կազմում է Գենեսարէթի լիճը և Մեծի Յորդանան գետը և կազմում է Գենեսարէթի լիճը և Մեծաւալ ծովը։ Յորդանան գետի ամբողջ հովիտը մի ժամանակ խիտ ազգաբնակութիւն ունէր և շատ լաւ էր մշակուած, իսկ այժմ այդ հովիտի արեւելեան մասը կազմում է Սեւրական անապատը։ Սիրիայի կամ Ասորիքի ազգաբնակութիւնական

թեան գլխաւոր տարրը կազմում են արաբները, հրէաները, թիւրքերը, հայերը և այլն: Նրա գլխաւոր քաղաքն է Հալէպէս որ առևտրական կենդրն է: Երկրորդ քաղաքն է Բէյրութը, որ երկաթուղիով միացած է Դամասկոս կամ Ջամ քաղաքի հետ:

Սիրիայի մի մասն է կազմում Պաղէստինը, որի մայրաքարտն է Երւասաղէմ, որ միացած է իր նաւահանդիտ Նաֆֆայի կամ Յուպէջի հետ Երկաթուղիով: Ինչպէս Երաւաղէմը՝ այնպէս էլ Նազարէթ և Բեթղեհէմ փոքրիկ քաղաքները բոլոր քրիստոնիաների համար սրբազն կենդրոններ են:

Ասիական Տաճկաստանի շրորդ մասն է կազմում Տիգրիս և Եփրատ գետերի մէջ գտնւող Միջագէտքը, որ միացած հարթութիւն է: Վերոյիշեալ երկու գետերը, որոնք իրանց սկիզբն են տանում Հայաստանի լեռներից, մինչև Պարսից ծոցը թափւելը միանում են միմեանց հետ, և այդ միացման տեղը կոչւում է Շատրէլ-արար: Եյդ գետերը Միջագետք համար նոյն դերն են կատարում, ինչ որ Նեղոսը Եգիպտոսի համար:

Միջագետքի բնակիչները բազկացած են Արաբներից, Թիւրքերից, Քրդերից, Հայերից և այլն:

Հին ժամանակ Միջագետքը ամենախիտ տղաքարնակութիւնն ունէր և նրա հողը օրինակելի կերպով մշակուած էր: Այստեղ էին գտնւում Բաբելոնստանի և Ասորեստանի նշանաւոր տէրութիւնները, որոնց հսկատակուում էին բազմաթիւ ազգեր: Սակայն այժմ այդ երկիրը ճահճային և վատառողջ է և ունի շատ նօսր ազգաբնակութիւն:

Միջագետքը ներկայում էլ առևտրական նշանակութիւն ունի, որովհետեւ Հնդկաստանից և Հարաւալին Պարսկաստանից Եւրոպա զնալու համար այդտեղով ամենակարճ ճանապարհն է: Եյդ երկրի նշանակութիւնը աւելի ևս կրած ճանապարհ այն ժամանակ, երբ կը վերջանայ Բաղդադի Երկաթուղու շինութիւնը:

Միջագետքի բազարներից նշանաւոր են Մօսուլ, որի մոտ գտնւում են չին Ասորեստանի մայրաքաղաք Նինուէի աւերակները

Բաղդադ, որի մօտ գտնւում են չին Բաբելոնստանի Բաբելոն մայրաքաղաքի աւերակները և Բասրա, որ առևտուր ունի Հնդկաստանի և Պարսկաստանի հետ:

Ասիական Տաճկաստանի հինգերորդ մասը կազմում է Քիւրդիստանը, որ մի լեռնոտ երկիր է: Այնտեղ ապրում են աւաղակաբարոյ և Թափառական Քըղերը, որոնք կառավարուում են իրանց խաներով: Եյդ քրդերը անունով միայն ճանաշում են Տաճկաստանի Սուլթանի իշխանութիւնը: Քիւրդիստանի գլխաւոր քաղաքն է Դիարբէքիր, որի բնակիչները պարապուում են կաշեգործութեամբ:

Ա Ր Ա Բ Ի Ա

Արաբիան, որ աշխարհիս ամենամեծ թերակղին է, ներկայացնում է մի բարձրաւանդակ, որ իր բնութեամբ չիշեցնում է Աֆրիկայի Սահարա անապատը: Նրա ամբողջ տարածութիւնը 3,100 000 քառ. կիլոմետր է, որի վրայ ապարագուում է տաք գօտիում և ներկայացնում է մի աւազոտ գտնուում է տաք գօտիում և ներկայացնում է մի աւազոտ անապատ: Գրա վրայով շեն հսուում գետեր, միայն կան մի քանի առուակներ, որոնք անձնեների ժամանակ ջրերով լցուում են: Լեռնոտ են միայն Արաբիայի մի քանի ափերը և կենդրոնական փոքր մասը:

Արաբիա թերակղին իր աւագոտ և քարքարոտ մակերևոյթով և ջրազրկութեամբ շատ նման է: Սարահային: Եյդ երկու անապատները միացած են միմեանց հետ Սուէզի պատերի առաջանակութեամբ միացած են միայն կամ օաղիսներ: Բոյսերից քանոցով և ունին գըեթէ միատեսակ օաղիսներ:

նշանաւոր է ֆիւնիկեան արմաւենին, իսկ կենդանիներից առիւծը, միասապատանի ուղարք և այլն:

Արարիայի ամենալաւ մասերը կազմում են Հեջաս և Եմէն կամ Երջանիկ Արարիան, որոնք բռնում են Կարմիր ծովի ափերը: Թերակղու այդ մասերումն են ապրում նստակեաց արարները, իսկ մնացած մեծ մասը թափառական կեանք են վարում Արարիայի գանազան մասերում:

Արարիայի կենդրօնական բարձր մասը, որ կոչում է Նեջէտ, ունիշատ օաղիսներ, Այդ մասը նշանաւոր է իր ձիով, որ կոչում է արաբական ձի:

Արարիայի աղգաբնակութիւնը զլխաւորապէս բաղկացած է արարներից, Այդ թերակղոյն համարում է աշխարհիս բոլոր մահմեղականների սրբազնն երկիրը, որովհետեւ այնտեղ է ծնւել և ապրել Մահմեղը՝ մահմեղական կրօնի հիմնադիրը և այնտեղից է այդ կրօնը տարածւել աշխարհիս գանազան մատերը: Բացի արարներից այնտեղ ապրում են նաև բազմաթիւ թիւրքեր, հրէաներ, հնդիկներ, նեղրեր և այլն: Արարների մեծ մասը թափառական բեղուիններ են, որոնք ապրում են վրանների տակ և ընդհանրապէս հիւրասէր, աղնիւ և քաղաքավարի մարդիկ են, չնայելով որ նրանք շատ անգում յարձակում են իրանց երկրով անցնող կարաւանների վրայ, նրանց կողոպտելու նպատակով: Որովհետեւ արարացիները դրսի աշխարհից կտրւած են իրանց անապատների և անյարմար ծովերի շնորհիւ, դրա համար էլ նրանք դարերի ընթացքում չեն փոխել իրանց նախկին կենցազավարութեան ձեերը:

Արարները բաժանուում են բազմաթիւ ցեղերի, որոնք կառավարում իրանց էմիրներով և չէյխերով: Արարիայի միայն ափերի և օաղիսների ընակիշները նստակեաց կեանք են վարում և պարապում են անտօնապահութեամբ, հողագործութեամբ և վաճառականութեամբ: Բացի Արարիայից

արարներ ապրում են նաև Սիրիայում, Միջազգետքում և հիւսային Աֆրիկայում: Նրանք բարձրահասակ, նիհար և զղոտմարդիկ են: Արարները ապրում են վրանների տակ, որոնք գործւած են բրդից և նեղրւած սկզբով: Նրանց սիրած և պահպանած կենդանիներն են. ուղարք, արաբական հոչակաւոր ձին, ոչխարք և այլն: Ուղարքից օգտուում են անապատում ճանապարհորդելու ժամանակ, իսկ իրանց ձիերով սովորաբար յարձակումներ են գործում կարաւանների վրայ: Միասապատանի ուղարք իւրաքանչիւր արաբի համար անհրաժեշտ կենդանի է: Արարները չէին կարող ապրել անապատում առանց ուղարքի և ֆիւնիկեան արմաւի:

Արարները մի շատ ընդունակ ժողովուրդ են: Մեզանից մի քանի գար առաջ նրանք ունեին մի քանի մեծ տէրութիւններ արևմտեան Ասիայում և հիւսիսային Աֆրիկայում, ամենաքաղաքակրթւած աղգերից մէկն էրն կազմում և ունէին հարուստ գրականութիւն: 7-րդ դարու սկզբում Արարիայում սկիզբն առաւ մահմեղական կրօնը, որի հիմնադիրը Մահմեղն էր: Այդ կրօնը այժմ տարածւած է ամբողջ արևմտեան, մասամբ էլ հարաւային Ասիայում և հիւսիսային ու արեելեան Աֆրիկայում: Մահմեղական կրօնի հիմքը կազմում է Պուրան կողւած բոլոր մահմեղականների սրբազն գիրքը:

Մահմեղականութիւնը բաժանւում է երկու զլխաւոր զաւանութիւնների կամ աղանդների. սիւնի և շիա գաւանութիւններ: Սիւննի դաւանութեան հետևող մահմեղականները ընդունում են ոչ միայն Ղուրանը, այլ և մի քանի օրէնքներ ու կանոններ, որոնք հաւաբւել են Մահմեղի մահից յետոյ, իսկ շիանները ճանաշում են միայն զուրանը: Արևմտեան Ասիայի մահմեղականներից շիա գաւանութեան պատկանում են պարսիկները, իսկ մնացած մահմեղականները սիւննիներ են:

Արարիայի զլխաւոր մասերից և քաղաքներից նշանաւոր են հետեւալները:

ա) Հեղազ, գլխաւոր քաղաքն է ՄԵԴԻՆԱ, որտեղ թաղուած է մահմեդական կրօնի հիմնագիր Մահմեդը: Երկրորդ քաղաքն է ՄԵԼԿԱ, որտեղ ծնուել է Մահմեդը: Այդ երկու քաղաքները աշխարհիս բոլոր մահմեդականների համար ամենայայտնի սրբավայրերն են, որոնք ամէն տարի դէպի իրանց են զրաւում հաղարաւոր մահմեդական ուխտաւորներ: ՄԵԼԿԱ քաղաքի նաւահանգիստն է ԶԻՂՂԱՆ, իսկ ՄԵԴԻՆԱյինը՝ ԵԱՆՁՈ:

բ) ԵՄԷՆ կամ ԵՐՃԱՆԻԼ Արաբիա, գլխաւոր քաղաքն է ՄՈԼԿԱ, որ նշանաւոր է իր հռչակաւոր սրճով:

Արաբիայի վերոյիշեալ երկու մասերը պատկանում են ԹԻՐՔԵՐԻՆ կամ տաճէկներին:

գ) Արաբիայում անզղիացիներին պատկանում են. Աղջն ամրոցը, որը կազմում է Բաբ-է-էլ-Մահմեդի նեղուցի մուտքը. այդ քաղաքը քարածուիսի կայարան է այն նաւերի համար, որոնք Եւրոպայից գնում են ՀԱՊԼԱՍՏԱՆ: Աղջնի մօտ է գտնուում և ՓԵՐԻՄ կղզին, որ նոյնպէս պատկանում է անզղիացիներին:

դ) Արաբական անկախ տէրութիւններից արեելեան կողմում նշանաւոր է Օման, որի գլխաւոր քաղաքն է ՄԱՍԼԱՏ: Այս քաղաքը ծաղկած առևտուր ունի Պարսկաստանի և ՀԱՊԼԱՍՏԱՆԻ հետ:

է) Արաբիայի անկախ տէրութիւններից մէկն է նաև ՆԵՋԻ, որի գլխաւոր քաղաքն է ՌԻՒԱՂ: Այստեղ ապրում են վահարիտեան արաբները, որոնք Մահմեդին չեն ընդունում իրեն կրօնի հիմնագիր:

Արաբիայում հետզհետէ զօրանում է անզղիացիների ազգեցութիւնը, մասաւանդ նրա հարաւ-արեմուտեան մասում:

Ի Ր Ա Ն

Հայաստանի հարաւ-արեելեան կողմում գտնուում է ԻՐԱ-ԱՅԻ բարձրաւանդակը: Նա Փոքր Ասիայից բաւական մեծ է և շրջապատւած է բարձր լեռնաշղթաներով, որոնք իրանց ճիւղաւորութիւնները տարածում են նաև բարձրաւանդակի ներքին մասերում: Լեռնաշղթաների այդ ճիւղաւորութիւնները մեծ մասամբ ձգում են հիւսիս-արեմուտքից դէպի հարաւ-արեելը:

Ամենանշանաւոր լեռնաշղթան կոչւում է Էլբրուս, որի ամենաբարձր գագաթն է հանգած հրաբուղիս ունեցող ԴԵՄԱ-ՎՈՆԴԸ (5 վերստ):

Իրանի բարձրաւանդակի մեծ մասը ներկայացնում է աւագուտ անապատ, որը ունի բաւականաշափ ազի լճեր և հանքեր: Ամենաշատ անձրևներ գալիս են նրա արեմտեան մասում, այն ինչ կենդրոնական մասը բալրովին ջրազուրկ է:

Իրանի լճերից նշանաւոր են ՌԱՐՄԵՆ լիճը կամ ԿԱՎՈ-ՅՈՒՆ ծովը և ՀԱՄՈՆԸ, իսկ վետերից՝ ԿԱՋՈՎ, ԳԻԼՄԵՆԸ և ՀԵՐԻ-ՌՈՒԴ.

Իրանի պտղաբեր մասերը նրա լաւ ոռոգւած տեղերն են. այդ կողմից նախանձելի են Իրանի հարաւային կողմերը. այնտեղ բանում են հարաւային գրեթէ բոլոր պտուղները, ՓԻՆՖԻԿԵԱՆ արմաւը, անուշահոտ վարդեր, յասմիկ, շուշան, նուշ, դեղձ, ձիթապտուղ և այլն:

Իրանը բաժանում է երեք մասերի. Պարսկաստան, Աղանիստան, և ԲԵԼՈՒԶԻՍՏԱՆ:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ա Ն

Պարսկաստանը կազմում է Իրանի բարձրաւանդակի արեմտեան մեծ մտսը, որի վրա ապրում են մօտ 9 միլիոն բնակիչ:

Պարսկաստանի աղքաբնակութիւնը բաղկացած է Պարսկական պարագաներից, Թուրքերից, Հայերից, Քրիստոնեաց և Արաբներից: Բայց այդ աղքաբնակութիւնը մասնաւում են նաև մօտ 10,000-ի շափ Փառսեր կամ Գեղեցեր (կրակապաշտ), որոնք հին պարսիկների խոկական մնացորդներն են և Զրադաշտական կրօնի հետեւզները: Դրանք վլխաւորապէս ապրում են Պարսկաստանի Եազդ, Կիրմանշահ և Թէհրան քաղաքներում և մի քանի գիւղերում:

Պարսիկները դաւանութեամբ շիաներ են, պարապում են հողագործութեամբ, վաճառականութեամբ և արհեստաբով: Երկրի ներքին վաճառականութիւնը գտնուում է պարսիկների ձեռքում, իսկ արտաքինը կատարում է ռումների, անգղիացիների, հայերի և ուրիշների ձեռքով:

Պարսկաստանի բոյսերից նշանաւոր են բրինձ, ցորեն, գարի, բամբակ, պտղատու ծառեր, ծխախոտ, խաղող և այլն:

Պարսիկների մլչ շատ զարգացած են մի քանի արհեստներ: շատ յարդի են նրանց գորգերը և մետաքսէ գործուածքները:

Պարսկաստանի աղքաբնակութեան մի զգալի մասը կազմում են նաև Հայերը, որոնց թիւը հասնում է մօտ 60,000-ի: Հայերը կենդրունացած են վլխաւորապէս Ատրպատականում, Նոր-Ճուղայում և նրա շրջակայ բաղմաթիւ գիւղերում, Թէհրանում, Գիլան նահանգի Ռաշտ և Էնդելի քաղաքներում և այլն: Նրանք պարագում են հողագործութեամբ, վաճառականութեամբ և արհեստներով:

Պարսկաստանի կառավարութեան ձեւը սահմանադրական միապետութիւն է, որի միապետը կոչում է Ջահ և նստում է Թէհրան մայրաքաղաքում: Այս քաղաքը Պարսկաստանի ամենաբազմաբնակ քաղաքն է (250,000 բն.) և գլխանում է Դեմավենդի ստորոտում: Այնտեղ ապրում են նաև մօտ 400 տուն Հայեր, որոնք ունին առաջնորդական փոխա-

նորդ, երկու եկեղեցի և երկու երկսեռ դպրոցներ: Երկրորդ նշանաւոր քաղաքն է Թաւրիդ (200,000 բն.), որտեղ նըստում է թագաժառանգը: Թաւրիդը կազմում է Պարսկա-Հայաստանի հայութեան կենդրոնը, որտեղ նստում է Ատրպատականի Հայոց առաջնորդը: Հայերը (մօտ 700 տուն) ունին իրանց զպրոցները, եկեղեցիները և բարեկործական մի քանի հաստատութիւններ: Թաւրիդը առևտրական նշանաւոր կենդրոն է, որ առեսուր է անում Եւրոպայի զանազան երկրների հետ: Երրորդ քաղաքն է Բարֆրուշ, որ գտնւում է Պասպից ծովի մօտ և առեսուր է անում Ռուսաստանի հետ: Խապահան, Պարսկաստանի երբեմնի մայրաքաղաքը. այդ քաղաքի մօտ է գտնւում հայկական Նոր-Ճուղա արուարձանը, որի հայերը գաղթել են Պարսից Ճահաբաս թագաւորի օրով: Նոր-Ճուղան Պարսկաստանի հայկական նշանաւոր կենդրոններից մէկն է կազմում, ունի բարեկարգ դպրոցներ, բարեկործական հաստատութիւններ և այնտեղ է նստում Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդը: Շերազ, նշանաւոր է իր վարդերով, խաղողով, գինով և վարդաջրով: Նշանաւոր է նաև Բուշիր քաղաքը, որի բնակիչները առեսուր են առում Հնդկաստանի հետ:

Պարսկաստանը գտնւում է Ռուսաստանի և Մազկիալի քաղաքական աղղեցութեան տակ: Այդ երկու տէրութիւնները շարունակ մրցում են միմեանց հետ և նրանցից խւրաբանշիւրը աշխատում է իր աղղեցութիւնը աւելի ևս զօրացնել:

Ա Կ Ա Ն Ի Ս Ա Ն

Իրանի հիւսիս-արևելեան մասը, Հինդուկուշի լեռները և Պամիրի արևմտեան մասը միասին կազմում են Աւղանիստանի տէրութիւնը, որի աղքաբնակութիւնը բաղկացած է աւղաններից և տաճիկներից: Երկրի տիրապետող տարրը կաղ-

մում են աւզանները, որոնք դաւանում են մահմեղական կը-
րօնը և իրանց լեռնոտ և գժուարամատշելի երկրում պա-
րապում են գլխաւորապէս անասնապահութեամբ։ Տաճիկ-
ները, ընդհակառակը, պարապում են վաճառականութեամբ,
հողագործութեամբ և արհեստներով։

Թէ աւզանները և թէ տաճիկները պատերազմասէր յե-
ղեր են և կառավարում են իրանց անկախ լժազաւորով, որ
կոչում է էմիր և որի աթոռանիստը տէրութեան մայրաքաղաք
Կաքուլն է։

Աւզանիստանի ազգաբնակութեան ամբողջ թիւը հաս-
նում է 4 միլիոնի։

Նրա միւս քաղաքներից նշանաւոր են Հերատ, առևտրա-
կան նշանաւոր քաղաք է, որ գտնւում է Հնդկաստանից Պարս-
կաստան և Թուրքան տանող ճանապարհի վրայ։ Կանդահար,
առևտրական քաղաք է։

Աւզանիստանով է անցնում ամենակարճ ճանապարհը
Հնդկաստանից Միջին-Ասիա և այնտեղից էլ Եւրոպա։

Պարսկաստանի նման Աւզանիստանն էլ կազմում է Ռու-
սաստանի և Անգլիայի մէջ իրեն կրուախնձոր։ Այդ երկու
մեծ պետութիւնները Աւզանիստանի տիրապետութեան հա-
մար շարունակ մրցում են միմեանց հետ և նրանցից իւրա-
քանչիւրը աշխատում է իր ազգեցութիւնը այնտեղ ամրաց-
նել։

Ռուսաստանի տիրապետութեան ներքոյ է գտնւում Պա-
միրի հիւսիսալին և կմնդրօնական մասը, որ գտնւում է Աւ-
զանիստանի արևելեան կողմում, իսկ Անգլիան արդէն իր իշ-
խանութեանն է ենթարկել լեռնոտ Քաֆիրիստանը, որի բլ-
նակիչները վերին աստիճանի պատերազմասէր են։

Բ Ե Լ Ո Ւ Զ Ի Ս Ա Ն

Բելուջիստանը բռնում է Իրանի հարաւ-արեելեան մասը,
որի բնակիչները կազմում են դրավիդեան ցեղին պատկանող
թրագութիւնները և զելուջները։ Վերջիններիս անունով էլ կոչ-
ում է երկիրը։ Այդ երկու ժողովրդներն էլ մահմեղականներ
են, պարապում են հողագործութեամբ և անասնապահու-
թեամբ և կազմում են մի քանի տէրութիւններ, որոնք հպա-
տակում են տէրութեան կելատ մայրաքաղաքում՝ նստող
խանին։

Բելուջիստանը մի անապատալին և շատ նոսր ազգաբը-
նակութիւն ունեցող երկիր է, որ ամբողջապէս գտնւում է
Սնգդիայի գերիշխանութեան ներքոյ։ Անգլիացինները Բելու-
ջիստանում շինել են երկաթուղիններ և կվետառու ամրոցը։

Թ Ո Ւ Յ Ա Ն

Թուրքանի ամբողջ հարթութիւնը, որ մեծ մասամբ ա-
նապատային է, պատկանում է Թուրքաստանի կայսերութեան։
Այդ հարթութեան միայն հարաւ-արեելեան փորբիկ մասը
մտնում է Աւզանիստանի մէջ։ Թուրքանի տարածութեան վրայ
գտնւում են Բուխարայի և Խիվայի փորբիկ տէրութիւն-
ները, որոնք զրեթէ ամեն կողմերից շրջապատւած են ռու-
սական կալուածներով և ճանաչում են Թուրքաստանի գերիշ-
խանութիւնը։

Բուխարայի և Խիվայի ազգաբնակութիւնը բաղկացած է
տաճիկներից և ուզբէկներից։

Բուխարայի գլխաւոր քաղաքն է Բուխարան, որ գտն-
ւում է Հնդկաստանից Թուրքաստան տանող կարաւանների ճա-
նապարհի վրայ։

Խիվայի տէրութեան գլխաւոր քաղաքն է Խիվա։

Հ Ա Ր Ա Ս Ա Ն

Հնդկաստանը Ասիայի հարաւային երեք մեծ թերակըզ-
ղիներից մէկն է, որի հիւսիսային սահմանը կազմում է աշ-
խարհիս ամենաբարձր չիմալեան լեռնաշղթան, արևմտեան
կողմից շրջապատուած է Արաքական ծովով, իսկ արևելեան
կողմից Բենգալեան ծոցով:

Իր մակերեսոյթի կազմութեամբ Հնդկաստանը բաժան-
ւում է երկու՝ միմեանցից տարրեր մասերի. Նրա հիւսիսա-
յին մասը կազմում է Հնդկական ցածր հարթութիւնը, իսկ
հարաւայինը՝ Դեկանի բարձրաւանդակը:

Դեկանի բարձրաւանդակի միջին բարձրութիւնը ծովի
մակերեսոյթից մօտ $\frac{1}{2}$ վերստ է: Նա տարածւում է արևմտ-
քից դէպի արևելք և հէնց այդ ուղղութեամբ էլ հոսում են
Հնդկաստանի գետերը:

Հնդկաստանի ամբողջ արևմտեան ափով ձգւում են Հա-
ղէսի լեռները, որոնցից սկիզբն են առնում հարաւային Հընդ-
կաստանի մի քանի գետերը:

Որովհետև հարաւային Հնդկաստանի ափերը ծածկուած
են լիոներով, գրա համար էլ այնտեղ անձրեներ քիչ են
գալիս, այն ինչ հիւսիսային Հնդկաստանը այդ կողմից նա-
խանձելի է:

Հիւսիսային Հնդկաստանը մի հարթութիւն է ներկա-
յացնում, որի վրայով հոսում են նրա երեք գլխաւոր գետե-
րը—Ինդոս, Գանգէս և Բրահմապուտրա: Ամենախիտ աղ-
գաբնակութիւնն էլ հէնց ապրում է այդ երեք գետերի ափե-
րում:

Հնդկաստանի այդ մասի արևելեան կողմում աւելի շատ
անձրեներ են գալիս և այնտեղի գլխաւոր բոյսը Փիւնիկ-
եան արմաւն է: Դրա գլխաւոր գետը Գանգէսն է, Զամնա
նշանաւոր վտակով: Այդ մասը աշխարհիս ամենահարուստ և

ամենախիտ աղգաբնակութիւն ունեցող տեղերից մէկն է:
Բոլորովին ուրիշ պատկեր է ներկայացնում Հնդկական
ցածր հարթութեան արևմտեան մասը, որտեղ հոսում է Ին-
դոս գետը, Սետլէջ նշանաւոր վտակով: Այդ մասը արևե-
լեանի պէս լաւ չէ ուռզւած և նոյն իսկ երկու փարորիկ
անապատներ ունի, որոնցից նշանաւոր է Թարը:

Դեկանի բարձրաւանդակը, որ սկսում է Գանգէս գետի
հարթութիւնից դէպի հարաւ, չրջապատուած է լիոներով: Ա-
րևմտեան ափի լեռները կոչւում են Արևմտեան Հաղէս,
իսկ արևելեան ափինը Արեւելեան Հաղէս: Այդ բարձրա-
ւանդակի արևմտեան ափը կոչւում է Մալաքարի ափ, իսկ
արևելեանը Կօրօմանդելեան ափ: Դեկանի բարձրաւանդակի
միջին մասը անապատային է և մեծ մասամբ արհեստական
կերպով է ոռոգւում: Բարձրաւանդակի Գօրավերի, Կիստնա
և Կավերի գետերը հոսում են Կօրօմանդէլի ափը, իսկ նար-
զաղա գետը դէպի Մալաքարեան ափը:

Չնայելով որ Հնդկական հարթութիւնը գտնուում է Խեց-
գետնի Արեագարձից դէպի հիւսիս, բայց նրա կլիման աւելի
տաք է, քան Դեկանի բարձրաւանդակը, որը տաք գօտիումն
է գտնուում: Որովհետև այդ հարթութիւնը առաջինը ցածր
է և երկրորդ չիմալեան լեռնաշղթան նրան պաշտպանում է
հիւսիսային խիստ քամիներից:

Ամբողջ Հնդկաստանում տարւայ միայն երկու եղանակներն
են տարբերուում միմեացից, անձրեային ամառ և չոր և տաք
ձմեռ: Եւ այդ բանը շատ է կախաւած այնտեղ տիրող մուսսոն-
ներից: Ամառը Հնդկաց ովկիանոսից փշում է հարաւ-արևմտ-
եան մուսսոնը և առատ անձրեով ոռոգում է Հնդկաստանը:
Այդ մուսսոնը փշում է մայիսից մինչև հոկտեմբեր:

Հիմալայեան լեռնաշղթայի արևելեան ծայրերի մօտ շա-
գից դուրս շատ անձրեներ են գալիս: Ենտեղ մի անգամ

երբեմն այնքան անձրե է դալիս, որքան Թուսաստանում ամբողջ տարւայ ընթացքում:

Հիմալայեան շեռնաշղթալի ամենալարձր գազաթներն են Հվերեստ և Կինչինժինգա: Չմեռը, (հոկտեմբերից մինչև ապրիլ) երբ ասիական մայր ցամարից փշում է հիւխա-արեելեան մուսսօնը, անձրևները դադարում են:

Հնդկաստանը իր մակերեսովի կազմութեան, կլիմայի և ոռոգման բազմազանութեան չնորհիւ ունի նաև բազմազան բոյսեր և կենդանիներ: Իր բնութեամբ Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ երկիրն է: Նրա բոյսերից նշանաւոր են բըինձ, ցորեն, մեկոն, որը տալիս է օֆիում, լեզակարոյս, բամբակ, վուշ և այլն: Կենդանիներից նշանաւոր են՝ առիւծ, վագր, փիղ, կապիկ, օձ, խոհ թռչուններից թռւթակ, ֆասիան և այլն: Հնդկաստանը հարուստ է նաև թանգագին քարերով, օրինակ շատ յարզի է նրա ալմաստը:

Իր հարուստ և փառայեղ բնութեանն է պարտական Հնդկաստանը, որ ունի խիտ և մեծաքանակ աղբարինակութիւն: Հնդկաստանի ամբողջ տարածութիւնն է 70,000 քառ. մղոն, որի վրայ ապրում են մոտ 300 միլիոն բնակիչներ:

Այդ բնակիչների մեծ մասը կազմում են Հնդիկները, որոնք պատկանում են կովկասեան կամ միջերկրական ցեղին: Դեկանի բարձրաւանդակի վրայ ապրում են նաև դրավիդեան մի քանի ցեղեր, որոնք կազմում են Հնդիկներից նուաճուած նախնական բնակիչները: Բացի զրանցից Հնդկաստանում ապրում են մոնղոլներ, հայեր և 120,000-ի շափ եւրոպացիներ, որոնց մեծ մասը անդիացիներ են:

Հնդիկները աշխարհիս ամենահին և նշանաւոր ժողովուրդներից մէկն են: Հին ժամանակ նրանք շատ քաղաքակըրթած և իրանց հարեաների համար օրինակելի ժողովուրդ է ինչ նրանց հին սահմակիտական լեզով մինչև այսօր մեր ձեռքին:

Են հասել մի քանի նշանաւոր աշխատութիւններ, որոնցից յայտնի են Ռամայեանը, Մահաբարակա, նաև Կամականդիին և այլն: «Հազար ու մէկդիշեր» վերնագրով արաբական հէքեաթները հնդիկներից են փոխ առնեած: Այդ փաստը ցոյց էտալիս, որ քաղաքակըրթած հնդիկները հին ժամանակ մեծ աղղեցութիւն են ունեցել արաբացիների վրայ, իսկ վերջիններս էլ եւրոպացիների վրայ: Նրանք են ննարել այն թուանշանները, որ մենք արաբական թուանշաններ ենք կոչում, որովհետև մենք գրանց հետ ծանօթացել ենք արաբացիների շնորհիւ: Հնդիկները ճարտարապետական մեծ ընդունակութիւն էլ են ունեցել: Նրանց հսկայական շինութիւնների մնացորդները մինչև այսօր կարելի է տեսնել Հնդկաստանի զանազան մասերում:

Հնդիկները հսկայական կեանքում հին ժամանակից ի վեր բաժանւում էին դասակարգերի կամ կաստաների, որոնք միմիանց հետ ոչ մի յարաբերութիւն չունեին: Հին ժամանակ հնդիկների մէջ այդպիսի չորս կաստաներ կային. քրմերի կամ բրամինների, զինուորների, հողագործների և ստրուկների կաստաներ: Բայց յետոյ դրանց թիւը աւելի մեծացաւ: Եյդ կաստաներին պատկանող մարդիկ միմեանցից տարերուում են իրանց ծագումով և զբաղմունքներով, օր. այժմ կան ջրկիրճների, հիւմների, քարտաշների և այլն կաստաները, որոնք իրաւունք չունին միմիանց հետ որևէ յարաբերութիւն ունենալու: օր. միւնոյն ամենից ուտել և խմել և այլն:

Հնդիկների մէջ ոկիզքն են առել և զարգացել երկու կրօնքը ահմադականութիւն և քուղայականութիւն: Հնդկաստանի աղղաբնական թեան ամենամեծ մասը (200 միլիոն) սինչի այսօր է բրահմական կրօնին է հետեւում, այն ինչ բուդդայականութիւնը բրահմական կրօնին է հետեւում, այն ինչ բուդդայականութիւնը բրահմական հնդիկներ: Բացի զրանցից կան և մահմեդայիտեան հնդիկներ: Բրահմական հնդիկների սրբազն քաղաքը Բենական հին ժամանական լեզով մինչև այսօր մեր ձեռքին է, Գանգէս գետի ափում: Ամեն տարի այդ քաղաքը բէսն է, Գանգէս գետի ափում: Ամեն տարի այդ քաղաքը բէսն էն գնում քաղմաթիւ հնդիկներ, ինչպէս որ մահմետեան տարի այսօր մեր ձեռքին է:

պականները գնում են Մելկա, իսկ քրիստոնիաները Ներուառ-
պէմ: Բացի Բնարէս բաղաքից Գանգէսն էլ սրբազն գետն է
Հնդիկների համար:

Հնդկաստանի ընակիչները գլխաւորապէս պարապում են
հողագործութեամբ և անասնապահութեամբ: Ոմանք պատրաս-
տում են բրդէ և մետաքսէ զանազան զրծուածքներ, օր.
շալեր, թաշկինակներ և այլն, բուսական հիւթերից պատրաս-
տում են ներկեր, կրեալից և փղոսկրից զանազան իրեր և
այլն:

Հնդկաստանը իր բնութեան հարստութեան և ճանապար-
հերի կանոնաւոր հաղորդակցութեան չնորհիւ ունի նաև ըն-
դարձակ առետրով: Այդ առետրով մեծ մասամբ պարապում են
անդդիացիները, որոնց պատկանում է զրեթէ ամբողջ Հնդ-
կաստանը:

Հնդկաստանից ուրիշ երկրներ գլխաւորապէս արտահա-
նում են բամբակ, բրինձ, ալմաստ, սոսկի, ազ, ցորեն և օֆ-
ֆուլ: Արդինագործութիւնը գեռ ևս այնքան զարգացած չէ:
Հնդկաստանում: Հնդիկները թէն պարապում են մի քանի
արհեստներով, բայց ապրանքների մեծ մասը ներմուծում է
Անգղիայից: Անգղիացիները վերջին ժամանակներս հիմնել
են մի քանի գործարաններ, որտեղ մշակում են երկրի հում
նիւթերը:

Չնայելով, որ զրեթէ ամբողջ Հնդկաստանը պատկանում
է Անգղիայի թագաւորութեանը, սակայն այնտեղ քիչ անգղիա-
ցիներ են ապրում: Եղածներն էլ զինուորական աստիճանաւոր-
ներ, զինուորներ և վաճառականներ են: Հնդկաստանը կառավա-
րում է Անգղիայի կողմից նշանակւած փոխարքան, որ նը-
տում է ամբողջ Հնդկաստանի Կալկաթա մայրաքարում:

Անգղիական կալուածները Հնդկաստանում բաժանում են
երկու գլխաւոր տեսակների. ա) անգղիական անմիջական կա-
ռուածներ, որոնք կառավարում են անգղիական նահանգա-

պետներով և բ) Անգղիայից կախումն ունեցող տէրութիւն-
ներ: Այդպիսի տէրութիւններ կան ամբողջ Հնդկաստանի զա-
նազան մասերում, որոնք շրջապատած են անգղիական ան-
գղիական կալուածներով: Հնդկական տէրութիւնները կառա-
վարում են իրանց հնդիկ իշխաններով, որոնք կոչւում են ու-
ժաներ (իշխաններ): Այդ իշխանները իրանց ոռնիկները ստանում են անգղիացիներից և
առանց նրանց համաձայնութեան ոչինչ չեն կարող անել:

Անգղիացիները անազին ծառայութիւն են մատուցել
Հնդկաստանում Եւրոպական լուսաւորութիւնը տարածելով:
Նրանք տեղացի հնդիկների համար հիմնել են բազմաթիւ
գլուխոցներ և Կալկաթա ու Բօմբէյ քաղաքներում, համալսա-
րաններ:

Սակայն չնայելով այդ հանգամանքին, հնդիկների տըն-
տեսական գրութիւնը շատ ծանր է, որովհետեւ նրանք պար-
տաւոր են անգղիական տէրութեան շատ հարկեր ու տուրքեր
վճարել: Հնդկաստանը Անգղիայի համար թէ քաղաքական և
թէ տնտեսական մեծ նշանակութիւն ունի: Այդ երկիրը մի
շատ լաւ շուկա է անգղիական գործարաններում պատրաս-
տուած ապրանքների համար: Անգղիական արդինարերու-
թեան մի զգալի մասը ամեն տարի սպառում են Հնդկաս-
տանի բնիկները: Հնդիկների մի մասը շարունակ գաղթում է
տանի բնիկները: Հնդիկների մի մասը շարունակ գաղթում է
զանազան երկրներ, օր. Հնդկաշին, Աֆրիկա և Ամերիկա,
որտեղ նրանք պարապում են կամ առետրով և կամ թէ իբրև
հասարակ բանւորներ աշխատում են վերայիշեալ երկրների
արդինարերական նշանաւոր կենդրուններում:

Հնդկաստանը բաղկացած է հետեւեալ գլխաւոր մասերից.
ա) Հիմալյան լեռնաշղթայի ստորոտների արևմտեան մա-
սում է նշանաւոր է Կաշմիրը, որ յայտնի է իւր հոչակաւոր
շալերով: Կաշմիրը կախումն ունի անգղիացիներից: Լեռնա-
շալերով կաշմիրը կախումն ունի արևելեան մասերում յայտնի
շղթայի ստորոտների միջին և արևելեան մասերում յայտնի

են նեպալ և Բուտան փոքրիկ տէրութիւնները, որոնք բոլորովին անկախ են: Նշանաւոր է նաև Սիկիմ լեռնոտ երկիրը, որի գլխաւոր քաղաքն է Դարջլինգ: Այս քաղաքը հարուստ անդիմացիների ամառանոցն է, որ Կալկաթա մայրաքաղաքի հետ երկաժուղարի միացած է:

բ) Գանգէս գետի հարթութեան վրայ գտնուում է Բենգալիան, որի գլխաւոր քաղաքն է Կալկাতան: Վերջինս ամբողջ Հնդկաստանի մայրաքաղաքն և ամենահանաւոր առևտրական կենդրոնն է: Կալկաթան ունի 840,000 բնակիչ, որոնք գլխաւորապէս առետուր են անում 2 ինաստանի հետ: Այս քաղաքը համարում է նաև Հնդկաստանի հայ գալութիր գլխաւոր կենդրոնը, որ ունի հայ եկեղեցի, ճեմարան և միքանի բարեգործական ընկերութիւններ: Հնդկաստանի Հայերը մեծ մասամբ զաղթել են Պարսկաստանից, մանաւանդ նոր Զուղայից, որոնք մեծ մասամբ դժբաղդաբար մոռանում են մայրենի լեզուն և հետզհետէ ձուլում տիրապետող անդիմացիների հետ: Ըն ինչ Հնդկաստանի հայկական զաղութը մի ժամանակ Հայաստանին թէ քաղաքական և թէ մտաւոր մեծ ծառայութիւն է մատուցել: Այնտեղի Հայերի մեծ մասը պարապում են վաճառականութեամբ և նրանցից շատերը մեծամեծ հարստութիւնների տէր են: Բայցի Կալկաթայից բաւականաշափ հայեր կան նաև Հնդկաստանի Քօմբէյ, Մատրաս և Հնդկաշինի Ռանգուն քաղաքներում և Ճաւա կղզու վրայ, որոնք բոլորն և ենթարկուում են Պարսկա-Հնդկաստանի թեմական Հայոց առաջնորդին:

Բենգալիայի միւս քաղաքներից նշանաւոր են Պատնա, որ յայտնի է իր բամբակէ գործուածքներով և օֆիսով: Ալլահաբադ, որ նշանաւոր ամրոց և անդիմացիական զօրքի կենդրոնն է և Բենարէս, որ Տնդիկների սրբազն քաղաքն է: Երաքանչիւր Տնդիկ պարտաւոր է իր կեանքում զոնէ միանգամած այցելել այդ սրբավայրը: Բէնարէսում գտնուում են

մի քանի հարիւր Տնդկական մատուռներ և տաճարներ:

գ) Ինկոս գետի հարթութեան վերայ նշանաւոր է Փենջաք նահանգը, որի գլխաւոր քաղաքն է Հահօր. այս քաղաքը մի առևտրական կենդրոն է, որ միացած է Փեշնզար քաղաքի հետ երկաթուղիով: Փեշիկարը գտնուում է Կարու գետի ափում, նշանաւոր ամրոց է, որ գտնուում է Աւգանիստանի և Հնդկաստանի սահմանագլխում:

դ) Դեկանի բարձրաւանդակի վրայ նշանաւոր են Մաղրաս քաղաքը. Բօմբէյ որ Հնդկաստանի առևտրական քաղաքներից մէկն է, ունի բամբակի մեծ առետուր և մօտ 830,000 բնակիչ:

Եկանի բարձրաւանդակի Հնդկական տէրութիւններից նշանաւոր է Հեյդերաբադը, որ հպատակւում է Անգլիային և ալմաստի մեծ առետուր ունի: Նրա մօտ է գտնուում և Գօլկոնդա քաղաքը, որը յայտնի իր ալմաստի հանքերով:

ե) Անգլիային է պատկանում և Հնդկաստանի հարաւային զողմում գտնուող Ցէյլօն կղզին, որը մի ժամանակ միացած է Եղել մայր ցամաքի հետ, իսկ այժմ նրանից բաժանուած է մի նեղուցով: Այդ նեղուցի մէջ գտնուում են մի շալը մանր կղզիներ:

Ցէյլօն կղզին լեռնոտ է. Նրա ամենաբարձր գագաթը բուլգայականների համար մի սրբազն սար է, որին նրանք ամեն տարի ուխտ են գնում: Կղզու բնութիւնը աւելի շքեղ է, քան Հնդկաստանինը և նրա տարածութեան մեծ մասը ծածկուած է անտառներով: Ծառերից նշանաւոր են կոկոսի արմաւենին, քինայի և հացի ծառերը, սուրճը և թէյլ: Ցէյլօնի կղզինի է նաև իր թանկագին քարերով: Նրա գլխաւոր քաղաքը է Կոլոմբօ, որ մի նշանաւոր նաւահանգիստ է Հնդկական ովկիանոսի ափում: Կղզու ազգաբնակութիւնը բաղկական ովկիանոսի ափում: Կղզու ազգաբնակութիւնը բաղկացած է սպիտակներից, Տնդիկներից և վեղդասներից, որոնք կացած են սպիտակներից, Տնդիկներից և կաղմում: Երկրագնդի ամենայայտնի վայրենիների մի ցեղն են կաղմում:

Քացի անգղիացիներից Հնդկաստանում մի քանի մանրէ կալուածներ ունին նաև փորթուգալացիները և ֆրանսիացիները:

Փորթուգալացիներին պատկանում է Գօա քաղաքը, որ գտնում է Մալաբարեան ափում. իսկ Ֆրանսիացիներին մի քանի կտոր հողեր, որոնց մէջ զլխաւոր քաղաքն է Պոնդիշերի.

Հ Ա Դ Կ Ա Զ Ի Ն

Ասիայում ոչ մի թերակղղի այնքան շատ չէ կտրատւած ծովերով, որքան Հնդկաշինը: Այդ ծովերը կտրատելով Հնդկաշինի ափերը կազմում են Տռնգինի, Սիամի և Մարտաքանի ծոցերը: Հնդկաշինը մի լեռնոտ և մեծ զետերով ոռոգւած երկիր է: Թիրակղղու հիւսիսային և ասր ծածկւած է բարձր և դժուարամատշելի լեռներով, որոնք կազմում են Տիրէթի լեռների շարունակութիւնը: Դէպի հարաւ տարածւելով այդ լեռները հետզհետէ ցածրանում են: Հարաւային Հնդկաշինի տարածութեան մեծ մասը բաղկացած է զեղեցիկ հովիտներից: Հնդկաշինի զետերից նշանաւոր են. Իրավաղի, Սուլուէն, Մենամ և Կամբոջա: Անձրևների ժամանակ այդ զետերը յորդանում և երկիրը պտղաբեր են դարձնում:

Երկիրը իր նշանաւոր ոռոգման հնորհիւ ունի ճոխ բուսականութիւն և ծածկուած է խիտ անտառներով, որոնք նաւաշինութեան համար բաւականաշափ փայտեղին են մատակարառում: Հնդկաշինն էլ մօտաւորապէս ունի նոյն բուսականութիւնը և կենդանական աշխարհը, ինչ որ Հնդկաստանը:

Անգլաբնակութեան մեծ մասը ապրում է Հնդկաշինի հարաւային մասում: Հիւսիսային Հնդկաշինի աղղարնակութիւնը պատկանում է մոնղոլիան յեղին, որմաք իրանց լեզուով և

քաղաքակրթութեամբ շատ նման են չինացիներին, իսկ Հնդկաշինի հարաւային մասի՝ կամ Մալակկա թերակղզու բնակիչները պատկանում են մալայեան ցեղին: Երկրի հիւսիսամութեան կողմում ապրում են նաև բաւականաշափ հնդիկներ:

Հնդկաշինի տիրապետող կրօնը բուգդայականութիւնն է, բայց մալայացիները կրօնով մահմեղական են: Բնակիչները շատ աշխատասէր ժողովուրդ են և պարապում են զլխաւորապէս երկրագործութեամբ:

Հնդկաշինը յայտնի է իր բրինձով, որ ահազին քանակութեամբ արտահանում է ուրիշ երկրներ:

Հնդկաշինի քաղաքներում ապրում են շատ չինացիներ, որոնք զլխաւորապէս պարապում են վաճառականութեամբ և արհեստներով:

Հնդկաշինի արևմտեան մասը կազմում է Յիւման, որ պատկանում է անգղիացիներին և բրիտանական Հնդկաստանի մի մասն է: Անգղիացիներին է պատկանում նաև Մալակկա թերակղզու հարաւալին մասը, նրա մօտ գտնւող կղզիներով: Անգղիական կալուածների զլխաւոր քաղաքն է Սինգապուր համանուն կղզու վրայ, որտեղ կանգ են առնում Եւրոպուր և Հնդկաստանից դէպի Սրեելեան Ասիա գնացող բռպայից և Հնդկաստանից դէպի Սրեելեան Ասիա գնացող բռպայից այդ է զլխաւոր պատճառը, որ Սինգապուր հոգենաւերը: Հէնց այդ է զլխաւոր պատճառը, որ Սինգապուրը մեծ, բաղմանարդ և առևտրական նշանաւոր քաղաք է:

Հնդկաշինի արևելեան մասը պատկանում է ֆրանսիացիներին և կոչում է Փրանսիական Հնդկաշին: Արևելեան մասներին և կոչում է Փրանսիական Հնդկաշին: Արևելեան մասը ամբողջ Հնդկաշինում ամենախիտ աղղարնակութիւն ունի ապահով երկիրն է: Ենտեղ ապրում են մօտ 25 միլիոն բնակչութեան մասի հողը թէկ արևմտեանից աւելի քիչ: Արևելեան մասի հողը թէկ արևմտեանից աւելի քիչ: Արևելեան մասի հողը թէկ արևմտեանից աւելի քիչ: Արևելեան մասի հողը թէկ արևմտեանից աւելի շատ են յառապաղաքը, բայց նրա բնակիչները աւելի շատ են ճառապաղաքը, բայց նրա բնակիչները թէկ արհեստների և թէկ վաշագիմել թէկ քաղաքակրթութեան, թէկ արհեստների և թէկ վաշագիմել թէկ քաղաքակրթութեան տեսակետից: Այսեղից արտահանում են ճառապաղաքներ:

դէպի օտար երկրներ բաւականաշափ բրինձ և ներմուծւում են գործարանական իրեղիներ:

Ֆրանսիական բոլոր կալուածները կառավարում են ֆրանսիական հասարակապետութեան կողմից նշանակւած մի գեներալնահանգապետով, որ նստում է Սայզոն քաղաքում։ Ֆրանսիական կալուածների ամենահշանաւոր մասը Տօնվիննէ, որի գլխաւոր քաղաքն է Գանօյ։

Ենդղիական և ֆրանսիական կալուածների մէջ, չնդկաչին թերակղզու կենդրոնում, Մենամ գետի հովտում գտնւում է երկրի միակ անկախ թագաւորութիւնը, որ կոչւում է Սիւամ։ Այդ տէրութիւնը բանում է Մալակիա թերակղզու հիւսիսային մասը, որի ընակիչները պատկանում են մանզոլեան ցեղին։ Այստեղ ապրում են նաև բաւական շինացիներ։ Սիւամի ընակիչները իրանց հարեանների հետ համեմատած, աւելի քաղաքակրթուած ժողովուրդ են։ Սիւամի թագաւորութեան մայրաքաղաքն է Բանկօկ, որի տաճարները յայտնի են իրանց ճարտարապետութեամբ։

Բանկօկը ունի 200,000 բնակիչ և իր ընդհանուր գեղեցկութեան պատճառով կոչւում է ասիական Վենետիկ։

Հ Ն Դ Կ Ա Կ Ա Ն Ա Ր Ջ Ի Պ Ե Լ Ա Գ

Չնդկական կամ Մալայեան արշիպելագը գտնւում է Չնդկաչինի հարաւային և արեելեան կողմերում և բաղկացած է Փիլիպպեան, Ս'ոլումեան, Մեծ և Փոքր Զոնդեան կղզիներից։ Չնդկական արշիպելագի կղզիները ընդհանրապէս լեռնու են։ Նրանց լեռները կազմում են հարաւային Ասիայի լեռների շարունակութիւնը և դրա համար էլ ենթագրում են, որ Մալայեան արշիպելագին պատկանող կղզիները մի ժամանակ միացած են եղել մայր ցամաքի հետ։ Նրանց լեռները ունին գործող հրաբուղիներ և դրա համար էլ կղզիների

գրայ յաճախ պատահում են երկրաշարժներ։ Չնդկական արշիպելագի կղզիները գտնւում են հասարակածի մօտ, ունին առաք և խոնաւ կիմա, ճոխ բուսականութիւն և կենդանիներ։ Բոյսերից նշանաւոր են բրինձ, արմաւենի, հացի ծառ, շաքարեղիկն, սուրճ, բամբակ, ծխախոտ, թէյ, բինայի ծառ, ընկոյզ, պղպեղ և այլն։

Չնդկական արշիպելագի բոլոր կղզիները միասին վերցրած Եւրոպական Ուռւսաստանի կէսին հաւասար կլինին. ղըրանցից մի քանիսը՝ օր. Բօրնէօ և Սումատրա կղզիները իրանց մեծութեամբ եւրոպական մի քանի տէրութիւններից աւելի մեծ են։

Այդ կղզիների բնակիչները մեծ մասամբ պատկանում են մալայեան ցեղին։ Դրանց մէջ կան բրիստոնեայ, մահմեղական, և հեթանոս բնակիչներ։ Բացի մալայացիներից Չնդկական արշիպելագի կղզիների վրայ ապրում են 2ինացիներ, Եւրոպացիներ, նեղինաւուներ և այլն։

Չնդկական ամբողջ արշիպելագը բաղկացած է կղզիների հետեւալ 4 խմբերից։

ա) Մեծ Զոնդեան խումբ, որի գլխաւոր կղզիները՝ Սումատրա, Խավա կամ Շաւա, Բօրնէօ և Ցելեբէս պատկանում են հոլլանդացիներին, բացառութեամբ Բօրնէօ կղզու հիւսիս-արևելեան մասի, որ պատկանում է անգլիացիներին։ Այդ կղզիներից հոլլանդացիների ամենահշանաւոր կղզին Ճավան է, որի վրայ մօտ 45 թէ գործող և թէ հանդած հրաբուղիներ կան։ Ճավայի վլխաւոր քաղաքն է Բատավիա, որտեղ նստում է Հոլլանդիայի կողմից նշանակւած գեներալնահապետը։ Վերջինս կառավարում է Ասիայում գտնւող հոլլանդական բոլոր կալուածները։ Ճավայի հրաբուղիներից նշանաւոր է Կուակատօա, որ գտնւում է Սումատրա և Ճավա կղզիները միմեանցից բաժանող Զանդեան նեղուցում։ 1883 թ. Կրակատօա հրաբուղիը սաստիկ վիժեց և ահազին վնաս-

ներ պատճառեց չնդկական արշիպելագի կղզիներից շատերի ազգաբնակութեանը:

բ) Փոքը-Զոնդեան կղզիները պատկանում են հոլանդացիներին և այդ կղզիներից միայն Թիմորի մի մասը պատկանում է փոքրթուղարացիներին:

գ) Մոլուկեան կղզիները նոյնպէս պատկանում են հոլանդացիներին:

դ) Փիլիպպեան կղզիները պատկանում են հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներին: Եյդ կղզիների գլխաւոր քաղաքն է Մանիլլա, որ յայտնի է իր հոչակաւոր սիզարով (ծխախոտ): Մանիլլան առերարական քաղաք է և ունի մօտ 160,000 բնակիչ:

ՀԻՆԱՍՏԱՆ

Արևելեան Ասիայի ամենամեծ մասը բռնում է 2ինաստանի կայսրութիւնը: 2ինաստանի տարածութիւնը 11 միլիոն քառակուսի քիլոմետր է, որի վրայ ապրում են մօտ 400 միլիոն բնակիչ: Իր տարածութեամբ 2ինաստանը հաւասար է ամբողջ Եւրոպական Ռուսաստանին, իսկ ազգաբնակութեամբ ամբողջ Եւրոպային: 2ինաստանի կայսրութիւնը աշխարհիս ամենամեծ տէրութիւններից մէկն է: Նրա սահմանները կազմում են հիւսիսային կողմից Միբիրը, արևմտեան կողմից Թուրանը, հարաւային կողմից Հնդկաստանը և Հնդկաշխը, իսկ արեւելեան կողմից Ճապոնական, Արևելեան 2ինաց և Հարաւային 2ինաց ծովերը: Իր տարածութեամբ 2ինաստանը երկրագնդի երրորդ պետութիւնն է: Նրա մէջ մտնում են Կենդրոնական Ասիան, Մանջուրիան և իսկական Զինաստանը:

ա) Կենդրոնական Ասիա: 2ինաստանի այդ մասը շրջապատուած է լեռնաշղթաներով, որոնցից շատերը մշտական

ձիւնով են ծածկուած: Կենդրոնական Ասիայի մի մասն է կազմում Տիբէթի սարահարթը, որի լեռներից սկիզբն են առնում մի քանի մեծ գետեր, օր. Կամրջա, Բրամմապուտրա, Խնչոս, Հօանգօ կամ Խուանխէ և Եանցէկնանգ:

Կենդրոնական Ասիայումն է իւր սկիզբն առնում և հոսանքը աւարտում Թարի՛ գետը, որ թափում է Հօք-Նօր լիճը: 2ինաստանի կենդրոնական մասը շրջապատուած է լեռներով, որոնք երկրի այդ մասի կիման չորացնում են և շենքողնում ովկիանոսների և ծովերի խոնաւութիւնը ներս մտնելու:

Կենդրոնական Ասիան գտնուում է բարեխառն գօտուամենատաք կիսում, ուակայն չնայելով դրան նա ունի խիստ և բաւական զաժան կիմա, որովհետեւ նրա զիրքը բարձր է: Կենդրոնական Ասիային շրջապատող լեռները, որոնք նրան անջատում են ծավից, միենոյն ժամանակ առաջ են բերում զգալի տարբերութիւն ցերեկայ և գիշերւայ տաքութեան և ամառեայ ու ձմեռեայ մէջ: Խիստ և դաժան կիմա ունի մանաւանդ Տիբէթը, որտեղ չնայելով որ արեգակը ամառը սաստիկ այրում է, բայց շուարուտ տեղերսւմ նոյն խակ ցերեկը ցուրտ է լինում: Օգը այնպէս չոր, նոսր և թափանցիկ է, որ ցերեկն էլ երկնակամարի վրայ կարելի է աստղեր նշմարել: Մթնոլորդի թափանցիկ լինելու պատճառով գիշերը շատ ցուրտ է լինում: Զմեռը շատ խիստ է լինում, բացառութիւն են կազմում միայն խոր հովիտները, որոնք ունին աւելի մեղմ կիմա, որովհետեւ շրջապատուած են լեռներով:

Կենդրոնական Ասիայի տարածութեան մեծ մասը անպատճին է: Ամենաշանտաւոր անապատն է Գօօի կամ Շամօ, որի մի մասը միայն ծածկուած է կարճ խոտով: Եյդանելյանախ ապառանում են խոտակեր կենդրանիեր: Մինչեւ այսօր էլ այնտեղ կան վայրի ուղտեր, ձիեր, էշեր և լեռնային ոչխարներ: Տիբէթում յայտնի է տիբէթեան եղը, որը այն-

տեղի բնակիչների համար նոյն ծառայութիւնն է անում,
ինչ որ հիւսիսային եղիքը նիւսիսի բնակիչների համար:

Կենդրոնական Ասիան խր մեծութեամբ գրեթէ հաւասար է Եւրոպայի կէսին, բայց շատ նոսր ազգաբնակութիւնն ունի: Նա ունի մօտ 9 միլիոն բնակիչ, որոնք պատկանում են մոնղոլիան ցեղին և մեծ մասամբ թափառական կեանք են վարում: Կենդրոնական Ասիան բաղկացած է հետևեալ գլխաւոր մասերից: Մոնղոլիա, Չունգարիա, Արեւելիան ու ուրքեստան և Տիբէթ:

Մոնղոլիան Կենդրոնական Ասիայի հիւսիս-արեւելեան մասն է կազմում: Նրա բնակիչները Մոնղոլներն են, որոնք կրօնով բուդդայականներ են: Մոնղոլները մեծ մասամբ ապրում են վրանների տակ, որոնք գրեթէ միշտ շրջապատուած են լինում ուղտերով, ձիերով և ոչխարներով: Մոնղոլիան բաժանում է մի քանի միմեանցից անկախ իշխանութիւնների կամ խանութիւնների, որոնք կառավարում են իրանց իշխաններով կամ խանիքով: Այդ խանները ամեն տարի 2ինաստանի կայսրին իրեւն հարկ վճարում են ուղտեր, ձիեր, ոչխարներ և ուղիչ ընտանի կենդանիներ և գրանց փոխարէն կայսրից ստանում են զանազան տեսակ ընծաներ: Մոնղոլիայի միջովն են անցնում 2ինաստանից մուսաստան գնացող կարաւանները: Այս շատ շատ քաղաքներ չկան, գլխաւոր քաղաքն է Խորօս, որը բուդդայական երկրորդ հոգիսրականի կամ խուղութշիի աթոռանիստն է: Ուրգան բուդդայական կրօնի հետեղողների որբազան քաղաքներից մէկն է: Մոնղոլիայի երկրորդ որբազան քաղաքն է Մայմաջին, որ առեսուր է անում գլխաւորաբէս մուսաստանի հետ և գտնում է ուղսական Կիախտա քաղաքի մօտ:

Չունգարիան գտնում է Մոնղոլիայի արևմտեան կողմում, Ցիան-Ջան լեռնաշղթայի ստորոտներում, որտեղ տարում են թիւրքերի ցեղակից մի քանի ժողովրդներ: Դրանք

էլ պատկանում են մոնղոլեան ցեղին, կառավարում են իրանց խաններով, որոնք ճանաշում են 2ինաստանի կայսրի գերիշխանութիւնը և նրան տարեկան որոշեալ հարկ են վճարում: Չունգարիայի գլխաւոր քաղաքնէ Կուշա, որի բնիշները առեսուր են անում մուսաստանի հետ:

Արևելեան թուրքեստանը ընկած է Ցիան-Ջան և Կուէն-Լուն լեռնաշղթաների մէջ և բանում է Թարխմ զետի հոգիտր: 2ինաստանի այդ մասը լաւ ոռոգում է և շատ նըլպիտր: Արևելեան թուրքեստանը համար, Արևելեան թուրքեստանը է երկրագործութեան համար, Արևելեան թուրքեստանը ունի 1 միլիոնից աւելի բնակիչ, որոնք մեծ մասամբ նսաակեաց կեանք և վարում, պատկանում են մոնղոլիան ցեղին և գաւանում են մահմեգական կրօնը: Իւր մեծութեան վրանի Արևելեան թուրքեստանը հաւասար է Եւրոպական թուրքեստանի մօտ 1/3-ական մասին: Նրա բնակիշները պարագում են հոգագործութեամբ, անասնապահութեամբ և առավագութիւնում է 2ինաստանից արևմտեան ուետրով: Այդ երկիրը գտնում է 2ինաստանից արևմտեան Ասիա և մուսաստան տանող ճանապարհի վրայ: Արևելեան թիւրքեստանի գլխաւոր քաղաքներն են Կաշկար և Երկենու, Թիւրքեստանի գլխաւոր քաղաքները մեծ մասամբ առեսուր են պարագում: Որի բնակիշները մեծ մասամբ առեսուր են պարագում: Մուսելեան թուրքեստանը կառավարում է 2ինաստանի կայսրի կողմից նշանակած պաշտօնիսաներով:

Տիբէթը գտնում է Կենդրոնական Ասիայի հարաւ-արեւանեան կողմում և կազմում է Ասիա մայր ցամաքի ամենամտեան կողմում և կայսրի Արևելեան կրօնը: Նրա լեռները, որոնք բարձր են գծուարածածկելի երկիրը: Նրան լեռները, որոնք բարձր են մինչև 7 վերստ բարձրութեան, ձգւում են արևմտեան մինչև 7 վերստ բարձրութեան, ձգւում են արևմտեան գէպի արևելը: Հովիտների բնակիշները պարագում են մտքից գէպի արևելը: Այս գտնութեամբ, իսկ սարահարթերինը՝ միմիայն անտոնանողագործութեամբ:

Տիբէթի բնակիշները գլխաւորապէս կազմում են արևել-ցիւները, որոնք մի խանութիւն ժողովուրդ են. Նրանք մաշիները, որոնք մի խանութիւն ժողովուրդ են, մասամբ էլ չինացիներին: Տիբէթը նման են մոնղոլներին, մասամբ էլ չինացիներին: Տի-

րապետող կրօնը բուդգայականութիւն է, որ տիրէթցիները ընդունել են իրանց հարկան հնդիկներից: Բուդգայական կրունը ծնունդ է առել 7-րդ դարում Քրիստոսի ծննդից առաջ: Այդ կրօնի հիմնադիլն էր թագաւորական ծագում ունեցող Սակրա-Մունին կամ Բուդգան: Նրա հետեւյները ըսկզբում սահտիկ հալածանքների են ենթարկել Հնդկաստանում, որոնցից շատերը ցրւել և տարածել են այդ կրօնը կենդրանական և արեւելան Ասիայում: Ոչ մի կրօն այնքան շատ հետեւյներ չունի, որքան բուդգայականութիւնը: Այդ կրօնն է, որ մեծ ազդեցութիւն է թողել Տիրէթի վրայ, որը իւրաքանչիւր բուդգայականի համար համարւում է իրքի մի սրբադան երկիր, Տիրէթը ունի հազարաւոր վանքեր, սրտեղ ապրում է երկրի ամբողջ ազգաբնակութեան գրեթէ $\frac{1}{3}$ -կան մասը: Տիրէթցի իւրաքանչիւր ընտանիքի անդամներից մէկը սովորաբար հոգևորական է, որ կոչում է լամա: Բոլոր քըրմերից կամ լամաներից ամենագլխաւորը կոչում է ղալայ-լամա, որ երկրի ամենամեծ հոգևորականն է, համարւում է Բուդգայի փոխանորդը և նստում է Հհասսա քաղաքում: Հհասսան աշխարհիս ամենաբարձր գիրք ունեցող քաղաքն է: Անեն տարի այդ քաղաքը լցւում է բուդգայական ուխտաւորներով, որոնք գնում են այնտեղ իրանց հոգեոր պիտին կրօնական յարգանքներ մատուցանելու:

բ) Մանջուրիան գտնում է 2ինաստանի հիւսիսային կողմում և մի լեռնոտ ու պտղաբեր երկիր է: Նրա տարածութեան մի մասը, որ լաւ է ոռոգուում, ծածկած է անտառներով և արօտատեղիներով: Մանջուրիայի լեռները յայտնի են իրանց հանգային հարստութիւններով: Մանջուրիան ունի մօտ 8 միլիոն բնակիչ, որոնք մեծ մասամբ մանջուրներ են: Մանջուրական ծագում ունի 2ինաստանի ներկայ կայսերական հարստութիւնը: Գլխաւոր քաղաքն է Մուկուէն, որ ունի մօտ 200,000 բնակիչ: Այդտեղ են թագւում 2ինաստանի կայսր-

ները: Մուկուէն քաղաքում է անցնում Սիբիրական երկաթուղու Արևելեան-2ինական ճիւղաւորութիւնը: Մանջուրիայի երրորդ քաղաքն է Այգուն, որ գտնում է Ամուր գետի ափին, ուուսական Բլազովեսչենսկ քաղաքի մօտ:

գ) Խոկական Չինաստանո ամբողջ 2ինաստանի կայսրութեան ամենահարուստ մասն է, որ գտնում է Կենդրուսական Ասիայի հարաւ-արեւելան կողմում: Խոկական 2ինաստանը Յին-Լուն-Շան լեռնաշղթայով բաժանում է երկու մասի: Հարաւային և հիւսիսային խոկական 2ինաստան:

Հարաւային 2ինաստանը ծածկած է մի քանի լեռնաշղթաներով, որոնք Մեծ կամ Խազաղ ովկիանոսին մօտենալով հետզհետէ ցածրանում են: Երկրի մակերեսոյթի կտզմութիւնը բազմազան է, նա ունի հոգիտներ, սարահարթեր և տափաստաններ: Այդ ընդհանրապէս լեռնոտ երկրի միջավն է անցնում Ասիայի ամենամեծ գետը՝ Եսնցէկեանգը, որ միևնուն ժամանակ աշխարհիս ամենամեծ գետերից մէկն է և իր ըսկիզբն առնում է Տիրէթից: Այդ գետի մէջ թափւում են մի քանի լամաներ, որոնք հարաւային 2ինաստանի կանոնաւոր ուղղմանը շատ են նպաստում:

Հիւսիսային 2ինաստանի միայն արևելեան մասը լեռնոտ է, այն ինչ մնացած մասը տափաստաներ և հոգիտներ են: Հիւսիսային 2ինաստանը մի բաւական պտղաւէտ երկիր է, որի հողը մշակման համար շատ նվաստաւոր է: Դրա համար էլ Հիւսիսային 2ինաստանը մի լաւ մշակւած և բաւական խիտ ազգաբնակութիւն ունեցող երկիր է:

Խոկական 2ինաստանը գտնում է բարեխան գօտու ամենատաք մասում, որի հարաւային մասը մօտենում է Խեցգետնատաք մասում, որի հարաւային մասը մասում լինում գետնի արեագարձին: Նրա միայն Հիւսիսային մասում լինում են սառնամանիք և ձիւն: 2ինաստանը իր տաք կլիմայի, լաւ ուղղման և պտղաւէտ հոգի չնորհիւ աշխարհիս ամենահարստութիւնը ունեցող երկիրն է: Նրա ամրուստ և խիտ ազգաբնակութիւն ունեցող երկիրն է:

բողջ տարածութիւնը 4,000,000 քառ. կիլոմետր է, որի վլրայ ապրում են մոտ 400 միլիոն բնակիչ. հետեապէս միայն 2ինաստանը ամբողջ Եւրոպայից աւելի շատ պղղաքնակութիւն ունի: 2ինաստանում կան 4 քաղաքներ, որոնցից իւրաքանչիւր միլիոնից աւելի բնակիչ ունի, իսկ մի քանի հարյուր հազար բնակիչ ունեցող քաղաքների թիւը 40-ի է համառմ:

2ինաստանի նման մի հարուստ երկիր իր բնական բաղադրան հարստութիւններով հաղիւ կարողանար կերպիր և բաւականութիւն պատճառել իր բնակիչներին, եթէ նրանք աշխատառէր և ընդունակ չլինէին այդ հարստութիւնները շահագործելու: Եւրաքանչիւր չինացի շատ բարձր է գնահատում: և օգտակար համարում իր հայրենիքի բնական հարստութիւնները: 2ինաստանի հողը չինացիները մեծ խնամքով և հոգածարութեամբ են մշակում: Եթէ որեէ տեղի ոռոգումը անբաւարար է, նրանք այդ տեղը արհեստական կերպով են ոռոգում: Իսկ հացահատիկների մշակութեան համար անյարձար հողերը դարձնում են պարտէզներ և բանջարանոցներ: 2ինացիների համար հողագործութիւնը ամենապատարեր ըղբաղմունըն է: Նրանք զլիսաւորապէս ցանում են ցորեն, դարի, ծխախոտ և ուրիշ հացահատիկներ այն տեղերում, որոնք ունին ցուրտ ձմեռ և տաք ամառ: Իսկ այդպիսի կլիմա ունին 2ինաստանի միայն հիւսիսային նահանգները: 2ինաստանի միջին և հարաւային նահանգներում մշակում են բրինձ, բամբակ, շաքարեղէզին, պղպիղ, հարաւային պտուղներ թէյ և ալին: 2ինաստանը ամբողջ աշխարհին թէյ է մատակարարում: Անասնապահութիւնը բոլորովին զարգացած չէ 2ինաստանում: Բացառութիւն են կազմում նրա միայն խողերը և թոշանեները: 2ինաստանը մինչև այժմ էլ հոչակւած է իր մետաքսով, որ ահագին քանակութեամբ արտահանուամ է օտար երկներ: Զնայելով, 2ինաստանը ունի նաև բաւականաշափ մե-

տավներ, քարածուխ և աղ, բայց դրանք լաւ չեն շահագործում:

2ինացիները շատ լաւ պատրաստում են մետաքսէ և բամբակիայ գողուածքներ, յախճապակեայ անօթներ, թուղթներն այլն: Որովհետեւ 2ինաստանը շրջապատած է բարձր լեռնաշղթաններով և ուրիշ երկներից բաժանուած է փոթորկալի ծովերով, դրա համար էլ նրա բնակիչները տասնեակ դարերի ընթացքում օտար ազգերի հետ ոչ մի յարաբերութիւն չեն ունեցել և ապրել են միմիայն իրանց համար, նրանք միշտ վախեցիլ են օտար ազգերի հետ յարաբերութիւն ունենալու և դրա համար էլ միշտ արգելել են թէ օտարների մուտքը իրանց հայրենիքը և թէ օտար երկները գնալը, Միայն անցեալ դարու վերջերում եւրոպացիները նրանց բռնի ոյժով ստիպեցին իրանց հետ առևտրական յարաբերութիւն սկսելու: 2ինացիներն էլ ստիպւած եղան եւրոպական ազգերին թոյլ տալ իրանց երկիրը և առետրական նաւահանգիստները մտնելու: Այժմ երկիրը և առետրական ամերիկական ազգերը հետղնետէ ըսթէ եւրոպական և թէ ամերիկական ազգերը հետղնետէ ըսթէ են խառնել 2ինաստանի ներքին գործերում: Օտար կոսում են խառնել 2ինաստանի զանազան քաղաքներումներկալուամս ու ազգերը 2ինաստանի զանազան քաղաքներումներկալուամս ու ազգերը, նրանք առանձին թագերը, երկրում անց են կացրել նին իրանց առանձին թագերը, երկրում անց են 2ինաստանի զանազան տերկաթուղիները, շահագործում են 2ինաստանի զանազան տերկաթուղիներին, շահագործում են 2ինաստանի զանազան տերկաթուղիներին, շահագործում է շինական Քանտոն քաղաքի դիմաց, կղզին, որ գանուում է շինական Քանտոն քաղաքի դիմաց, կղզին, որ գանուում է շինական Կիաո-Չաուն՝ Գեղին ծովում: Վերիսկ կազմանացիներին կիաո-Չաուն՝ Գեղին ծովում է շինական տերկաթուղիների համար առետրական մեծ նշանակութիւն ունին:

Միւս կողմից էլ այժմ սկսել են շինացիները զաղթել օտար երկներ և այնտեղ իրանց գոյութիւնը պահպանելու պատրականութիւնը մեծ մասամբ պարապում են: Օտար երկներում շինացիները մեծ մասամբ պարապում են:

մշակութեամբ և չնչին աշխատավարձով մրցում են սպիտակ բանորդների հետ։ Հետո չէնց ալդ սպատճառով էլ այժմ նրանց մուտքը արգելած է Ամերիկա և Աւստրալիա և գաղթող չինացիների մեծ մասը գնում է չնդկաշին և Մալայեան Արշակելադի կղզիները։ Վերջին երկրներում նրանք պարապում են առետրով, արհեստներով և մշակութեամբ և քիչ փող վասկելուց յետոյ նորից վերադառնում են իրանց հայրենիքը։

Հինացիները պատկանում են գեղին ցեղին, բայց իրանց արտաքին տեսքով բաւական տարբերում են մանզոններից։ Հինացիները սկզբում ապրելիս են եղել կենդրոնական Ասիայում, բայց Քրիստոնից 2000 տարի առաջ գաղթել են ներկայ Հինաստանը, որտեղ հիմնել են մի մեծ տէրութիւն և մեծ ազգեցութիւն են թողել իրանց հարեան ժողովրդների վրայ։ Իրանց ներկայ հայրենիքում հաստատւելուց յետոյ չինացիները ենթարկել են Կենդրոնական Ասիայից Հինաստան ներս խուժող ժողովուրդների յարձակմունքներին և որպէս զի թշնամիները այլ ևս չկարտղանան իրանց երկիրը մտնել, նրանք Հինաստանը շրջապատեցին 2000 վերստ երկարութիւն ունեցող մի պարսպով, որի մնացորդները՝ մինչև այսօր էլ մնում են։

Հինացիները զլխաւորապէս պարապում են հողագործութեամբ և դրա համար էլ նրանց մի մասը ապրում է գիւղերում։ Հինաստանում տարածւած են նոյնպէս զանազան արհեստներ։ Ընդհանրապէս չինացիները ջանասէր և աշխատասէր ժողովուրդ են և հեշտութեամբ յարմարուում են ամեն տեսակ աշխատանքի։ Նրանք իրանց աշխատանքի համար բաւականանում են ամենաչշին վարձատրութեամբ։ Հինացիների կենցաղավարութեան ձեր մինչև այսօր շատ քիչ փոփոխութիւնների է ենթարկել։ Նրանք սիրում են ընտանեկան կեանքը և մեծ յարդանքով են վերաբերում դէպի իրանց ծնողները և մեծերը։ Նրանց մէջ շատ է զարդացած կրթութիւն

ատանալու ձգտումը։ Հինց դրա համար էլ չինացիները հին դարերում ամենաքաղաքակրթւած ժողովուրդներից մէկն էին։ Նրանք դեռ եւրոպացիներից շատ առաջ ծանօթ էին տպագրութեան, վասուկի և կողմնացոյցի հետ, իսկ այժմ յետամնաց ազգերի թւին են պատկանում։ Նրանց այրուբէնը բաղկացած է մօտ 40,000 տառերից կամ նշանազրերից։

Հինացիների մեծ մասը՝ մանաւանդ նրանց հասարակ ժողովուրդը դաւանում է բուդդայտիկանութիւնը, իսկ չինական ժողովուրդի բարձր դաստիարակը դաւանում է կոնֆուկասի վարդապետութիւնը։ Կոնֆուկիոսը ապրում էր Քրիստութիւնից ծննդից առաջ, Առհասարակ չինացիները չունին կրօնական մոլեւանդութիւն, յաճախ երկու տարբեր դաւանութիւնների հետևողները իրանց կրօնական ծէսերը կատարում են միևնույն տաճարում։

Հինաստանը մի անսահման միապետութիւն է, որի գլուխըն է կայսրը. վերջինս կոչւում է Թողղիկիան։ Հինաստանի կայսրը համարում է երկնքի որդի և իր հպատակների հայրը և նստում Պեկին քաղաքում, որ Հինաստանի կայսրութեան մայրաքաղաքն է։ Հինաստանի կայսրութիւնը բաժանւած է մի քանի նահանգների, որոնք կառավարում են գեներալնահանգամբ կամ մանդարիններով։

Մանդարինները սովորաբար վատ են կառավարում իրանց յանձնւած նահանգները և կեղերում ու հարստահարում են յանձնակիցներին։ Դրա համար էլ Հինաստանի նահանգներանց բնակիչներին։ Դրա համար էլ Հինաստանի նահանգներում ժողովրդական խոռովութիւնները սովորական երեսութեան են։

Հինաստանի կայսերութեան քաղաքներից նշանաւոր են. Պեկին, կայսրի աթոռանիստն և չինական տէրութեան մայութիւնների է ենթարկել։ Նրանք սիրում են ընտանեկան կեանքը և մեծ յարդանքով են վերաբերում դէպի իրանց ծնողները և մեծերը։ Մայրաքաղաքի մօտովն է անցնում չինական հոչաքնակից։ Մայրաքաղաքի մօտովն է անցնում չինական հոչաքնակին, Պեկինի նաւահանգիստն է և վաւոր պարիսպը։ Տեանցզին, Պեկինի նաւահանգիստն է և

լեռնոտ են, ծածկուած են անտառներով և ունին միշտարք հանգած ու գործող հրաբուղիսներ և տաք աղբերներ։ Դրա համար էլ ճապանիայում յաճախ են դատահում երկրաշարժներ։ Հենց միայն Կուրիլեան կղզիների վրայ գտնուում են մօտ 13 գործող հրաբուղիներ։ Այդ հրաբուղիներից ամենանշանաւորն է Փուզի-Եամա, որ ճապոնիայի ամենաբարձր սարն է՝ ($3\frac{1}{2}$ վերստ), տարույ 10 ամիսը շարունակ ձիւնով է ծածկուած և ճապոնացիների համար սրբազն սար է համարուում։

Ճապոնիայում յաճախ կրկնող երկրաշարժները ահազին վնասներ են պատճառում նրա ազգարնակութեանը։ Այդ երկրաշարժներին շատ անգամ զոհ են գնում հազարաւոր մարդիկ և աւերակ են դառնուում հազարաւոր տներ։

Ճապոնիան աշխարհիս ամենագեղեցիկ երկրներից մէկն է. նրա ափերը շատ են կտրատուած լրջապատող ծովերով և ովկիանոսներով և կազմուած են բազմաթիւ ծոցեր, նեղուցներ, կղզիներ, թերակղզիներ, հրուանդաններ և այլն։

Ճապոնիային շրջապատող ծովերը նրա կլիման լսոնաւացնում են, իսկ լեռները թանձրացնելով ծովային շոգին, գոյացնում են մի շաբար կարճ և ջրառատ գետեր ու առուակներ, որոնք շատ լաւ ոռոգում են ճապոնիայի պտղաւէտ հողը։

Ճապոնիան չունի ցածր հարթութիւններ. նրա գետերը կարճ և անաւարկելի են. դրա համար էլ ճապոնացիները հաղորդակցութիւնը կատարում են ծովերով և յայտնի ծովագնացներ են։

Ճապոնիան ընդհանրապէս գեղեցիկ, լսոնաւ և տաք կլիմա ունի, որովհետեւ նրա կղզիների մօտով շարունակ փշում է Կուրօ-Սիլօ կաշւած տաք հոսանքը։ Կլիմայի տեսակէտից ճապոնիան կարելի է երկու մասի բաժանել։ Հիւսիսային և հարաւային ճապոնիա։ Հարաւային ճապոնիա։ Հարաւային ճապոնիայի կլիման աւե-

լի տաք է, քան հիւսիսայինը։ Իր նշանաւոր կլիմայի չնորհիս ճապոնիան ունի ճոխ և բազմազան բուսականութիւն և կենդանիներ։ Բոյսերից նշանաւոր են մշտական—կանաչ ծառերը, գեղեցիկ կամելիա, ճապոնի տերեատ, թէյի և գագնի ծառ, արմաւենի, բամբուս կամ հնդկեղէդն և այլն։ Ճապոնիայի անտառները զարդարուած են մշտական կանաչ ծառերով։ Ճապոնիայի ամբողջ տարածութեան մեծ մասը ծածկուած է այդպիսի անտառներով։ Այդտեղ կարելի է գտնել գրեթէ այն բոլոր կենդանիները, որոնք յահառւկ են Կենդրոնական Սոխային։

Իր նպաստաւոր կլիմայի, ոռոգման և հողի պարագութեան չնորհիւ ճապոնիան հարուստ երկրներից մէկն է։ Նրա ընակիշները մեծ մասամբ պարապում են հողագործութեամբ։ Ճապոնիայի գրեթէ ամբողջ տարածութիւնը օրինակելի կերպով մշակուած է։

Ճապոնիայի կամ եապոնիայի ազգաբնակութիւնը բազկացած է եազօնացիներից, որոնք պատկանում են մննդուիան կամ դեղին ցեղին և շինացիների ցեղակից են։ Նրա ամենահին ընակիշները Այնաներն էին, որոնց մնացորդները մինչեւ այսօր էլ ապրում են եսոս և Կուրիլեան կղզիների վրայ և կիսավայրենի ժողովուրդ են։ Ժամանակի ընթացքում ճապոնացիները խառնուել են այնաների հետ։

Ճապոնացիները հասակով ցածր են շինացիներից և ունին աւելի հարթ երես։ Նրանք վերին աստիճանի լուրջ, ընդունակ մարդասէր և աշխատասէր մարդիկ են։

Տիրապետով կրօնը ճապոնիայում բուդդայականութիւնն է, թէի ճապոնական հին կրօն՝ Շինտօն դեռ ևս պահպանում է իւր գորութիւնը և ունի բաւականաշափ հետեղներ։ Այդ հետեղները աստուածացնում են բնութեան ոյժերը և երկրագում են իրանց նախնիքներին։ Ճապոնիայում կան բազմաթիւ տաճարներ, որոնք շինւած են ամենա-

զաւ տեղերում և շրջապատւած են կանաչաղարդ ծառերով։ Ամենաշատ և ամենահին տաճարները գտնելում են ձափսնիայի նախկին մայրաքաղաք Կիօսոյում։

Գլխաւորապէս հողագործութեամբ պարապող ճափսնացիները ցանում են մեծ մասամբ բրինձ և բակլա և մեծ խընամքով մշակում են իրանց հողերը։ Նրանք պարապում են նաև ձինորսութեամբ, առետրով և արհեստներով։ Արդիւնագործութիւնը բաւական զարգացած է ճափսնիայում։ Ճատ յայտնի են ճափսնական լախճապակին, թղթէ և մետաղի գործուածքները, որոնք բաւական էժան են և ահազին քանակութեամբ արտահանուում են դէպի եւրոպական զանազան երկրները, Վերջին յիսուն տարւայ ընթացքում ճափսնիան ահազին առաջադիմութիւն է արել իր քաղաքակրթութեամբ և արդիւնագործութեան զարգացմամբ։ Ներկայումս ճափսնիայում բազմաթիւ գործարաններ կան, որտեղ պատրաստում են զանազան տեսակ ապրանքներ։ Ճափսնացիները կարողանում են հիանալի կերպով շահագործել իրանց երկրի բնական հարստութիւնները, օր. քարածուխ, երկաթ և ուրիշ մետաղներ- որոնք շատ են նպաստում նրանց առնետրի զարգացմանը։ Ճափսնական գործարանների զանազան ապրանքները արտահանուում են նաև դէպի Զինաստան և ասիական ուրիշ երկրներ։

Ճափսնացիները շատ հին ժամանակներից ի վեր Ասիայի քաղաքակրթուած ժողովրդներից մէկն էին։ Սկզբում նրանք քաղաքակրթութիւնը, շատ սովորութիւններ և կրօնը փոխ են առել շինացիներից։ Վերջիններիս նման ճափսնացիներն էլ սիրում էին փակ կեանք վարել և խոյս էին տալիս եւրոպական աղղերից։ Մեզանից մօտ 60 տարի առաջ Եւրոպացիները իրաւունք ստացան մուտք գործել ճափսնիա և իրանց քաղաքակրթութիւնը տարածել այնտեղ։ Ճափսնացիները սկսեցին ընդօրինակել Եւրոպական քաղաքակրթութիւնը։ Նրանք եւրոպա-

ցիների նման սկսեցին իրենց երկրում շինել երկաթուղիներ, անցկացնել հեռագրաթելեր և եւրոպական ձեւով կազմակերպեցին իրանց գալուցները, զօրքը և նաւատորմիզը։ Ճափսնացիները սկսեցին սերտ յարաբերութիւն ունենալ եւրոպացիների հետ, որոնցից նրանք չափազանց շատ օգտւեցին և այսօր կազմում են Ասիայի ամենաքաղաքակրթուած ժողովուրդը, որը կարող է մրցել եւրոպական շատ ազգերի հետ։ Ամեն տարի ճափսնական տէրութեան հաշւով Եւրոպայի և Ամերիկայի համալսարաններն են ուղարկւում բազմաթիւ ճափսնացի ուսանողներ, որոնք իրանց հայրենիքի լուսաւորութեան գործին մեծ ծառայութիւն են մատուցանում։

Ճափսնիան Ասիայի միակ երկիրն է, որտեղ կայսրի իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտով։ Կառավարութեան ձեր սահմանադրական միապետութիւնն է, որի դլուխն է ճափսնիայի կալորը, որ կոչւում է Միկազօ։ Նրա աթոռանիստն է ճափսնիայի մայրաքաղաք Տօվիօ կամ Շողօ, որ ունի 1,300,000 բնակիչ։ Ճափսնիայի կայսրի կամ Միկազօյի անձնաւորութիւնը սուրբ է համարւում։ Տէրութեան երկրորդ քաղաքն է Կիօտո կամ Միակօ, որ նրա հին մայրաքաղաքն է և ունի մօտ 350,000 բնակիչ։ Միւս քաղաքներից նշանաւոր են Նօկօնամա և Նակասակի նաւահագիստները, որոնք առետրական յարաբերութիւն ունին աշխարհիս նշանաւոր կենդրունների հետ։

Վերջին Ռուս-Ճափսնական պատերազմից յետոյ ճափսնիայի քաղաքական վարկը և ազգեցութիւնը շատ բարձրացաւ։ Ներկայումս նրա քաղաքական ազգեցութիւնը շատ զօրեղ է Կօրէալի և Զինաստանի տէրութիւնների վրայ։

Սախալին կղզու հարաւային մասն էլ պատկանում է ճափսնիային։

Ելեան մայր ցամաքի արևմտեան ավից Ամերիկան բաժանւած է Ատլանտեան ովկիանոսով։ Այդ ավի հիւսիսային կողմում նա ամենից շատ մօտ է Եւրոպայի այն մասին, որ կոչւում է Նորվեգիա։ Նորվեգիաի և Գրենլանդիայի հեռաւորութիւնը միմեանցից 1400 վերստէ։ Արեելեան մայր ցամաքի արեելեան ավից Ամերիկան բաժանւած է Մեծ կամ Խաղաղ ովկիանոսով։ Այդտեղ երկու միմեանց աւելի մօտ են Բեհրինգեան նեղուցում, որոնց հեռաւորութիւնը 100 վերստ է։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՐՔՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Աֆրիկայի նման Ամերիկան էլ գտնւում է հասարակածի երկու կողմերում։ Նա միւս մայր ցամաքներից տարրերում է նրանով, որ ամենաերկար ձգւած մալր ցամաքն է։ Հիւսիսից դէսի հարաւ նրա երկայնութիւնն է մօտ 15,000 վերստ, իսկ լայնութիւնը արեմուտքից դէսի արեելը ամենալայն մասում 5500 վերստ։ Իր մեծութեամբ Ամերիկան միքի փոքր է Ասիայից։

Ամերիկայի ամենահիւսիսային ծայրը Մուլչիսօն հրուանդանն է ($72\frac{1}{2}^{\circ}$ հիւսիսային լայնութեան), ամենահարաւայինը՝ Փուզարդ ($52\frac{1}{2}^{\circ}$), ամենաարեմտեանը՝ Հշլան-Վալլիսի հրուանդանը (174° արեմտեան երկարութեան) և ամենաարելեանը Շոկա հրուանդանը (17° արեմտեան երկարութեան)։ Ամբողջ Ամերիկայի տարածութիւնն է $38\frac{1}{2}$ միլիոն քառ. կիլոմետր։

Որովհետեւ Ամերիկան ամենաերկար ձգւած մայր ցամաքն է, դրա համար էլ նա անցնում է կլիմայական բոլոր գոտինեներով, բացառութեամբ միայն հարաւային Ցուրտ կամ Սառուցեալ գոտու։ Կլիմայական տեսակետից Ամերիկան միւս բոլոր մայր ցամաքներից ամենաբազմազանն է։

Ամերիկան չորս կողմից շրջապատւած է ովկիանոսներով, որոնցով նա բաժանւում է միւս մայր ցամաքներից։ Արե-

Ամերիկան բաղկացած է երկու մասերից՝ Հիւսիսային և Հարաւալին Ամերիկա, որոնք միացած են միմեանց հետ մի երկար և նեղ ցամաքով, որ կազմում է Կենդրոնական Ամերիկան, Անթիւեան կղզիներով։ Կենդրոնական Ամերիկայի ամենանեղ մասը կոչւում է Պանամայի պարանոց։ Հիւսիսային և Հարաւալին Ամերիկան միմեանցից բաժանւած են Մեկսիկայի ծոցով և Կարայիրեան ծովով, որոնք կազմում են Ատլանտեան ովկիանոսի մասերը։

Հիւսիսային Ամերիկայի ավերը շրջապատող ովկիանոսներով շատ են կտրատւած։ Նա գտնւում է հիւսիսային կիսագնդում և իր ավերի գծագրութեամբ նման է միենոյն կիսագնդում գտնւող միւս մայր ցամաքներին՝ Եւրոպային և Ասիային։ Ընդհակառակը Հարաւալին Ամերիկան գտնւում է հարաւային կիսագնդում, նրա ավերը շրջապատող ովկիանոսներով քիչ են կտրատւած և նա իր ավային գծագրութեամբ նման է միենոյն կիսագնդում գտնւող միւս մայր ցամաքներին՝ Աֆրիկային և Աւստրալիային։

Երկու Ամերիկաները միմեանցից տարբերում են իրանց բնութեամբ, մակերեսոյթի կազմութեամբ, կենդանական և բուսական աշխարհներով և այլ։ Երկու Ամերիկաների հետ մենք ծանօթանանք առանձին առանձին։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ.

Հին ժամանակ Ամերիկան բոլորովին անծանօթ էր հերոսացիներին: Միայն Տասներորդ դարում, Քրիստոնից յետոյ հիւսիս-արևմտեան Եւրոպայի յանդուզն ծովագնացները իրանց նաւերով լողալով հասնում էին մինչև Գրենլանդիա կըդգուն և չիւսիոային Ամերիկայի հիւսիս-արևելեան ափին: Սակայն չնայելով այդ հանգամանքին, Ամերիկայի գոյութիւնը այդ ծովագնացների համար անորոշ մնաց և եւրոպացիները այդ մայր ցամարի մասին տեղեկութիւն ստացան միայն 1492 թ. երբ Ամերիկան առաջն անգամ յայտնագործեց և գտաւ Քըիստաֆոր Կոլումբոսը կամ Կոլոնը, Կուլոմբոսը ծնուել էր Խտալիայի ձենովա քաղաքում և երիտասարդ ժամանակը Խոպանիայի թագաւորի մօտ ծառայութեան էր մտել: Նա ինչպէս և նրա ժամանակակից մի քանի նշանաւոր մարդիկ աշխատում էին գտնել Հնդկաստան տանող ամենակարճ ճանապարհը և կարծում էին, որ դրան կարելի է հասնել Եւրոպայից նաւելով ուղիղ գէպի արևմուտք: 1492 թ. օգոստոսի 3-ին Ք. Կոլումբոսը այդ ուղղութեաւը նաւեց և հոկտեմբերի 3-ին հասաւ Բահամեան կղզիներից մէկին: Դրանից յետոյ Կոլումբոսը գտաւ Անժիլեան կղզիները և Կենդրոնական Ամերիկայի ափերը: Նրա գտած բոլոր կղզիները յետոյ ընդհանուր անունով կոչեցին Արեւմտեան Հնդկաստան կամ Վեստ-Ինդիա: Կոլումբոսի գտած բոլոր կղզիները զարձան Խոպանիայի թագաւորութեան սեպհականութիւնը, ոչից յետոյ սկսեցին այնտեղ գնալ ուրիշ ճանապարհորդները: Այդ ճանապարհորդներից մէկը՝ Ամերիկո Վեսպուչչին առաջն անգամ նկարագրեց նոր երկները և կազմեց նրանց քարտէզը: Նրա պատուի համար էլ նոր գտնւած մայր ցամաքը կոչւեցաւ Ամերիկա: Քիչ յետոյ յայտնի գարձաւ, որ Ամերիկայի միւս կողմում գտեւում է մեծ ովկիանոս և Ամերիկան ոչ

թէ Հնդկաստանն է, այլ մի բոլորովին նոր երկիր: 1520 թ. իսպանիացի ծովագնաց Մագելանը Ստանտեան ովկիանոսից մուաւ Մեծ կամ Խաղաղ ովկիանոսը մի նեղուցով, որ յետոյ նրա անունով կոչւեցաւ Մագելանի նեղուց և հասաւ Ասիային: Դրանից ճիշտ 100 տարի յետոյ յայտնի գարձաւ և Ամերիկայի ամենահարաւային ծայրը՝ չորս հրուանդանը:

Ամերիկան գտնւելուց յետոյ եւրոպական շատ ազգեր ըսկեցին զաղթել այնուղիւն և հիմնել զանազան զաղութներ:

Սկզբում նրանք այդ գաղութները հաստատում էին չարաւային և Կենդրոնական Ամերիկայի ափերում, իսկ յետոյ սկսեցին դիմել գէպի մայր ցամաքի խորքերը և անտեղ զանազան հօգեր գրաւել: Եւրոպացիների մեծ մասը մի քանի տասնեակ տարիներից յետոյ կենդրոնացաւ չիւսիսային Ամերիկայում և չարաւային Ամերիկայի ծայրերում, որտեղ կազմւեցան մի քանի անկախ տէրութիւններ:

Ներկայումս եւրոպական ազգերից շատերը Ամերիկաց յում ունին իրանց սեպհական զաղութները:

մութիւն ունին։ Հրաբխային գագաթների մեծ մասը հանդած գն։ Հիւսիսային Ամերիկայի գործող հրաբուղիների մեծամասնութիւնը գտնւում է Ալիասկա թերակղղու, Մեկսիկայի սարահարթի, Կենդրոնական Ամերիկայի, Ալէութեան և Փոքր-Անթիկան լեռների վրայ։ Հիւսիսային Ամերիկայի միւս լեռնաշղթաներից յայտնի են Ալեգանեան լեռները արևելան կողմում, որոնք բարձր չեն և ծածկւած են անտառներով։

Ժայռոտ և Ալեգանեան լեռնաշղթաների մէջ տարածւում է Հիւսիսային Ամերիկայի ամենաառաջին հարթութիւնը, որի հիւսիսային մասը կոչում է Հիւսիսային Ամերիկան, իսկ հարաւայինը՝ Միսսիսիպիան հարթութիւն։

Հիւսիսային ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ոռոգման տեսակէտից Հիւսիսային Ամերիկան բաւական նախանձելի պայմանների մէջ է գտնւում։ Նա ունի բաւականաշափ լճեր և գետեր, որոնք կանոնաւոր կերպով ոռոգում են Հիւսիսային Ամերիկայի գրեթէ ամբողջ տարածութիւնը։ Աշխարհիս ոչ մի մասում այնքան շատ լճեր չկան, որքան Հիւսիսային Ամերիկայում։ Այդ լճերը միացած են միմեանց հետ դետերով, որոնք ճանապարհին կազմում են ջրվէժներ։ Լճերի մեծ մասը գտնւում է Հիւսիսային Ամերիկայի հիւսարկելեան մասում։ Լճերից նշանաւոր են, Վերին, Միջինական, Հուրօն, Էրի եւ Օնտարիօ՝ Լաւրենտիոս գետով։ Այդ 5 լճերը կազմում են մի առանձին խումբ։ Երկրորդ խմբի լճերից նշանաւոր են Ատաբասկա և Մեծ Արջի, որոնցից գուրս եկող գետակները թափւում մն Մեկենզի գետը։ Լըճերի այդ երկու խմբերի մէջ գտնւում է Վինիպեգ լիճը, որից գուրս եկող Հելմոն գետը թափւում է Հուոզօնի ծոցը։ Բացի այդ լճերից Հիւսիսային Ամերիկայի ամենա-

Հիւսիսային Ամերիկան շրջապատող ովկիանոսներով աւելի շատ է կտրատւած, քան Հարաւային Ամերիկան։ Եւրոպայի և Սփայի նման նա էլ ունի բազմաթիւ կղզիներ և թերակղզիներ։ Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափը աւելի շատ է կտրատւած, քան արևմտեանը։ Հիւսիսային Ամերիկայի ամբողջ արևմտեան ափով տարածւում է մի լեռնաշղթայ, որ ընդհանուր անունով կոչւում է Կորդիլերեան։ Այդ լեռնաշղթան սկսում է Ալիասկա թերակղզուց և շարունակում է մինչև Հարաւային Ամերիկայի ծայրը։ Դրա համար էլ Հիւսիսային Ամերիկայի արևմտեան ամբողջ ափը ներկայացնում է մի սարահարթ։ Կորդիլերեան լեռնաշղթայի արևմելեան ճիւղաւորութիւնները կոչում են Ժայռոտ սարեր, իոկ արևմտեան լեռները հասկաղեան և Սիերուանեվառա։ Հիւսիսային Ամերիկայի արևմտեան ամբողջ սարահարթի ամենաբարձր մասը կազմում է Մեկսիկայի սարահարթը։ Կորդիլերեան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթները գտնւում են Ալիասկա թերակղզու լեռների վրայ, որոնցից ամենանշանաւորն է Մակ-Կինլէյ գագաթը ($6^{1/4}$ վերստ)։ Ժայռոտ և Կասկաղեան լեռները հրաբուղային կազ-

ՀԻՒՍԻՍԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾԱԿԱՑՆԱԿԱՐԾ

Հիւսիսային ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՌԱԳԱՎԱՐ

Հիւսիսային մասը մինչև ցուրտ կամ ուառուցեալ ովկիանոսի ափերը հարուստ է բազմաթիւ մեծ և փոքր լճերով, որոնք գոյացել են մի ժամանակ Ամերիկայի ամբողջ հիւսիսարելեան մասը ծածկւած սառցակոյտերից։ Առհասարակ չիւսիսային Ամերիկան աղի լճեր բիշ ունի. Նրանցից նշանաւոր է միայն Մեծ-Աղի լիճը, որը իր մեջ աւելի շատ աղ է պարունակում, քան ծովային ջուրը։

Հիւսիսային Ամերիկայի գետերից նշանաւոր են. Միսսիալի, որ նրա ամենաերկար գետն է։ Այդ գետի գլխաւոր վտակըն է Միսսուրի, որ իր սկիզբն է առնում Ժայռոտ լեռներից։ Նրա մեջ վտակներից յայտնի են Արկանզաս, Կարմիր և Օհիօ գետերը։ Հիւսիսային Ամերիկայի արևմտեան մասի գետերից նշանաւոր են Իւկօն, Կոլորադո և Կոլորածիա, որոնք կարճ և աննաւարկելի են և թափւում են Մեծ կամ Խաղաղ օվկիանոսը։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԼԻՄԱՆ

Հիւսիսային Ամերիկան, ինչպէս Եւրոպան և Ասիան գտնուում է Հիւսիսային կիսագնդում և անցնում է երեք գօտիներով. սակայն նրա ամենամեծ մասը գտնուում է բարեխառն գօտիում։ Հիւսիսային Ամերիկայի ցուրտ և բարեխառն գօտիներում գտնուող մասերը աւելի ցուրտ կլիմա ունին, քան Եւրոպայի միենոյն գօտիներում գտնուող մասերը, որի պատճառը հետեւան է. ա) որ Հիւսիսային Ամերիկայի ամենահիւսիսային մասը շատ լայն է և տարածւում է բեեռային սառոյցներում բ) նրա հիւսիսային և արեելեան կողմից փշում է ցուրտ հոսանքը և գ) Հիւսիսային Ամերիկան հիւսիսարելեան ցուրտ քամիների ազդեցութեանն է ենթարկւած և արևմտեան կողմից քարձր լեռներով կտրւած է հարաւարելեան տարածեան տաք հոսանքներից։ Հիւսիսային Ամերիկայի կլիման

մեծ մասամբ ցամաքային է։ Արևմտեան ափի կլիման արևելեանից աւելի տաք է։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հիւսիսային Ամերիկան գտնւելով երեք գօտիներում, ունի այդ գօտիներին յատուկ բոյսերը. Որովհետեւ այնտեղ շատ անձրևներ են գալիս, դրա համար էլ Հիւսիսային Ամերիկան հարուստ է գլխաւորապէս անտառներով։ Այդ անտառների ծառերից նշանաւոր են մշտական կանանչ ծառերը։ Հիւսիսային Ամերիկայի ներքին մասը անապատային է, որովհետեւ այնտեղ քիչ անձրևներ են գալիս։ Սակայն այդ անապատային մասը քիչ տարածութիւն է բռնում։ Հիւսիսային Ամերիկայի ամենահիւսիսային մասը ծածկւած է մասութիւնով։

Հիւսիսային Ամերիկայի անտառները Եւրոպական և Ասիական անտառներից տարբերում են նրանով, որ նրանք սովորաբար հարուստ են աւելի բազմազան ծառերով, որոնք խոշոր շափերի են համնում; քան Եւրոպայում և Ասիայում ծառերից նշանաւոր են հաճարի, հասարակ փիճի, տխրի և կաղնի ծառերը և այլն։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆԳԱՆԻՆԵՐԸ.

Հիւսիսային Ամերիկան շունի բազմազան կենդանիներ։ Նրա կենդանիները շատ նման են Ասիական և Եւրոպական կենդանիներին, որովհետեւ Հիւսիսային Ամերիկան, որ Ասիայից այժմ բաժանւած է մի նեղուցով, մի ժամանակ հաւանորէն նրա հետ միացած է եղել և երկու մայր ցամաքներն էլ միենոյն կենդանիներն են ունեցել։ Հիւսիսային Ամերիկայի կենդանիներից նշանաւոր են, ամերիկեան բիսոն (վայրիցու), կապիկ, խոշոր եղն, մարգաղետնի շուն, հիւսիսային եղջերու,

գայլ, սև արջ, օձ, սպիտակ կղաքիս, ջրշուն, ջրարջ և ալին, իսկ թռչուններից նշանաւոր են հնդկահաւը և զանազան տեսակի կրծող թռչունները:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հիւսիսային Ամերիկան ունի 100 միլիոնից աւելի քնակիչ: Նրա միայն արեելեան և հարաւային մասերը ունին խիտ ազդաբնակութիւն: Մինչև Ամերիկայի գիւտը, (1492 թ.) Հիւսիսային Ամերիկայում ապրում էին մոնղոլեան ցեղին պատկանող էսլիմուները և ամերիկական ցեղին պատկանող կարմրակաշի հնդիկները: Վերջներս էլ բաժանում էին զանազան ցեղերի և ներկայացնում էին մի քանի, միմեանցից բաւական տարբեր ժողովուրդներ: Այդ ժողովրդներից միայն ացտեկները՝ Մելսիկայի բնիկները հասան որոշ զարգացման, նստակեաց կեանք էին վարում իրենց գիւղերում և բազարներում, պարապում էին հողագործութեամբ և ունէին իրանց նշանագրերը ու մանր տէրութիւնները. իսկ մնացած հնդիկները ինչպէս հին ժամանակ, այնպէս էլ ներկայումս Հիւսիսային Ամերիկայի զանազան մասերում թափառական կեանք են վարում: Ներկայումս էլ հնդիկ տղամարդիկ պարապում են որսորդութեամբ, իսկ նրանց կանայք գլխաւորապէս կատարում են տնային աշխատանքներ: Թափառական հնդիկները ապրում են ծառերի կեղեններից կամ ամերիկական բիսոնի մօրթուց պատրաստած վրանների տակ և քարշ են տալիս իրանց աննախանձելի գոյութիւնը: Նրանք ներկում են իրանց երեսները զանազան գոյներով, զլուխները զարդարում են բիսոնի եղջիւրներով, թռչունների փետուրներով և այլն:

Հատ անգամ այդ վայրենի հնդիկների զանազան ցեղերի մէջ ծագում են արիստահեղ կոխներ, որոնց շնորհիւ նրանց թիւը հետգհետէ քանանում է: Առհասարակ հնդիկը սսվոր է

Փիզիքական տանջանկների և համբերութեամբ քարշ է տալիս իր գոյութիւնը:

Հնդիկները պաշտում են Մեծ Ոգոսն, որ հովանաւորում է նըանց քաջերին և բարի մարդկանց. Նրանք հաւատում են նաև հանդերձեալ կեանքին: Հնդիկների թիւը, որ ամբաղջ Հիւսիսային Ամերիկայում հասնում է մօտ 14 միլիոնի, ժամանակի ընթացքում—հետգհետէ քշանում է:

Հիւսիսային Ամերիկայի բնիկներն են և էսկիմոսները, որոնք գլխաւորապէս ապրում են բենային արշիպելագի կղիների վրայ, մայր ցամաքի ամենահիւսիսային մասում և Թրենլանդիա կղզու հարաւ-արևելեան ափում: Նրանք մեծ մասամբ հեթանոսներ են և պարապում են որսորդութեամբ ու ձկնորսութեամբ:

Այժմ Հիւսիսային Ամերիկայում ապրում են մարդկային երեք՝ սպիտակ, գեղին և սև ցեղերին բնակիչները: Նրա ամերիկայի զարգացմանը կան մասը պատկանում է սպիրուլզ ազդաբնակութեան^{3/4} - կան մասը պատկանում է սպիտակ կամ միջերկրական ցեղին, չնայելով, որ Հիւսիսային Ամերիկայի բնիկները պատկանում են դեղին ցեղին:

Սպիտակ ցեղին պատկանող բնակիչները Հիւսիսային Ամերիկա զարթեցին 15-րդ դարուց սկսած, երբ Քրիստափոր Կոլումբոսը գտաւ Ամերիկան: Այդ գաղթականութիւնը տեսում է մինչև այսօր և հետեապէս սպիտակ ցեղը Ամերիկայում հետգհետէ բազմանում է: Սպիտակ ցեղին պատկանող բնակիչների թիւը Հիւսիսային Ամերիկայում հասնում է մօտ 80 ների թիւը Հիւսիսային Ամերիկայում հասնում է մօտ 80 միլիոնի, որոնք մեծ մասամբ եւրոպացիներ են: Դրանցից միջինի, որոնք մեծ մասամբ եւրոպացիներ, ֆրանսուացիները և գերմանացիները բնակում են Հիւսիսային Ամերիկայի միջին, իսկ իսպանացիները և փորթուգալացիները հարաւային մասում:

Որովհեան Հիւսիսային Ամերիկան նպաստաւոր կլիմա ունի, դրա համար գաղթական եւրապացիները շուտով ընտեղանում են այդ կլիմային: Ժամանակի ընթացքում Եւրոպացիկանում են այդ կլիմային:

ները ապրելով Ամերիկայի բնիկների հետ, նրանց հետ խառնել և կազմել են մի քանի խառնուրդ ժողովրդներ, որոնք տարբեր անուններ են կրում. օր սպիտակների և Տնդիկների սերունդը կոչւում են ՄԵՇՏԵՇՆԵՐ, սպիտակների և ՆԵՐԵՐԻ խառնուրդը՝ ՄՈՒՂԱՄԱՆԵՐ և ՆԵՐԵՐԻ ու ՀՆԴԻԿՆԵՐԻ խառնուրդը՝ ՊԱՄԹՈՆԵՐ. Փորթուգալացիների և խոպանացիների այն սերունդը, որ ծնուել է ԿԵՆԴՐՈՆԱԼԱՆ և ՀԱՐԱՍԱՅԻՆ Ամերիկայում, բաւական տարբերում է իսկական եւրոպացիներից այդ սերունդին պատկանողները կոչւում են ԿՐԵՉՈՂՆԵՐ:

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԵԽԵՇՆԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԸ

Ամերիկայի մայր ցամաքի հիւսիսային կողմում գտնուում է կղզիների մի մեծ արշիպելագ. Այդ կղզիները ընդհանուր անունով կոչւում են ԲՆԵՆՈԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐ և բաժանում են երկու խմբերի. կղզիների առաջին խումբը, որ մայր ցամաքին աւելի մօտ է գտնուում, բաղկացած է մի շարք խոչոր կղզիներից, որոնցից ամենանշանաւորն է ԲԱՋԻՆԻ ԵՐԿՐԸ. Վերջինս իւր մեծութեամբ աշխարհի շրբորդ կղզին է. Կղզիների երկրորդ խումբը բաղկացած է մի շարք մեծ ու փոքր կղզիներից, որոնք գտնուում են առաջին խմբի կղզիներից գէպի արեելք. Երկրորդ խմբի կղզիներից ամենանշանաւորն է ԳՐԵՆԼԱՆԴԻԱՆ, որ աշխարհի ամենամեծ կղզին է.

Գրենլանդիա կղզին, որ իր մեծութեամբ գրեթէ հաւասար է Եւրոպական Ռուսաստանի կէսին, Կերկայացնում է մի բարձր սարահարթ, որը դրեթէ ամբողջապէս ծածկւած է հաստ սառոյցով. Ամառը միայն կղզու ամբողջ մակերսոյթը ծածկող սառցի մի մասը հալում է և գետակներ ու առակներ է կազմում. Այնահեղ երեր ամիս շաբունակ արև չէ լինում, տիրում է մշտական գիշեր և լուսաւորում է մեայն հիւսիսափայլով. Կղզու վրայ մօտ 9 ամիս ձմեռ է լինում և

երեր ամիս ամառը Գրենլանդիա կղզին իր ցուրտ կլիմացի շնորհիւ շատ աղքատ է բայսերով, որոնք աճում են միմիայն ամառը. Կենդանական աշխարհը ընդհակառակը այնքան էլ աղքատ չէ: Կղզու ջրերը լիքն են ձկներով և ջրային կենդանիներով, որոնցից յայտնի են կէտը, ծովացուլը և փոկը: Աչքի են՝ ընկնում նաև կղզու ծովային թռչունները և ցամարային կենդանիները, որոնցից նշանաւոր են եղջերուն, եղը և սպիտակ արջը:

Գրենլանդիա կղզին պատկանում է գանխացիներին, որոնք թւով վեց հարիւրից աւելի չեն: Սակայն կղզու խսկական ընակիշները կազմում են մօտ 10,500 էսկիմոսները:

Էսկիմոսներն ունին կարճ հասակ, կարճ ոտներ ու ձեռքեր, հարթ երես և դեղնաւուն կաշի: Ամառը էսկիմոսները ապրում են կենդանիների կաշուց պատրաստած վրանների տակ, իսկ ձմեռը ընակարաններում, որոնք շինուած են լինում քարից և երբեմն էլ ձիւնից: Նրանք հագնում են տաք զգեստներ, որոնք պատրաստում են կաշուց կամ մորթուց: Էսկիմոսի տնային գլխաւոր կենդանին շունն է, որին նա լծում է իր թեթե սահնակը: Էսկիմոսները իրանց գոյութիւնը գլխաւորապէս պահպանում են ձկնորսութեամբ: Նրանք որսում են ձկներ, թռչուններ և հիւսիսային եղջերու:

Դանիացիները պարագում են ձկնորսութեամբ և աշխատում են հողագործութիւնը հետզհետէ զարգացնել կղզու վայ: Նրանց ամենամեծ գաղութն է Ռավերնիվիզ գիւղը: Տարին մի անգամ օգոստոս ամսին Դանիացից զալիս են շոգենաւեր, որոնք բերում են փոստը և կղզուց արտահանում են որսորդութեան արդիւնքները:

ԿԱՆԱԴԱՆ ԵՒ ՆԻՒՓԱՌԻՆԴԼԵՆԴ

Կանադան և Նիւֆառնդլենդը կազմում են անդպիական կալուածները չիւսիսային Սմերիկայում։ Նրանց ամբողջ տարածութիւնն է $8\frac{1}{2}$ միլիոն քառ. կիլոմետր, որի վրայ ապրում են 5,750,000 բնակիչ։ Այդ երկները իրանց մեծութեամբ գրեթէ հաւասար են Եւրոպային, բացառութեամբ՝ նրա հարաւային թերակղիների և գտնուում են միենայն լայնութեան տակ, ինչպէս և Եւրոպան։ Սակայն չնայելով այդ հանդամանքին, Կանադան և Նիւֆառնդլենդը աւելի ցուրտ կլիմա և ազդատ ընութիւն ունին, քան Եւրոպան։ Վերոյիշեալ երկու երկները իրանց կլիմայով և բնութեամբ աւելի շատ նման են Սիբիրին, գրա համար էլ կոչում են ամերիկական Սիբիր։

Կանադան և Նիւֆառնդլենդը երկու կողմից սահմանափակւած են ովկիանոսներով, որոնք հարուստ են մի քանի շը սառչող նաւահանգիստներով։ Կանադան ամբողջ տարին հաղորդակցութիւն ունի Ասիայի և Եւրոպայի հետ։ Միայն հիսխային կողմից Կանադան, ինչպէս և Ասիայում Սիբիրը, դժուարամատշելի է, որովհետեւ նրա ափերը գրեթէ ամբողջ տարին պատած են սառոյցով։

Կանադայի արևմտեան կողմում տարածում են բարձր լեռներ, իսկ մնացած մասը ներկայացնում է մի հարթութիւն, որի մանաւանդ արևմտեան մասը չատ պտղաբեր է և հարուստ մեծ ու փոքր լճերով։ Կանադայի աղբարնափութեան մեծ մասը ավրում է արևելեան մասում ու. Լաւրինտիոս գետի և Ճերի ափերում։

Կանադա գաղթող առաջին Եւրոպացիները ֆրանսիացիներն էին, որոնք ներկայումս էլ կազմում են նրա ամբողջ աղբարնակութեան $\frac{1}{8}$ -կան մասը։ Կանադայի ֆրանսիացիները մինչև այսօր էլ պահպանել են իրենց մայրենի լեզուն և

աղղային սովորութիւններից շատերը։ Փրանսիացիներից յետոյ Կանադա գաղթեցին անգլիացիները, որոնց այժմ պատկանում է այդ երկիրը։ Բացի այդ երկու աղղերից ամեն տարի Եւրոպական զանազան երկրներից Կանադա են գաղթում ուրիշ աղղեր էլ, որոնք մեծ մասամբ բնակութիւն են հաստատում երկրի արեմտեան մասում։

Կանադայի բնակիչները զլիսաւրապէս պարապում են փայտի առեստրով։ Ամբողջ երկրի $\frac{1}{4}$ -կան մասը ծածկւած է անտառներով, մանաւանդ հիւսիս-արևմտեան կողմում։ Այդ անտառները ամեն տարի ահադին քանակութեամբ փայտ են մատակարարում, որը և կազմում է Կանադայի առեստրի գլխաւոր առարկան։ Կանադայից ամեն տարի արտահանում են դէպի օտար երկրներ մօտ 70 միլիոն ոռուրու փայտ։ Բացի փայտի առեստրից Կանադայի բնակիչները պարապում են նաև հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Հացահատիկներից մշակում են ցորեն, գարի, հաճար և պտղատու ծառեր։

Որովհետեւ Կանադան անմարդաբնակ հողեր շատ ունի, դրա համար էլ այդ երկրի կառավարութիւնը նոր գաղթականներին բաւականաշափ հողաբաժիններ է տալիս։ Սակայն այդ գաղթականների միայն վոքրամանութիւնը նստակեաց կեանք է վարում, իսկ մեծ մասը իր հողից մի քանի տարի օգտւելուց յետոյ, սկսում է թափառել դէպի ուրիշ նոր հողաբաժիններ։ Այդ թափառական հողագործները Սմերիկայում կոչում են սկվատտերներ։ Ճատ յայտնի է Կանադայի կաշին, որ ահագին քանակութեամբ արահանուում է Եւրոպա և Սմերիկայի միւս երկիրները։

Կանադայի արևելեան վասի՝ մանաւանդ Նիւֆառնդլենդի բի բնակիչները զլիսաւրապէս պարապում են ձկնորսութեամբ։ Այդ Նիւֆառնդլենդը աշխարհիս, ձկներով ամենահարուստ երկրներից մէկն է։ Ձկնորսութեամբ պարապում են

ոչ միայն կանագացիները, այլ և եւրոպացիները, որոնք գըշտաւորապէս փրփրուկ կամ բրածուկ են որում:

Երդինագործութիւնը Կանագայում և Նիւֆառնդլէնդում զարգացած չէ. այդ երկրները գործարանական ասլրանը ներ են ստանում Անգլիայից և Հիւսիսային Ռմերիկայի Միացեալ Նահանգներից: Ճանապարհների հաղորդակցութիւնը, մանաւանդ դետերով շատ զարգացած է, որը երբեմն խանգարում է ջրվէժներով: Ջրվէժներից նշանաւոր է Էրի և Օնթարիօ լճերի մէջ գտնուող Նիւագարայի ջրվէժը, որ աշխարհի ամենամեծն է:

Կանագան մի կիսանկախ անգղիական գաղութ է, որ կառավարում է անգղիական թագաւորից նշանակւած Դենեբրալ Նահանգապետով: Սակայն այդ երկրը իսկապէս կառավարում է ժողովրդից ընտրւած ներկայացուցիչներից կազմած պարլամենտով, որը գումարում է Օտտավա քաղաքում:

Կանագայի ամբողջ շրջանը բաղկացած է հետեւալ գըշտաւոր մասերից.

ա) Հուղօնի ծոցի երկիր, որը Կանագայի ամենաարդարակ և քիչ աղգարնակութիւն ունեցող մասն է: Այդ երկրը տարածում է ժայռոտ լեռներից մինչև Հուղգօնի ծոցը: Նրա ընակիշները կազմում են էակիմուները և հնդիկները, որոնք պարապում են որսորդութեամբ և ձկնորսութեամբ: Այնտեղ եւրոպացի գտղթականներ և քաղաքներ քիչ կան: 1896 թ. Կլօնղէյկի շրջանում ոսկու աւագ, որի պատճառով բաւականաշափ եւրոպացիներ են գնում այնտեղ ոսկաբեր աւազը շահագործելու: Հուղգօնի ծոցի երկրի մի մասն է կազմում և Լաբրադօր թերակղղին, որը մեծ մասամբ ծածկած է անտառներով:

բ) Բըրիտանական Կոլումբիան մի լիոնոտ երկիր է, որ գտնում է Կանագայի արևմտեան մասում՝ Մեծ կամ Խաղաղ օվկիանոսի ափին: Այդ երկրի վրայով փշում է տաք հոսանք,

որը երկիրը մշակման համար նպաստաւոր է դարձնում: Այնտեղ աճում են բարեխառն գոտու նշանաւոր բոյսերը: Բրիտանական Կոլումբիան նշանաւոր է իր անտառներով և ոսկու տաղով, որոնք գլխաւորապէս շահագործւում են այնտեղ ապրող անգղիացիների շնորհիւ: Ամեն տարի ահագին թւով գաղթականներ են գնում Բրիտանական Կոլումբիա ոչ միայն Ֆրուտայից, այլ և Ասիայից՝ մանաւանդ Հինաստանից: Երկրի գլխաւոր քաղաքն է Վիկտորիա, որ գտնուում է Վանկուվեր կղզու վրայ:

գ) Խակական Կանադան, որ գտնուում է ամերիկական մեծ լճերի հիւսիսային կողմում և բռնում է ու. Լաւրենտիոսի գետի հովիտը: Խոկական Կանադան անգղիացիների ամենանշանաւոր կալուածն է Հիւսիսային Ամերիկայում: Նրա կղման մեզմ է և հոգագործութեան համար բաւական նպաստաւոր: Խոկական Կանագայում Եւրոպայի գաղթականների թիւը ժամանակի ընթացքում հետզհետէ բազմանում է, շնորհիւ այն բազմաթիւ նաւթահողերի, որոնք վազուց ի վեր արեան են եկել այդ երկրում: Խոկական Կանադան անգղիացիների ամենախիստ ազգաբնակութիւն ունեցող կալուածն է Հիւսիսային Ամերիկայում: Նրա ընակիշների մի զգալի մասը կազմում են ֆրանսիացիները, որովհետեւ մի ժամանակ դրանց էր պատկանում Կանադան: Օտտավա գետով Կանադան բաժանում է երկու մասի. Վերին Կանադա կամ Օնթարիօ և Ներքին Կանադա կամ Կվերէկ: Վերին Կանագայի գլխաւոր քաղաքն է Օտտավա, որ մինչոյն ժամանակ անգղիական կալուածների ամենազիստաւոր քաղաքն է Հիւսիսային Ամերիկայում: Երկրորդ քաղաքն է Տորոնտո, որ առեւթուկան նշանաւոր քաղաք է: Ներքին Կանագայի կամ Կվերէկի գլխաւոր քաղաքներն են Կվերէկ և Մոնրէալ, որոնք կանադեան առեւթորի կենդօններն են:

դ) Նոր Բրաունշվայգ և Նոր Շոտլանդիա, որոնք

գտնուում են ս. Լաւրենտիոսի գետից դէպի հարաւ։ Նոր-Ծոտ-
լանդիայի գլխաւոր քաղաքն է Հայիքակս, որը միևնույն ժա-
մանակ նշանաւոր է իրքի չսառչող նաւահանգիստ։

ե) Նիւֆառնդլէնդ կղզին գրեթէ ամբողջապէս ծածկ-
ւած է անտառներով, լճերով և ճահիճներով և յայտնի է իր
վայրենի գաղաններով և ձկներով։ Բնակիչները գլխաւորա-
պէս պարապում են ձկնորսութեամբ և մեծ մասամբ որսում
են փրփրուկ կամ բրածուկ, որից ահագին քանակութեամբ
արտահանուում է դէպի Եւրոպա։ Նիւֆառնդլէնդ կղզին նշա-
նաւոր է նաև իր չներով, որոնք կոչւում են ջրոյզ չներ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԸՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԵՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ.

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների սահման-
ները կազմում են հիւսիսային կողմից Կանադան, հարաւա-
յին կողմից Մեկսիկան և Մեկսիկայի ծոցը, արևմտեան կող-
մից Մեծ կամ Խաղաղ ովկիանոսը և արեւելեան կողմից Առ-
լանտեան ովկիանոսը։ Միացեալ Նահանգներին է պատկա-
նում և Ալիասկա թերակղզին, որ գտնում է Հիւսիսային
Ըմերիկայի հիւսիսարևմտեան մասում և գնել է ուսոներից։
Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների տարածու-
թինը հաւասար է 9 միլիոն քառ. կիլոմետրի, որի վրայ ապ-
փում են մօտ 75 միլիոն բնակիչ։ Իրանց տարածութեամբ
Միացեալ Նահանգները գրեթէ հաւասար են ամբողջ Եւրոպային։

Մակերեսոյթի կազմութեան և ոռոգման տեսակներից Մի-
ացեալ Նահանգները բաժանվում են երեք՝ միմեանցից տար-
բեր մասերի։

ա) Միացեալ Նահանգների արևմտեան մասը մի սարա-
հարթ է, որ գտնուում է Փայռոտ, Կասկադեան և Սիերա-
Նեվայա լեռնաշղթաների մէջ։ Այդ սարահարթը չոր ու ան-
տառապուրկ է՝ որովհետեւ չորս կողմից շրջապատող լեռները

նրան զբկում են ծովային հողմերից։ Միացեալ Նահանգնե-
րի այդ մասի լեռները հարուստ են ոսկու և արծաթի հան-
քերով, որոնք բնակիչներին մեծամեծ օգուտներ են տալիս։
Նրա գետերը մեծ մասամբ աննաւարկելի են, որոնք թա-
փուում են կամ լճերը և չունին վտակներ, կամ խոր ձորե-
րով հաղիւ հասնում են ովկիանոսին, ինչպէս օր. Կոլորադօ
և Կոլումբիա գետերը։

բ) Միացեալ Նահանգների արեւելեան մասը Ներկայաց-
նում է մի ցածր հարթութիւն, որի վրայ տարածուում են
Վլեզանեան անտառաշատ լեռները։ Այդ լեռները հարուստ
են քարածխի, աղի և երկաթի հանքերով։ Վլեզանեան լեռ-
նաշղթայից դէպի արեւելք գտնուող ամբողջ տարածութիւնը
ոռոգուում է մի քանի կարճ, խոր և ջրառատ գետերով, ո-
րոնցից նշանաւոր են Հուդզոն, Քելավեր և Պոտոմակ։

գ) Միացեալ Նահանգների միջին մասը Ներկայացնում
է մի ընդարձակ հարթութիւն, որ գտնում է Փայռոտ և
Վլեզանեան լեռնաշղթաների մէջ։ Այդ հարթութիւնը դէպի
Մեկսիկայի ծոցը հետզհետէ ցածրանում է և ոռոգուում է
Միսսիսիպի գետով, որի մէջ թափուում են Օհիօ, Միսսուրի,
Արկանզաս և Կարմիր վտակները։ Միացեալ Նահանգների
միջին մասը հարուստ է իր տաք աղբիւրներով և հեյզէր-
ներով, բարեբեր հողերով և մարգագետիններով, որոնցից
բնակիչները ահագին օգուտներ են ոտանում։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները գտնուում
են բարեխառն զօտու ամենատաք մասում։ Նրանց թէ մա-
կերեսոյթի կազմութիւնը և թէ կլիման բազմազան են, որովհետեւ
ահագին տարածութիւն են ըսնում։ Միացեալ Նահանգների
հիւսիսային կողմում լինում է սաստիկ ձմեռ սառնամանիքով
և ամիսներով ձիւն է լինում, այն ինչ Ֆլորիդայում մշտական
ամառ։ Նահանգների արեւելեան կողմում կլիման աւելի ցուրտ
է, քան արևմտեան կողմում։ Իր բաղմազան կլիմայի չնորհիւ

Միացեալ նահանգները ունին բազմազան բուսականութիւն և կենդանիներ։ Բոյսերից նշանաւոր են հաճար, զարի, ցորեն, եղիպտացորեն, բրինձ, բամբակ, լեզակ, ծխախոտ, չաքարեղիզն և պտղատու զանազան ծառեր, իսկ կենդանիներից ջրարջ, քարայծ, կուլը և որմզգեղն կամ էշայծհամ։

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ

Միացեալ նահանգները կազմել են անզվիական այն գաղութներից, որոնք հիմնել էին 17-րդ դարում Ատլանտիան ովկիանոսի հիւսիս արեելեան ափերում։ Այդ գաղութները 18-րդ դարում պատերազմելով Սնզգիայի հետ, անկախութիւն և ազատութիւն ձեռք բերին։ Այն ժամանակ այդ գաղութները շատ փոքր տարածութիւն էին բռնում և երեք միլիոնից աւելի բնակիչներ չունեին։ Եւրոպացի գաղթականների բնակավայրերի արեմտեան կողմում ապրում էին ննդիկների բազմազան ցեղերը, որոնք միմիանց հետ շարունակ կը ռուներ էին մղում։ Ժամանակի ընթացքում եւրոպացի գաղթականների թիւը հետզհտէ բազմացաւ, նրանք սկսեցին հալածել և ճեշել ննդիկներին, որոնց երկիրը մինչև Մեծ կամ Խաղաղ ովկիանոսը գաղթականները տիրեցին։ Եւրոպացիները սկսեցին կանոնաւոր կերպով մշակել հողերը, հիմնեցին զանազան քաղաքներ և բազմաթիւ գիւղեր, որոնց ազգաբնակութիւնը ժամանակի ընթացքում զարմանալի կերպով աճեց։ Ներկայումս Միացեալ նահանգները ունին 75 միլիոն բնակիչ և 30-ից աւելի քաղաքներ, որոնցից իւրաքանչիւրը հարիւր հազարից աւելի բնակիչ ունի։ Իրանց բնակիչների շատութեամբ Միացեալ նահանգները զերազանցում են Եւրոպայի բոլոր տէրութիւններից, բացառութեամբ Ռուսաստանի։

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Միացեալ նահանգները իրանց ազգաբնակութեամբ ամբողջ Ամերիկայում ամենամեծ և ամենազօրեղ տէրութիւնն է։ Բնակիչները սպատկանում են միջերկրական կամ կովկասեան, նեղրական, մոնզուլական և ամերիկական ցեղերին։ Կովկասեան կամ մեշերկրական ցեղին սպատկանում են եւրոպացիները, որոնցից նշանաւոր են անզիացիները, գերմանացիները, իտալացիները, ֆրանսիացիները և այլն։ Մոնղոլեան ցեղին սպատկանում են այն բազմաթիւ չինացիները, որոնց Միացեալ նահանգներում պարագում են բանարութեամբ։ Նրանց թիւը վերջին ժամանակներու այնքան շատացաւ, որ Միացեալ նահանգների կառավարութիւնը մի յատացաւ, օր Միացեալ նահանգների կառավարութիւնը մի երկիրը։ Դրա տուկ օրէնքով գժուարացրեց նրանց մուտքը իր երկիրը։ Դրա գլւաւոր պատճառը այն հանգամանքն էր, որ չինացի բանուրները չնչին աշխատավարձ են ստանում և դրանով մրցում տեղացի բանւորների հետ։ Նեղրական ցեղին սպատկանում են նեղրերը, իսկ ամերիկական ցեղին ամերիկացի բնիկները։ Նեղրերը, իսկ ամերիկական ցեղին ամերիկացի բնիկները։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների արևելան մասը աւելի խիտ ազգաբնակութիւն ունի, քան արևմտեանը։ Սակայն ներկայումս արևմտեան մասը և Միսուրիի գետի հովտն և ազգաբնակութեամբ խտանում է, որովհետեւ այդ վիտն և ազգաբնակութեամբ գիրքը բնակութեան համար շատ նպաստաւոր է։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների բնակիչները վայելում են հաւասար իրաւունքներ և միմեանցից տարբերում են միայն իրանց զբաղմունքներով։ Տիրապետով կը ըստ գոյութիւն շունի։ Իւրաքանչիւր բնակիչ իրաւունք ունի այն կրօնին հետեւ, որին ինքն է ցանկանում։ Սակայն ըլնակիչների մեծամասնութիւնը պատկանում է բարոքական դաւանութեան, որը բաժանում է մի քանի շապանդիկի։ Ոչ

մի տէրութիւն այնքան մեծ ուշադրութիւն չէ դարձնում ժողովրդական կրթութեան վրայ, որքան Միացեալ Նահանգների կառավարութիւնը գրա համար էլ այստեղ կառավարութիւնը ահագին գումարներ է յատկացնում ժողովրդական և ուրիշ տեսակի գպրոցներ հիմնելու։ Այդ տեսակետից աշքի են ընկնում մանաւանդ Բօստօն և Փիյաղելֆիա քաղաքները, որտեղ բացի գպրոցներից ունին նաև մի շարք գիտական հիմնարկութիւններ։

Միացեալ Նահանգների բնակիչները զլիսաւորապէս պարապում են հողագործութեամբ, առետրով և անասնապահութեամբ։ Միացեալ Նահանգներից ստացւում է ահագին քանակութեամբ բարբակ և ծխախոտ։ Ենտեղի լեռները հարուստ են իրանց թանգարին մետաղներով, իսկ առանձնապէս Ալլեգանիան լեռնաշղթան նշանաւոր է երկաթով, աղով և քարածխով։ Արդիւնագործութիւնը շատ զարգացած է այնտեղ։ Իրանց առետրական նաւատորմիզով Միացեալ Նահանգները աշխարհիս երկրորդ տէրութիւնն են կազմում։ Առետրի զարգացմանը շատ են նպաստում երկրի ջրանցքները և յամաքային ճանապարհները և բացի դրանցից երկու ովկիանոսներով շրջապատւած լինելը, որոնց շնորհի Միացեալ Նահանգների բնակիչները յարաբերութիւն ունին եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի և Աւստրալիայի հետ։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների հասարակապետութիւնը բաղկացած է 49 միմեանցից անկախ հասարակապետութիւններից, որոնք միասին կազմում են մի գաշնակյական հանրապետութիւն։ Ալդ հասարակապետութիւններից իւրաքանչիւրը ունի իր սեպհական կառավարութիւնը։ Թաշնակցութիւնը կառավարում է մի կոնգրեսով, որը բաղկացած է ժողովրդից ընտրւած պատգամաւորներից։ Կոնգրեսն է հասարակում օրէնքները և ապրում է Ամերիկայի Սմերիկայի Միացեալ Նահանգներից նշանաւոր են հետեւաները.

Ամալու համար և այն։ Նա է որոշում ժողովրդական հարկերը, տուրքերն և մաքսերը։ Կօնգրէսի հրատարակած օրէնքների գործադրութեան համար հսկում է Հիւսիսային Ամերիկայի գործադրութեան համարակապետութեան նախագահը, Միացեալ Նահանգների հասարակապետութեան նախագահը, Այդ տեսակետից աշքի 4 տարի ժամանակով։ Իւրաքանչիւր հասարակապետութեան բոլոր ներքին գործերը կառավարում է նրա սենատը, որը բաղկացած է նահանգների բնակիչներից նրա սենատը, որը բաղկացած է նահանգների բնակիչներից ընտրւած պատգամաւորներից։ Իւրաքանչիւր նահանգում ընտրւած կամ հասարակապետութեան մէջ գործադիր իշխանութիւնը պատկանում է ընտրւած նահանգապետին։

Բացի 49 նահանգներից կամ հասարակապետութիւններից Միացեալ Նահանգների մէջ է մոնում նույն կոլումբիայի շրջանը, որ անմիջապէս կառավարւում է կօնգրէսով։ Կոլումբիայումն է գոտիւում։ Միացիալ Նահանգների մայրաքաղաք Բիացինագունը, որտեղ գումարւում է կօնգրէսը և ապրում է հասարակապետութեան նախագահը։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից նշանաւոր են հետեւաները.

1) Մասսաչուսէտ, որի գլխաւոր քաղաքն է Բօստօն։ Այս քաղաքը Հիւսիսային Ամերիկայի առետրական և արդիւնաբերական նշանաւոր կենդրուններից մէկն է, որ ունի մօտ 1/2 միլիոն բնակիչ։ Բօստօնումն է հրատարակում «Հայրենիք» հայկական շաբաթաթերթը, որ հայկական նշանաւոր թերթերից մէկն է։ Քաղաքում և նրա շրջականերում առաջականացած չայերը, որոնց մեծ մասը գաղափրում են բաւականաշատ չայերը, որոնց մօտ 20,000 է, որոնց հոգեոր ներկայացնուցիչն յերի թիւը մօտ 20,000 է, որոնց հոգեոր ներկայացնուցիչն է Ամերիկայի չայ առաջնորդը Ռևժլը քաղաքում։

2) Նիւ-Եօրը, համանուն գլխաւոր քաղաքով։ Նիւ-Եօրը Ամերիկայի յետոյ աշխարհիս երկրորդ առետրական քաղաքն է, խաղաղութեան, օտար պետութիւնների հետ յարաբերութիւն ունե-

տրով: Այս քաղաքը Ամերիկայի ամենաբազմամարդ քաղաքն է, որ ունի մօտ $3^{1/2}$ միլիոն բնակիչ:

3) Պենսիլվանիա, որի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են գերմանացիները: Նահանգի գլխաւոր քաղաքն է Ֆիլադելֆիա, որ առևտրական նշանաւոր քաղաք է, ունի 1,200000 բնակիչ և քաղմաթիւ զործարաններ:

Պենսիլվանիա նահանգի երկրորդ նշանաւոր քաղաքն է Փիտսբուրգ, որ մետաղային և նաւթային արդինապործութեան նշանաւոր կենդրոններից մէկն է:

4) Մերիլենդ, գլխաւոր քաղաքն է Բալթիմօր, որ յայտնի է ծխախոտի մեծ առևտրով:

5) Վիրջինիա, որի բնակիչները պարապում են ծխախոտի, բրնձի և շաքարեղիպի մշակմամբ:

6) Փլութիղա, յայտնի է իր հարուստ բնութեամբ:

7) Հիւսիսային-Կարոլինա, չունի նշանաւոր քաղաքներ:

8) Հարաւային-Կարոլինա, գլխաւոր քաղաքն է Չարլստոն, որի բնակիչները պարապում են բամբակի և բրնձի առևտրով:

9) Օհիո, գլխաւոր քաղաքն է Ցինցիննատի, որ յայտնի է երկաթէ մեքենաների զործարաններով: Բնակիչները պարապում են մսի առևտրով:

10) Իլինոյս, գլխաւոր քաղաքն է Չիկագօ, որ ունի մօտ 2,000,000 բնակիչ: Այս քաղաքը նշանաւոր է մսի, անասունների և փայտի առևտրով:

11) Միսսուրի, գլխաւոր քաղաքն է Սէն-Լուի, որ գլխաւում է Միսսիսիպի գետի հովտում և առևտրական նշանաւոր քաղաք է:

12) Լուիզիանա, գլխաւոր քաղաքն է Նոր-Օրլէան, որ բամբակի և շաքարի աւազի առաջին քաղաքն առևտրական է ամբողջ աշխարհում: Քաղաքը ունի 250,000 բնակիչ:

13) Տեխաս, որ Միացեալ նահանգներից ամենանոսք

ազգաբնակութիւն ունեցող տեղն է, որովհետի նրա տարածութեան մեծ մասը անապատալին է: Այս նահանգի բնակիչները գլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ:

14) Միսսիսիպի, որի բնակիչները պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ:

15) Նեվադա, հարուստ է արծաթի և քարածխի հանքերով:

16) Իւտա, որի տարածութեան մեծ մասը արհեստական կերպով է ոռոգւմ: Նահանգի բնակիչների մեծ մասը մօրմօն կոչւած կրօնական աղանդին է հետեւում: Իւտայի գըլխաւոր կենդրոնն է Աղի-Լճի քաղաքը:

17) Կալիֆորնիա, հասարակապետութեան պտղաէտունահանգներից մէկն է, որ յայտնի է իր ոսկու և արճիճինանիքներով: Գլխաւոր քաղաքն է Սան-Փրանցիսկօ, որի բնակիչները առևտուր են անում 2ինաստանի, ձապոնիայի և չինկաստանի հետ:

Հասարակապետութեան միւս նահանգներից նշանաւոր են Միչիգան, Վիսկոնսին և այլն:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներին պատկանում են Կուրսա և Փօրտորիկօ կղզիները Ամերիկայում և Սանդվիչեան կղզիները Ովկիանիայում:

ՄԻՃԻՆ ԿԱՄ ԿԵՆԴՐԾԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա մայր քամարի այն նեղ մասը, որ գտնում է Միացեալ նահանգներից դէպի հարաւ և նրա արեելեան կողմում գտնւող կղզիները միասին կազմում են Միջին կամ Կենդրոնական Ամերիկան: Ամերիկայի այդ մասը բաղկացած է մի շաբթ սարահարթներից: Միջին կամ Կենդրոնական Ամերիկան իր կլիմայով, բնութեամբ և ազգաբնակութեամբ աւելի նման է չարաւային, քան Հիւսիսային Ամերի-

կային: Միջին Ամերիկայի մեծ մասը գտնւում է տար կամ այրեցեալ գոտիում. դրա համար էլ այնտեղ գոյութիւն չունի ձմեռը և անձրևներ գալիս են միայն ամառնային ամիսները: Ըսենախոնաւ կլիման ունին Կենդրօնական Ամերիկայի միայն հարաւ-արևելեան մասը և կզգիները, որտեղ փըշանում է հիւսիս-արևելեան պասսատը:

Կենդրօնական կամ Միջին Ամերիկայի կլիման, բոյսերը և կենդանիները բաղմաղան են: Այնտեղ կան թէ բարեխառն և թէ այրեցեալ կամ տար գոտիների բոյսերն ու կենդանիները: Նրա տարածութեան մի խոշոր մասը ծածկւած է անտառներով, որոնք երկրի բնակիչներին բաւականաշափ փայտ են մատակարարում: Բոյսերից նշանաւոր են շաքարեղէզն, սուրճ, կակաօ, վանիլ, բրինձ, բամբակ, ծխախոտ, եղիպտացորն, ցորեն և հաճար. կենդանիներից աշքի են ընկնում կապիկը և եազուարը, իսկ թռչուններից թռւթակը, սոխակը և այլն:

Միջին կամ Կենդրօնական Ամերիկան ամենից շուտ գըտաւ Քրիստաֆոր Կոլումբոսը: Ամենից առաջ այնտեղ գաղութներ հիմնեցին իսպանացիները, որոնք իրանց գլխաւոր ուշաղրութիւնը դարձնում էին թանգագին մետաղներ ձեռք բերելու: Թէ նրանք բռնեցին Միջին Ամերիկայի մեծ մասը, բայց իրանք չէին պարապում հողագործութեամբ, այլ իրանց հողերը մշակում էին հնդիկների կամ Աֆրիկայից բերած նեղրերի ձեռքով: Տիրապետող իսպանացիները այնքան էլ չէին ճնշում հնդիկներին, այլ իրանց քարոզիչների միջացով աշխատում էին քրիստոնէութիւնը տարածել նրանց մէջ:

Կենդրօնական Ամերիկայի գրեթէ բոլոր մասերում աղպաբնակութեան մեծ մասը բաղկացած է հնդիկներից և մետիսներից, որոնք վաղ ժամանակներից ի վեր նստակեաց կեանք էին վարում և պարապում էին հողագործութեամբ: Քայլ հնդիկներից և մետիսներից Կենդրօնական Ամերիկայում

ապրում են նաև բաւականաշափ կրէօլներ, որոնք համար ւում են գաղթական իսպանացիների սերունդը և սակաւաթիւ նեղուեր:

Երկրի տիրապետող կրօնը կաթոլիկական գաւանութիւնն է. բնակիչները պարապում են երկրագործութեամբ, հանքագործութեամբ (արծաթ, ոսկի և թանգագին քարեր) և առետրով: 19-րդ դարու սկզբում գաղութների մեծ մասը իրանց յարաբերութիւնը կտրեցին իսպանիայի հետ և իրանց համար կաղմեցին մի քանի անկախ հասարակապետութիւններ: 19-րդ դարու վերջերին իսպանացիները կորցրին իրանց վերջին գաղութները՝ Կուռի և Պորտուգալիո կղզիները, որոնք անցան Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների հասարակապետութեան ձեռքը:

Միջին կամ Կենդրօնական Ամերիկայի տէրութիւններից նշանաւոր են հետեւեալները.

ա) Գվատեմալայի հասարակապետութիւն, որի գլխաւոր քաղաքն է Սոու-Գվատեմալա:

բ) Սան-Սալվադօրի հասարակապետութիւն, որի մայրաքաղաքն է Սան-Սալվատօր:

գ) Գոնդուրասի հասարակապետութիւն՝ Տեղուցիզալպա մայրաքաղաքով:

դ) Սիլվադորայի հասարակապետութիւն, որի մայրաքաղաքն է Մանագուա:

ե) Կոստա-Ռիկայի հասարակապետութիւն, որի մայրաքաղաքն է Սան-Խոաչ:

զ) Խիկատան թերազզու մի մասը պատկանում է Գոնդուրասի անդիկական գաղութին, որի գլխաւոր քաղաքն է Բելիզ:

է) Մեկսիկայի հասարակապետութիւն:

ՄԵԿՍԻԿԱՅԻ ՀԱՅԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Միջին կամ Կենդրոնական Ամերիկայի մեծ մասը բռնում
է Մեկսիկայի տէրութիւնը: Իր տարածութեամբ նա կազմում
է չիւսիսային Ասերիկայի Միացեալ Նահանգների $\frac{1}{5}$ կամ
մասը, սակայն Մեկսիկայի հասարակապետութիւնը իր մե-
ծութեամբ գերազանցում է եւրոպական բոլոր տէրութիւն-
ներից, բացառութեամբ միմեայն Ռուստատանի:

Մեկսիկան ընդհանրապէս ներկայացնում է մի բարձր
սարահարթ, որի միջին բարձրութիւնը հասնում է երկու
վերստի: Մեկսիկայի լեռները նշանաւոր են իրանց մի քանի
հրաբուղիներով, որոնցից ոմանք 5 վերստից աւելի բարձր են
և ծածկւած են մշտական ձիւնով. օր. Օրիզաքա և Պուազու-
տեսկեալ հրաբուղիները: Մեկսիկայի միայն ափերը և ցածր
մասերը ունին տաք և խոնաւ կլիմա և ծածկւած են անտառ-
ներով: Նրա սարահարթի մեծ մասը ունի չոր կլիմա:

Մեկսիկայի հասարակապետութեան ազգաբնակութեան
թիւը հասնում է $13\frac{1}{2}$ միլիոնի, որի մեծ մասը կազմում
են հնդիկները և մնտիսները:

Մեկսիկայի նախնական և բնիկ ազգաբնակութիւնը դեռ
Ամերիկայի գիւտից առաջ բաւական բարձր քաղաքակրթու-
թեան էր հասել: Երբ 16-րդ դարու սկզբում իսպանացիները
առաջին անգամ մտան Մեկսիկա, նրանք այնտեղ ծանօթա-
ցան մի մեծ տէրութեան հետ, որ հիմնել էին հնդիկների
ցեղակից ացտեկները: Ացտեկները պարապում էին հոգա-
գործութեամբ, մշակում էին մի քանի օգտակար բոյսեր, օր.
եղիպտացրեն, գիտաբանածոր և բամբակ, քարերից շինում
էին զէնքեր և մեծամեծ տաճարներ, որոնց մնացորդները
մինչև այսօր էլ պահպանեյ են իրանց գոյութիւնը:

Սպիտակ ցեղին սլատկանում են միմիայն Կրէօները:
Սրանք նման են հարաւային եւրոպացիներին, թէև նրանց

հատակը ցածր և կաշու գոյնը աւելի թխաւուն է, Կրէօները
առվարաբար նախաձեռնող և եռանկոտ մարդիկ չեն և հա-
զիւ են զիմանում ծանր աշխատանքներին: Բայց չնայելով
դրան կրէօները Մեկսիկայի ազգաբնակութեան տէրապետող
մասն են կազմում, որոնց պատկանում է նրա հոգերի մեծ
քաժինը: Կրէօները այդ հոգերը մշակում են հնդիկների և
մետիսների ձեռքով:

Մեկսիկայի ազգաբնակութիւնը գլխաւորապէս պարա-
պում է հոգագործութեամբ, հանքագործութեամբ և առե-
տրով: Նրանք մեծ հմտութեամբ մշակում են սուրճ, շաքա-
րեղիքն և այլն: Մեկսիկայի հանքերից նշանաւոր է արծաթը:
Ամբողջ աշխարհի արծաթի կէուը ստացւում է Մեկսիկայից:
Այստեղ այնքան էլ զարգացած չէ ճանապարհների հաղոր-
դակցութիւնը, որովհետև երկրի մակերեսոյթի կաղևութիւնը
լեռնոտ է:

Մեկսիկան հասարակապետութիւն է, որ իր կազմու-
թեամբ նման է Միացեալ Նահանգների հասարակապետու-
թեանը: Տէրութեան մայլարազարն է Մեկսիկօ, որտեղ նըս-
տում է հասարակապետութեան նախագահը: Մայրաքաղը
յայտնի է իր ծխախոտի գործարաններով և ունի 400,000
բնակիչ: Երկրորդ նշանաւոր քաղաքն է Լուիֆ. Փուօզի, որի
շրջակայրը յայտնի է արծաթի հանքերով: Առևտրական տե-
սակիստից նշանաւոր են նաև Վերա-Կրուց և Ակապուլկօ քա-
ղաքները:

Կենդրօնական Ամերիկայի հարաւային մասը իր տարա-
ծութեամբ և ազգաբնակութեամբ 4 անգամ Մեկսիկայից
փոքր է և լեռնոտ երկիր է: Նրա լեռների վրայ մինչեւ այսօր
էլ կան մի քանի հրաբուղիներ, որոնց վիժելը ահազին
միսամներ է պատճառում տեղական ազգաբնակութեանը:

Կենդրօնական Ամերիկայի հարաւային մասում գտնուում
են մի քանի անկախ հասարակապետութիւններ, որոնցից աշ-

քի է ընկնում Պանամաման։ Պանամայի հասարակապետութիւնը՝ գտնուում է համանուն պարանոցի վրայ։ Հասարակապետութեան Պանամա և Կոլոն նաւահանգիստները երկաթուղիով՝ միացած են միմեանց հետ։ Պանաման գտնուում է Մեծ կամ Խաղաղ օվկիանոսի, իսկ Կոլոնը Սալանտեան ովկիանոսի ափում։ Ներկալում այդ երկու նաւահանգիստների մէջ անց են կացնում մի մեծ ջրանցք, որ պէտք միացնի Մեծ կամ Խաղաղ և Սալանտեան ովկիանոսները միմեանց հետ։ Պանամայի ապագայ ջրանցքը ահազին նշանակութիւն պէտք է ունենայ առետրի զարգացման համար, որովհետև դրա չնորհիւ երոպան և Հիւսիսային Ամերիկան հեշտութեամբ առետրական յարաբերութեան մէջ կմտնեն առհասարակ այն բռնը երկրների հետ, որոնք գտնուում են Մեծ կամ Խաղաղ օվկիանոսի ափերում։

Պանամայի ջրանցքը Սուէզի ջրանցքից երկու անգամ մեծ պէտք է լինի։ Եյդ ջրանցքի շինութիւնը սկսել են սրանից 25 տարի առաջ որ մի քանի տարուց յետոյ հաւանօրէն պատրաստ կլինի և դանաղան մայր ցամաքների միմեանց հետ ունեցած առետրական յարաբերութեան ժամանակի տեղութիւնը շատ կարճացնի։

Վ Ե Ս — Ի Ն Դ Ի Ա

Հետա-ինդիա կամ Արևմտեան Հնդկաստան ասելով մենք հասկանում ենք կղզիների այն ընդարձակ արշիպելագը, որ գտնուում է Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի մէջ։ Արևմտեան Հնդկաստանի կղզիները ընդհանրապէս փոքր են և չըշապատւած են խոր ծովերով։

Հետա Ինդիայի կամ Արևմտեան Հնդկաստանի մէջ մտնում են հետեւալ կղզիները։ Մեծ-Անթիլեան (Պուրա, Եամայկա, Հայիթի և Պորտո-Ռիկօ), Փոքր—Անթիլեան և Բահամեան

Խմբերը։ Եյդ կղզիների մեծ մասը, մահաւանդ Մեծ և Փոքր Անթիլեան խմբերը կազմում են Ամերիկա մայր ցամաքի մասերը, որովհետև մի ժամանակ այդ կղզիները միացած են եղել նրա հետ, իսկ ընդհակառակը Բահամեան կղզիները կօրալական ծագում ունին։ Մեծ Անթիլեան խմբի կղզիները թէկ լեռնոտ են, բայց չունին հրաբուզներ, որոնք յատուկ են միայն Փոքր Անթիլեան խմբին։

Արևմտեան Հնդկաստանը ընդհանրապէս տաք և խոնաւ կլիմա և ճոխ բուսականութիւն ունի։ Իր բուսականութեամբ Վեստ-Ինդիան աշխարհիս ամենաարուստ երկրներէց մէկն է։ Նրա բոյսերից նշանաւոր են, շաքարեղիզն, սուրճ, կակաօ, բամբակ, ծխախոտ և այլն։ Արևմտեան Հնդկաստանի կենդանական աշխարհը, ընդհակառակը, շատ ազդատ է։ Նշանաւոր են միայն նրա թռչունները և ձկները։

Կղզիների ամբողջ ազգաբնակութեան թիւը համնում է մետ 5 միլիոնի, որը բազկացած է նեղուերից և մուլատներից։ Դրանք պատկանում են կաթոլիկ դաւանութեան։

Արևմտեան Հնդկաստանի բնիկ հնդիկների սերունդը արդէն մեռել է։ Կղզիների ազգաբնակութեան մի զգակի մասը կազմում են եւրոպացիները։ Բնակիչները պարապում են հոգագործութեամբ և առետրով։

Արևմտեան Հնդկաստանի կամ Վեստ-Ինդիայի կղզիները պատկանում են հետեւալ տէրութիւններին։

Անգլիացիներին պատկանում են Բահամեան կղզիները, որոնցից Սան-Սալվադօրը ամենից առաջ գտաւ Քրիստաֆօր Կոլումբոսը։ Բացի դրանից նրանց է պատկանում նաև Եամայկան և Փոքր-Անթիլեան կղզիների մի մասը։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին պատկանում են Կուրա և Պորտո-Ռիկօ կղզիները։ Կուրան Արևմտեան Հնդկաստանի ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող կղզին է, որի գլխաւոր քաղաք Հաւաննան նշանաւոր է իր աշխարհագոշակ ծխախոտով։

Գրանոխյի հասարակապետութեան պատկանում են Գվաղելուաս և Մարտինիկա կղզիները։ 1902 թ., սաստիկ միժեց Մարտինիկա կղզու Մոն-Պելէ հրաբուղիսը, որ ահա-պին վնասներ պատճառեց նաև նրա հարեան կղզիների բնակիչներին։ Այդ հրաբուղիսի վիժումը բոլորովին կործանեց Մարտինիկա կղզու գլխաւոր քաղաք Սան-Պիերը։

Հոլլանգացիներին պատկանում են Կուրասաո և Սուրբ Մարտինի կղզիները։

Դանիացիներին պատկանում են Սուրբ Թովմասի և Սուրբ Խաչի կղզիները։

Հայիթի կղզու վրայ գտնուում են նեղրերի և մուլատների հիմնած երկու անկախ հասարակապետութիւնները։ — Հայիթի արևմտեան և Սան Դոմինգո արևելեան կողմում։

ՀԱՐԱՀԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՑԹԻ ԿԸՀՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՐԱՀԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՑԹԻ ԿԸՀՄՈՒԹԻՒՆԸ

Իր ձեռվ և ափային գծագրութեամբ Հարաւային Ամերիկան նման է Աֆրիկային։ Նրա հիւսիսային մասը հարաւայինից աւելի լայն է։ Հարաւային Ամերիկան շրջապատող ովկիանոսներով շատ քիշ է կտրատած և դրա համար էլ աղբատ է ծոցերով, թերակղզիներով և ցամաքային կղզիներով։ Միաևն նրա ամենահարաւային փոքր մասը, որ կոչւում է Հրու Երկիր, մայր ցամաքից բաժանւած է Մագելլանի ներուցվ։

Հարաւային Ամերիկայի տարածութեան մեծ մասը կազմում են ցածր հարթութիւնները։ Նա քիչ բարձրաւանգակներունի։ Ամենաբարձր մասը արևմտեան ամբողջ ափն է, որի վրայով չորն հրուանգանից մինչև Պանամայի պարանոցը տարածած է Անդեան լեռնաշղթան։ Անգեան կոչւում է Կորդիլերեան լեռնաշղթալի այն մասը, որ ամբողջապէս տարածում է Հարաւային Ամերիկայում։ Անգեան լեռնաշղթան բաղացած է երեք՝ միմեանդ զուգահեռական լեռնաշղթաներից, որոնք հասնում են $4\frac{1}{2}$ վերսոտ միջին բարձրութեան և մեծ մասամբ ծածկւած են մշտական ձիւնով։ Այդ լեռնաշղթան ունի թէ հանգած և թէ գործող հրաբուղիներ։ Հանգած հրաբուղիներից նշանաւոր է Ակոն-կազուա (7 վերսոտ

բարձրութեամբ և Ամերիկայի ամենաբարձր գագաթը), իսկ գործողներից՝ Կոտովսկին, որ ամբողջ աշխարհիս գործող հրաբուղներից ամենաբարձրն է:

Հարաւային Ամերիկայի արեելեան մասը բաղկացած է մի քանի ոչ բարձր լեռնոտ երկրներից, որոնցից նշանաւոր են Քվիանան հասարակածից գէպի հիւսիս և Բրազիլիան հասարակածից գէպի հարաւ։ Հարաւային Ամերիկայի մնացած մեծ մասը ցածր հարթութիւններ են ներկայացնում, որոնցից նշանաւոր են, Օրինօկո, Ամազոն և Լա-Պլատա գետերի հարթութիւնները։

ՀԱՐԱՒՅՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՌՈԳՈՒՄԸ

Ոռոգման տեսակետից Հարաւային Ամերիկան աշխարհիս ամենահարուստ երկիրն է։ Հարաւային Ամերիկան խոշոր և ջրառատ գետերի հայրենիքն է։ Նրա գետերի մեծ մասը իրանց սկիզբն են առնում Անդեան լեռնաշղթայից և թափում են են Ատլանտեան ովկիանոսը։ Հարաւային Ամերիկայի ամենափոքր գետերը գտնում են արեմտեան մասում և աննաւարկելի են, որովհետեւ որնթաց և սահանքաւոր են։ Հարաւային Ամերիկայի գետերից նշանաւոր են. Ամազոն, որ աշխարհիս ամենամեծ գետն է իր աւազանով և ջրառատութեամբ։ Այդ գետը, որ ունի բազմաթիւ վտակներ, ովկիանոսի մէջ աւելի շատ չուր է թափում, քան Եւրոպայի բոլոր գետերը միասին վերցրած։ Իր երկարութեամբ (5500 վերս) Ամազոնը աշխարհիս երրորդ գետն (Միտուալի, Նեղոս) է, որի վտակներից նշանաւոր են Ռիօ-Նեղոս և Մադեյրա։ Երկրորդ երկար գետն է Պարանա, որ սկիզբն է առնում Բրազիլիայի լեռներից և որի գետաբերանը կոչում է Հարավաւա, Երրորդ գետն է Օրինօկո, որ իր սկիզբն է առ-

նում Գվիանայի լեռներից և ովկիանոսը թափւելու ժամանակ կազմում է մեծ դելտա։ Հարաւային Ամերիկայի գետերի մեծ մասը նաւարկելի են, որովհետեւ հարթութիւնների վրայով են հոսում։

Հարաւային Ամերիկան լճերով շատ ազքատ է։ Եղած լճերը գտնուում են նրա լեռներում և մայր ջամարի հարաւային մասում, որը, ինչպէս, և Կանադան մի ժամանակ ծածկւած էր մեծ սառուցներով։ Հարաւային Ամերիկայի ամենամեծ լիճն է Տիտիկակա, որ գտնում է Բոլիվիայի սարհարթի վրայ։

ՀԱՐԱՒՅՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԼԻՄԱՆ

Հարաւային Ամերիկան, ինչպէս և Աֆրիկան, գտնուում է հասարակածի երկու կողմերում և դրա համար էլ ունի տաք կլիմա։ Սակայն Հարաւային Ամերիկայում կլիմայի տաքութիւնը այնպէս չէ, ինչպէս Սֆրիկայում և Աւստրալիայում։ Ծինու այնպէս չէ, ինչպէս լինում է Սահարայում և Ծինուի սաստիկ տօթ, ինչպէս լինում է Սահարայում և Սուդանում, գոյութիւն չտնի հարաւային Ամերիկայում։ Վերջինիս տաք կլիման բաւական մեղմանում է շրջապատող ովքինիս տաք կլիման բաւական մեղմանում է շրջապատող ովքինիս գոյութիւնը հողմերի չնորհիւ և ծովային կլիմա է կիանուներից փշող հողմերի չնորհիւ և ծովային կլիմա է կառնում։ Հարաւային Ամերիկայում տաքուայ չորս եղանակները մեր եղանակներին հակառակ են լինում։

Որովհետեւ Հարաւային Ամերիկայի մեծ մասը գտնուում է տաք կամ այրեցեալ գոտում, դրա համար այնաև անձրեների գալը կախւած է արեգակի բարձրութիւնից։ Անենաշատ բարձր գալիս է Ամազոնի հարթութեան վրայ, որը բաւանձրի գալիս է Հարավային Ամերիկայի այդ մասի կլիման։

ՀԱՐՍԻԱՅԻՆ ԸՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բոյսերի իսկական թագաւորութիւնը ներկայացնում է Հարաւային Ամերիկայի այն մասը, որ բռնում է Ամազոն գետի հովիտը: Ամազոնի հարթութեան վրայ աչքի են ընկնում նրա անտառները: Որովհետեւ Հարաւային Ամերիկայի մեծ մասը գտնւում է տաք կամ այրեցեալ գօտիում և շատ լաւ է ոռոգւած, դրա համար էլ նրա անտառները տաք գօտու անտառներ են: Միայն Հարաւային Ամերիկայի հարաւային մասի անտառները ունին մշտական կանանչ ծառեր:

Հարաւային Ամերիկայի տաք գօտու մէջ գտնւող մասի անտառները աշխարհիս ամենամեծ անտառներն են: Դրանց մեծութեամբ, բուսականութեան հարստութեամբ և փառահեղութեամբ այդ անտառները գերազանցում են Կենդրոնական Աֆրիկայի և նոյն իսկ Հարաւային Ասիայի անտառներից: Այդ անտառների ծառերից նշանաւոր են ամերիկական ընկոյզի ծառը, հարաւային ամերիկական արմաւենին, որի ընկոյզները փոխարինում են փղոսկրին և կառւչուկի ծառը:

Հարաւային Ամերիկայի այն մասերում, որտեղ քիչ անձրևներ են գալիս, օր. Գվիանայի ներքին մասերում և Բրազիլիայի լեռների ստորոտներում, մեծ մասամբ սավաններ են: Օրինակ գետի հարթութեան սավանները կոչում են լիանոսներ: Լա-Փլատայի հարթութիւնը ծածկւած է փամփասներով: Դրանք սովորաբար գուրկ են ծառերից և ծածկւած են կարճ խոտերով: Անդեան լեռնաշղթայի հարաւային մասը ծածկւած է մշտական կանանչ և տերևաշատ ծառերով:

Անդեան լեռնաշղթայի հարաւային մասը ծածկւած է կոնաբերների և փեկոնի անտառներով:

Հարաւային Ամերիկան հարուստ է նաև օգտակար բոյսերով: Նրանցից նշանաւոր են քինալի ծառ, կակաօ, կոկի

ծառ (որից պատրաստում են կօկային դեղը) թէլի ծառ, գետնախնձոր, կոկոսի արմաւ, շաքարեղիզն, սուրճի ծառ և այլն:

ՀԱՐՍԻԱՅԻՆ ԸՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԸ

Հարաւային Ամերիկան յայտնի է իւր բազմազան կենդանիներով: Այնտեղ առանձնապէս աշքի են ընկնում այն կենդանիները, որոնց կեանքը կապւած է չրի և անտառի գանիները, որոնց կեանքը կապւած է չրի և անտառի հետ: Կենդանիների բազմազանութեամբ և հարստութեամբ հետ:

Որովհետեւ Հարաւային Ամերիկայի մեծ մասը ծածկւած է անտառներով, դրա համար էլ այնտեղ աշքի ընկնող բազմազանութիւն են ներկայացնում մեծ մասամբ անտառային կենդանիները: Այդ կենդանիների մեծ մասը կարողանում է մագլցել ծառերի վրայ և իր ամբողջ կեանքը անցկացնել գրանց վրայ: այդպէս են օրինակ ամերիկական կապիկները և ուրիշ կենդանիներ: Հարաւային Ամերիկան նշանաւոր է նաև իւր թռչուններով, որոնց մէջ աչքի են ընկնում մանաւանդ թռութակները: Զայլամի ամենախոշոր տեսակի հայրենիքն էլ Հարաւային Ամերիկան է:

Հարաւային Ամերիկայի բարձրաւանդակներն են սարահարթերը աղքատ են կենդանիներով: Այդ մասերի կենդանիների մէջ աչքի են ընկնում անսապատաւոր ուղտերը կամ լամաները, իսկ գիշատիչ թռչուններից՝ պասկուճները:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հարաւային Ամերիկան իր ազգաբնակութեան թւով և խտութեամբ միւս մայր ցամաքների վերաբերմամբ նախավերջին տեղն է բնուում: Նրա ամբողջ տարածութիւնն է 17,-850,000 քառ. կիլոմետր, որի վրա ապրում են մօտ 40 միլիոն բնակիչ: Նօսր և աւելի քիչ ազգաբնակութիւն ունի Հարաւային Ամերիկայի վերաբերմամբ միայն Աւստրալիան: Հարաւային Ամերիկայի միայն ափային երկները ունին խիտ և մեծ ազգաբնակութիւն, իսկ ներքին մասերը բոլորովին հակապատկեր են ներկալացնում:

Նրա ժամանակակից ազգաբնակութիւնը պատկանում է երեք ցեղերի, գեղին, սպիտակ և սև: Դեղին ցեղին պատկանում են Հարաւային Ամերիկայի նախնական բնակիչները՝ հնդիկները, որոնց մեծ մասը թափառական կեանք է վարում և ապրում է գլխաւորապէս անտառներում, իսկ միւս մասը նստակեաց կեանքի է սովոր, պարապում է հողագործութեամբ և մի քանի տէրութիւններ էր կազմել նոյն իսկ այն ժամանակ, երբ եւրոպացիները գեռ ոտք չէին գրել նրանց երկիրը: Օր. Պերուի հնդիկները, որոնք կոչւում էին ինկաներ, Ամերիկայի գիւտից մի քանի գար առաջ ունեին իրանց սեահական տէրութիւնը և հասել էին քաղաքիթութեան բարձր աստիճանին: Ներկայումն Հարաւային Ամերիկայի բոլոր հնդիկների թիւը հասնում է $5\frac{1}{2}$ միլիոնի որոնցից 2 միլիոնը նստակեաց կեանք են վարում և հողագործութեամբ պարապում: Նրանք բաժանեւում են մի քանի ցեղերի, որոնք խօսում են բաւական տարրեր բառառներով: Երբ եւրոպացիները մտան Հարաւային Ամերիկա, հնդիկների տէրութիւնները կորցրին իրանց անկախութիւնը և նրանց տեղ հիմնեւցին եւրոպական գաղութներ:

Սպիտակ ցեղին պատկանում են Հարաւային Ամերիկայում ապլոզ եւրոպացիները, որոնք սկսել են ախտեղ գաղթել 16-րդ դարուց ի վեր: Ամենից առաջ Հարաւային Ամերիկա գաղթեցին իսպանացիները և փորթուգալացիները, որոնք բռնեցին նրա տարածութեան մի զգալի մասը: Բայց որոնք բռնեցին ախտեղ գաղթել և բաւականաշափ իտավերջին սկսեցին ախտեղ գաղթել և բաւականաշափ իտավերջին բարձանացիներ, հրէաներ և այլն: Սպիտակ ցեղին լացիներ, գերմանացիներ, հրէաներ և այլն: Սպիտակ ցեղին պատկանող բնակիչների թիւը Հարաւային Ամերիկայում հասնում է մօտ 11 միլիոնի:

Սկ ցեղին պատկանում են նեղերը, որոնք Հարաւային Ամերիկա են գաղթել եւրոպացիների շնորհիւ: Նեղերը, որոնց թիւը հասնում է 4 միլիոնի, գլխաւորապէս պարապում են մշակութեամբ:

Սպիտակները, հնդիկները և նեղերը միասին կազմում են Հարաւային Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան կէսը: Միւս կէսը բարկացած է մետխներից և մուլատներից:

Իսպանացիների և փորթուգալացիների հիմնած գաղթները 19-րդ դարում իրանց համար կազմեցին մի քանի անկախ տէրութիւններ, որոնք ընդհանուր գծերով շատ նման են միմեանց: Գրանց ընակիչները ըրիստոնեայ են և պատեսանում են կաթոլիկ գաւանութեան, բացառութիւն են կաղանում հնդիկները, որոնք հեթանոսներ են:

Հարաւային Ամերիկայի ազգաբնակութեան մեծ մասը պարապում է հողագործութեամբ և անտառապահութեամբ: Ախտեղ արդիւնագործութիւնը շատ քիչ է զարգացած և գործարանաշան ապրանքների մեծ մասը ներմուծւում է Եւրոպայի զանազան երկներից և չիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներից:

Հարաւային Ամերիկայում գաղութներ ունին անգլիացիները, հոլլանդացիները և ֆրանսիացիները:

Հարաւային Ամերիկայում կան 10 միմեանցից անկախ

հասարակապետութիւններ, որոնք հետեւալներն են. Վենեցուելլա, Կոլումբիա, Հասարակած կամ էկուատոր, Պերու, Բոլիվիա, Չիլի, Արգենտինա, Պարագվայ, Ուրուգվայ եւ Բրազիլիա:

Վ Ե Ն Ե Ց Ո Ւ Ե Լ Լ Ա

Վենեցուելլայի հասարակապետութիւնը գտնուում է չառաւային Ամերիկայի հիւսիս-արևմտեան կողմում և բռնում է Օրինօկօ գետի հովիտը: Եյդ երկիրը իր բնութեամբ, մակերեսոյթի կազմութեամբ և կլիմայով բազմազան է: Վենեցուելլայի մեծ մասը լեռնոտ է և բարձր, իսկ փոքր մասը հարթութիւն: Նրա լեռները ծածկած են անտառներով, որոնցից երկրի բնակիչները մեծամեծ օգուտներ են ստանում: Վենեցուելլան ունի բաւական ճոխ բուսականութիւն և խոշոր կենդանիներ: Բոյսերից նշանաւոր են սուրճ, կակաօ և ծխախոտ, որոնք կազմում են Վենեցուելլայի դլխաւոր հարստութիւնը:

Իր տարածութեամբ Վենեցուելլան Փրանսիայից երկուանգամ մեծ է, իսկ բնակիչների թիւը հասնում է $2^{1/2}$ միլիոնի: Երկրի աղբարնակութիւնը բաղկացած է եւրոպացիներից, կրէօլներից, մուլատներից, մետիոներից, հնդիկներից և նեղրերից: Բնակիչների մեծ մասը ապրում է Վենեցուելլայի հիւսիս-արևմտեան կողմում, որտեղ և գտնուում է տէրութեան Կարակաս մայրաքաղաքը: Կարակասը հասարակապետութեան նախագահի աթոռանիստն է:

Նշանաւոր է նաև Լազուայրա նաւահանգիստը:

Վենեցուելլայի հասարակապետութեան հարաւ-արևելեան կողմում գտնում է Դվինա կոչւած երկիրը, որ պատկանում է եւրոպական երեք տէրութիւններին՝ Մեքինսին,

լանդիային և Փրանսիային: Այդ երկիրը իր բնութեամբ և աղբարնակութեամբ նման է Վենեցուելլայի հարևան մասին: Եւրոպացիները հազիւ են կարողանում ընտելանալ Գվիանայի խոնաւ և տաք կլիմային:

Գվիանայի արևմտեան մասը պատկանում է անգլիացիներին և նրա գլխաւոր քաղաքն է Ջօրջուառն, միջին մասը պատկանում հոլլանդացիներին և յայտնի է Պարամարիջ քաղաքով, իսկ արևելեան մասը ֆրանսիացիներին, որի գլխաւոր քաղաքն է Կայէննա:

Գվիանա երկիրը ընկած է Վենեցուելլայի և Բրազիլիայի հասարակապետութիւնների մէջ:

Բ Ր Ա Զ Ի Լ Ի Ա

Բրազիլիայի հասարակապետութիւնը իր մեծութեամբ առաջին տեղն է բռնում Ամերիկայի տէրութիւնների մէջ, Միացեալ Նահանգներից յետոյ, իսկ հարաւային Ամերիկայում՝ իր մեծութեամբ, բնակիչների թիւվ և բնութեան հարստութեամբ առաջին տէրութիւնն է, որ բռնում է մայր ցամաքի տարածութեան գրեթէ կէս մասը: Իր տարածութեամբ Բրազիլիան մի քիչ փոքր է Եւրոպայից և ունի մօտ 16 միլիոն բնակիչ: Բնութեան տեսակետից նա բաժանուում է երկու մասի: Հիւսիսային Ամազոնեան հարթութիւն և հարաւային Բրազիլիական լեռնաստան:

Բրազիլիայի նշանաւոր գետն է Ամազոնը որ աշխարհի ամենամեծ գետն է իր ջրառատութեամբ: Նա ունի միշարք ջրառատ վտակներ, որոնք կանոնաւոր կերպով ոռոգում են Բրազիլիայի տարածութեան մեծ մասը: Ամազոնը նաւարկելի գետ է, որ իր սկիզբն է առնում Անդեան լեռնաշղթա-

Արց: Նրա աջակողմեան վտակներից նշանաւոր է Մառէյրան,
իսկ ձախակողմեան վտակներից՝ Ռիօ-Նեգրօն:

Բրազիլիայի տարածութեան մեծ մասը ծածկած է խիտ
անտառներով, որոնք կոչում են սելվաներ: Դրանք աշխար-
հիս ամենամեծ անտառներն են, որոնք հարուստ են կառ-
շուկով և ներկի ծառերով: Յոյսերից նշանաւոր են. բրինձ, ե-
գիպացորեն, կակաօ, սուրճ, թէյ, շաքարեղէզն, բամբակ և
այլն: Կենդանիներից նշանաւոր են ձին և կովը: Բրազիլիայի աղ-
գարնակութիւնը բազկացած է նեղրերից, մետիսներից մուլատ-
ներից, կրէօներից և զանազան եւրոպացիներից: Դրանց մեծ
մասը՝ պարապում է հողագործութեամբ: Բրազիլիայի լեռները
հարուստ են ոսկով, ալմաստով և ուրիշ թանգարին քարերով, ո-
րոնք Բրազիլիայի առևտի զարգացմանը շատ են նպաստում:
Այնտեղ զարգացած է մանաւանդ սուրճի առևտութը: Բրազիլիան
այնքան սուրճ է տալիս, որքոն միւս բոլոր երկրները միա-
սին: Այնտեղից ամեն տարի արտահանում են 200 միլիօն
բուբլու սուրճ: Բրազիլիայի հասարակապետութեան մայրա-
քաղաքն է Ռիօ-դը-Ժանէյրօ, որ ունի 525,000 բնակիչ: Այս
քաղաքը սրճի առևտի կենդրօնն է: Բրազիլիայի միւս քա-
ղաքներից նշանաւոր են Բագիա կամ Սան-Սալվադօր, որ
նշանաւոր է շաքարի առևտութ, գեղրնամբուկօ և Պարա, ո-
րոնք յայտնի են բամբակի և փայտի առևտութ:

ԿՈԼՈՒՄԲԻԱ, ՊԵՐՈՒ, ԷԿՈՒԱՏՈՐ, ԲՈԼԻՎԻԱ եւ 2ԻԼԻ

Կոլումբիայի, Էկուատորի, Պերուի, Բոլիվիայի և 2ԻԼԻ
հասարակապետութիւնները գտնուում են Անգեան լեռնաշղթա-
յի լեռնային շրջանում: Լեռնաշղթայի արևելեան կողմը ծածկ-
ւած է անտառներով և լաւ է ոռուած: Այնտեղից են սկիզ-
բըն առնում Օրինօկօ, Ամազոն և Պարագվայ գետերի բազմա-

թիւ վտակները: Վերոյիշեալ 5 հասարակապետութիւնների
կիման բազմազան է: Դրանց միայն այն մասն է լաւ ոռոգ-
ւում, որ գտնուում է Մեծ կամ Խաղաղ ովկիանոսի ափերում
և հարուստ է խիտ անտառներով: Կլիմայի բազմազանութեան
նորհիւ բոյսերն ու կենդանիներն էլ բազմազան են. բոյսե-
րից նշանաւոր են շաքարեղէզն, բամբակ, բրինձ, գետնախըն-
ձոր, գարի, քինայի ծառ, կառւչուկ և այլն: Կենդանիներից
աշբի են ընկնում այն բոլոր տեսակները, որոնց կարելի է
պատահել Գլիբանայում և Բրազիլիայում: Անգեան լեռնաշղթան
հարուստ է սոկու, պղնձի, լուսնոսկու, արծաթի և ուրիշ
թանգարին բարերի հանքերով:

Անգեան լեռնաշղթայի հինգ հասարակապետութիւնների
ազգաբնակութիւնը բազկացած է հոգիկներից և մետխոններից:
Ջատ քիչ է կրէօների և եւրոպացիների թիւը: Այնտեղի հըն-
դիկները բաժանում են մի քանի ցեղերի, որոնցից մի քա-
նիուր միջն այսօր կիսավայրենի գրութեան մէջ են գտնուում:
Զգալի զարգացման հասկել էին միջն եւրոպացիների մուտքը
Պերուի հոդիկները, որոնք կոչում էին ինկաներ: Ինկաներն
էլ այնպիսի տէրութիւն ունեին ինչպէս Մեկուկայի ացտեկ-
ները: Նրանք մի ժամանակ այնքան զօրեզացել էին, որ ի-
րանց հարկան ցեղերին նուաճել էին: Նրանք այնքան քաղա-
քակրթել էին, որ շնուր էին կամուրջներ, դամբարաններ,
գեղեցիկ բանդակներով տաճարներ և այլն: 16-րդ դարում
իսպանացիները նուաճեցին ինկաներին և իրանց քարոզիշ-
ների շնորհիւ նրանց մէջ տարածեցին քրիստոնէութիւնը:

Անգեան լեռնաշղթայի հինգ հասարակապետութիւննե-
րում հոգերի մեծ մասը պատկանում է կրէօներին, որոնք
կազմում են երկրի ազնուականները: Կրէօների հոգերը մեծ
կազմում են երկրի ազնուականները, մետեսները և շինացի բան-
մասմբ մշակում են հոդիկները, մետեսները և շինացի բնակիչները պա-
տրիները: Հինգ հասարակապետութիւնների բնակիչները պա-
տրապում են հողագործութեամբ: Արտաքին առևտուրն էլ շատ

զարգացած է այնտեղ: Առևտրի գլխաւոր նիւթերն են. կակաօ, վանիլ, սուրճ, բամբակ, ծխախոտ, լեղակ, քինա, բուրդ, կաշի, զանազան մետաղներ և այլն:

Հինգ հասարակապետութիւնների նշանաւոր քաղաքները հետևածներն են.

ա) Կոլումբիա, գլխաւոր քաղաքն է Սանտա-Ֆէ-դե-Բօգոտա:

բ) Էկուատօր, գլխաւոր քաղաքն է Կվիտօ, որ գտնւում է հասարակածի վրայ:

գ) Պերու, գլխաւոր քաղաքն է Լիմա, որ գտնւում է սարահարթի վրայ: Երկրորդ նշանաւոր քաղաքն է Կուակօ, որը Ինկաների երքեմնի մայրաքաղաքն էր:

դ) Բոլիվիա, գլխաւոր քաղաքն է Սուկրէ կամ Չեկիզակա: Այս քաղաքից աւելի բազմամարդ է Հա-Փազը, որ գտնւում է Տիտիկակա լճի մօտ: Երրորդ նշանաւոր քաղաքն է Պոտոօգի, որի շրջակալրում գտնւում են արծաթի հարուստ հանքեր:

ե) Զիլի, գլխաւոր քաղաքն է Սանտիագօ, որ առևտրական նշանաւոր կենդրոն է: Հասարակապետութեան երկրորդ քաղաքն է Վալպարայո նշանաւոր նաւահանգիստը, որ գտնւում է Հարաւային Ամերիկայի արևմտեան ափում:

ՊԱՐՄԳՎԱՅ, ՈՒՐՈՒԳՎԱՅ ԵՒ ԸՐԳԵՆՑԻՆԱ

Այս երեք հասարակապետութիւնները գտնւում են Լա-Պատա գետի հովտում: Պարագվայի հասարակապետութիւնը գտնւում է Պարագվայ և Պարանա գետերի մէջ, Ուրուգվայը, Ուրուգվայ գետի և Ատլանտիկան ովկիանոսի մէջ, իսկ Արգենտինան նրանցից գէպի արևմուտք մինչև Անդեան լեռնաշղթան: Այդ երեք հասարակապետութիւնների տարածութեանը

մեծ մասը անապատային է և նոր ազգաբնակութիւն ունի: Անակիչների գլխաւոր դրազմունքը անամնապահութիւնն է: Ազգաբնակութիւնը բաղկացած է խապանացիների սերնդից և հնդիկներից: Վերջին ժամանակներու այնտեղ են գաղթել բաւականաշափ իտալացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ և հրէաներ, որոնց շնորհիւ երկրագործութիւնը զգալի կերպով զարգացել է:

ա) Պարագվայի հասարակապետութեան գլխաւոր քաղաքն է Ասունախօն, որտեղից դէսի օտար երկրներ ահագին բանակութեամբ թէյ են արտահանում:

բ) Ուրուգվայի հասարակապետութեան գլխաւոր քաղաքն է Մոնտեվիդէօ:

գ) Արգենտինայի հասարակապետութեան մայրաքաղաքն է Բուէնոս-Այրէս, որ առևտրական նշանաւոր կենդրօն է:

Արգենտինայի ամենահարաւային մասը կոչւում է Պատագօնիա, որի տարածութեան մեծ մասը անապատային է: Այդ երկի բնակիչները կազմում են կիսավայրենի հնդիկները՝ պատագօնացիները, որոնք ապրում են որսորդութեամբ, ձըկութագութեամբ և անասնապահութեամբ:

Արգենտինային է պատկանում նաև չորյ Երկրի արևելեան մասը, որ իր բնութեամբ նմանում է Պատագօնիային: Հրոյ-Երկրի երոպացի գաղթականները պարագում են անասնապահութեամբ և առևտրով:

Հրոյ-Երկրի արևելեան կողմում դանւող Փալւլանդեան կղզիները պատկանում են անգղիացիներին:



թու այս տիտղոսը կա՞ և պարունակութեան մաս
ու ամեն առանձին պահը զբանի վեճը դաշտ
ապօպին համարութեան և նորութեան վեցին պատճեանը
աս ու լին առաջ առանձին աշխարհը պարզեցին
առանձինութեան գույքանեած ու ներայանի գույքանեած
իրակ կուր ու կանոնը ու կանոնը սկզբանի
առանձին պահը առաջ առանձին պահը առաջ առանձին
ու առանձին պահը առաջ առանձին պահը առաջ առանձին
առանձին պահը առաջ առանձին պահը առաջ առանձին

առանձին պահը առաջ առանձին





20532